

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ԳԼԽԱՎՈՐ  
ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ, ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ  
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ,  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ, ՀԱՍԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ  
ՃԱՆԱԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Գլխավոր տեղեկություն**

Համար	N 1920-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Պաշտոնական Ինկորպորացիա (27.12.2025-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2012.01.27/5(879).1 Հոդ.70.1
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	29.12.2011
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	17.01.2012
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	28.01.2012

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ, ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ԼԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԶԱՆԱԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**  
**(վերնագիրը լրաց. 18.08.16 N 855-Ն, խմբ. 28.04.22 N 597-Ն, 25.12.25 N 1972-Ն)**

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 8-րդ կետերը, 14.3-րդ հոդվածի 33-րդ մասը և 17-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

**(Նախաբանը խմբ. 28.04.22 N 597-Ն, 25.12.25 N 1972-Ն)**

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

**(1-ին կետը լրաց. 18.08.16 N 855-Ն, խմբ. 28.04.22 N 597-Ն)**

2. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» N 609-Ն որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» N 208-Ն որոշումը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 408 որոշումը:

**(2-րդ կետը լրաց. 28.04.22 N 597-Ն)**

2.1. **(կեսն ուժը կորցրել է 18.08.16 N 855-Ն)**

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**S. Սարգսյան**

2012 թ. հունվարի 17  
Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման

**Կ Ա Ր Գ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒ ՓՈՓՈԽՄԱՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում են Հայաստանի Հանրապետության համայնքների գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման ընթացակարգերին ներկայացվող հիմնական պահանջների հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև դրանց կազմին ու բովանդակությանը ներկայացող պահանջները: Հայաստանի Հանրապետության մարզպետների և համայնքների ղեկավարների իրավասություններին առնչվող հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքաշինության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք), «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով և այլ օրենքներով:

2. Համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգվում է համայնքի գլխավոր հատակագծով, քաղաքաշինական գոտևորման

Նախագծով, ինչպես նաև համակցված տարածական պլանավորման փաստաթղթով (այսուհետ՝ քաղաքաշինական ծրագրային կամ տարածական պլանավորման փաստաթղթեր): «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքով սահմանված «բազմաբնակավայր» համայնքների համար քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը մշակվում են Համակցված փաստաթղթերի մշակման սկզբունքով՝ կարգով գլխավոր հատակագծերի համար սահմանված ընթացակարգով՝ սույն Կարգի 77-րդ և 78-րդ կետերում նշված կազմով և բովանդակությամբ:

3. Համայնքի գլխավոր հատակագիծը (գոտևորման նախագծերի ներառմամբ)՝

1) մշակվում է համայնքի վարչական սահմաններում ընդգրկված բոլոր հողատարածքների ներառմամբ.

2) բնակավայրերի (գյուղական) դեպքում մշակվում է պարզեցված տեսքով (այսուհետ՝ Պարզեցված գլխավոր հատակագիծ)՝ սահմանելով տարածական զարգացման անվտանգության, շրջակա միջավայրի պահպանության, քաղաքաշինական նպատակներով հողօգտագործման կանոնակարգման ու արդյունավետ կառավարման ապահովմանն ուղղված, Օրենքով և Կարգով նախատեսված պարտադիր պահանջները.

3) մշակվում է համայնքային բյուջեի, ինչպես նաև Օրենքով չարգելված այլ ֆինանսական միջոցների հաշվին.

4) համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի և Կարգի պահանջներին համապատասխան:

5) հանդիսանալով ռազմավարական բնույթի քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթուղթ, սահմանում է՝

ա) համայնքի տարածական զարգացման հիմնական ուղղությունները,

բ) քաղաքաշինական գործունեության օբյեկտ հանդիսացող հողերի օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջներն ու ՀՀ օրենսդրության ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված սահմանափակումները,

գ) հողատարածքների կառուցապատման առաջնահերթ (մինչև 5 տարի), միջնաժամկետ (5-10 տարի) և հեռանկարային (10-15 տարի) փուլերը,

դ) համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողամասերի նպատակային նշանակությունը և (կամ) դրանց փոփոխությունները՝ Օրենքի և Կարգի պահանջների կատարման ապահովմամբ,

ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջներն ու սահմանափակումներ.

4. Համակցված փաստաթուղթը.

1) Օրենքի 14.4-րդ հոդվածի 1-ին մասում նշված համայնքների խմբերի համար (այսուհետ՝ Միկրոռեգիոնալ միավորներ) միկրոռեգիոնալ և տեղական մակարդակները համադրող քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է, որում համատեղվում են տարածքային հատակագծման նախագծի, գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի վերաբերյալ՝ Օրենքի 14.4-րդ հոդվածով և Կարգով սահմանված նորմերը.

2) մշակվում է Միկրոռեգիոնալ միավորի սահմաններում ընդգրկված բոլոր հողատարածքների ներառմամբ՝ կանոնակարգելով ինչպես տեղական, այնպես էլ՝ Միկրոռեգիոնալ միավորների համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող տարածական զարգացման խնդիրները.

3) հաստատվում է Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի որոշմամբ, Միկրոռեգիոնալ միավորի սահմաններում ընդգրկված համայնքների ավագանիների՝ համայնքների գլխավոր հատակագծերի (գոտևորման նախագծերի ներառմամբ) նախագծերը հաստատելու մասին համապատասխան որոշումների առկայության դեպքում:

5. Գլխավոր հատակագծի նախագծման առաջադրանքը, Օրենքի 14.3-րդ հոդվածի 5-րդ ու 6-րդ մասերի և Կարգի պահանջներին համապատասխան, համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ:

6. Միկրոռեգիոնալ միավորի Համակցված փաստաթղթի նախագծման առաջադրանքը հաստատվում է Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի որոշմամբ՝ Միկրոռեգիոնալ միավորի սահմաններում ընդգրկված համայնքների մասով ավագանիների որոշումների առկայության դեպքում:

7. Համայնքի գլխավոր հատակագիծը, ինչպես նաև Համակցված փաստաթուղթը (այդ թվում՝ դրա կազմում մշակվող հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները) հաստատելու մասին համապատասխան որոշումներում առանձին դրույթներով ամրագրվում են հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները (հողամասերի կատեգորիաների տրանսֆորմացիան) և Կարգի 3-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված փուլերը:

**(7-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

8. Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծերը մինչև համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե (այսուհետ՝ Լիազոր մարմին)՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի նոյեմբերի 1-ի N 978-Լ որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննություն կիրառակցող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) եզրակացությունը, իսկ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման առաջադրանքների նախագծերը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով) Ձև N 5.5 եզրակացությունն ստանալու համար: Գլխավոր հատակագծերը և գոտևորման նախագծերը Լիազոր մարմին են ներկայացվում համայնքի ղեկավարի (այսուհետ

նաև՝ Իրավասու մարմին) կողմից, իսկ Համակցված փաստաթղթերը՝ համապատասխան մարզպետի:

**(8-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

9. Լիազոր մարմինն ուսումնասիրում է փաստաթղթերը և իր կողմից քաղաքաշինական խնդիրներին առնչվող մասով առարկություններ չունենալու, իսկ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դեպքում նաև դրանց վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված («Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշում) փորձաքննական դրական եզրակացությունների (շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության պետական փորձաքննական եզրակացություն, քաղաքաշինական փորձաքննական եզրակացություն) առկայության դեպքում, Օրենքի 14.3-րդ հոդվածի 6-րդ մասի և Կարգի պահանջներին համապատասխան՝ դրանք ներկայացնում է Հանձնաժողովի կազմում ընդգրկված պետական կառավարման մարմիններին, համապատասխան մարզպետին և հասարակական կազմակերպություններին (այսուհետ՝ շահագրգիռ մարմինների)՝ կարծիքի:

**(9-րդ կետը փոփ. 30.05.24 N 800-Ն)**

10. Հաստատված գլխավոր հատակագիծ կամ Համակցված փաստաթուղթ ունեցող համայնքներում անշարժ գույքի միավոր հանդիսացող հողամասերի (այսուհետ՝ Առանձին հողամաս) նպատակային և գործառնական, իսկ Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դեպքերում հողերի գործառնական նշանակությունների փոփոխության վերաբերյալ առաջարկությունն Իրավասու մարմնի կողմից ներկայացվում է Լիազոր մարմին, ընդ որում, Համակցված փաստաթղթի դեպքում համապատասխան համայնքի ղեկավարն այն ներկայացնում է մարզպետին (բացառությամբ Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքերի), ով այն ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում իր դրական եզրակացության հետ միասին ներկայացնում է Լիազոր մարմին կամ պատճառաբանված որոշմամբ մերժում է դրական եզրակացություն տալը: Քաղաքային բնակավայրերում քաղաքաշինական գործունեության իրականացում նախատեսող դեպքերում հողամասերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունների դիմումին կից փաստաթղթերի ցանկում ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) նախագիծը: Գյուղատնտեսական նշանակության հողերից կառուցապատման նպատակով բնակավայրերի նպատակային նշանակության փոփոխության դեպքում դիմումին կից ներկայացվում է հայտ՝ հարկայնություն սահմանելու վերաբերյալ:

**(10-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

11. Լիազոր մարմինը Կարգի 10-րդ կետում նշված առաջարկություններն ուսումնասիրում է և ներկայացված առաջարկությունների փաստաթղթային կազմը լիարժեք չլինելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է առաջարկությունները ներկայացրած մարզպետին կամ Իրավասու մարմին՝ համապատասխան փաստաթղթերի բացակայության մասին, իսկ լրակազմ փաթեթի դեպքում ներկայացնում է Միջգերատեսչական հանձնաժողովի շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի: Եթե Լիազոր մարմնի կողմից տվյալ Առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության փաթեթի ուսումնասիրման արդյունքում ի հայտ են գալիս սույն կարգի 17.2-րդ կետով սահմանված խախտումներ, որոնք ենթակա չեն լրամշակման, Լիազոր մարմինը՝ առանց ուղարկելու այլ շահագրգիռ մարմիններ՝ տեղեկատվություն կամ կարծիք ստանալու, մերժում է տվյալ փոփոխության փաթեթը, պատասխան գրությամբ նշելով մերժման հիմքերը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտերի համապատասխան դրույթներին: Քաղաքաշինական գոտևորման չափորոշիչներին առնչվող փոփոխությունները համաձայնեցվում են միայն Լիազոր մարմնի հետ:

**(11-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

12. Միջգերատեսչական հանձնաժողովը Կարգի 10-րդ կետում նշված առաջարկություններն ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում Էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ կամ գրավոր փաստաթղթերի փոխանցմամբ, իսկ 2026 թվականի հուլիսի 1-ից հետո բացառապես թվային հարթակի միջոցով, իրենց կարծիքները՝ N 1 աղյուսակով սահմանված դրույթներին համապատասխան, ներկայացնում է Լիազոր մարմին:

Բացասական կարծիքները կամ կարծիք հայտնելու համար լրացուցիչ ժամկետի՝ առավելագույնը 5 օր, հայցման պահանջները պետք է լինեն հիմնավորված: Լրացուցիչ ժամկետի անհրաժեշտության մասին հայտը պետք է ներկայացվի տվյալ գործընթացի համար Կարգի 14-րդ կետի համաձայն՝ Առանձին հողամասերի մասով սահմանված ժամկետի վերջին օրվանից ոչ ուշ: Սույն կետով սահմանված 7 աշխատանքային օրվա ժամկետում Առանձին հողամասերի նպատակային և գործառնական, իսկ Կարգի 24-րդ կետի 5-րդ ենթակետում նշված դեպքերում գործառնական նշանակության փոփոխությունների դեպքում շահագրգիռ մարմինների (Միջգերատեսչական հանձնաժողովի) կողմից առարկություն չներկայացվելու դեպքում Լիազոր մարմինը պարտավոր է տվյալ մարմնի կարծիքը համարել դրական և սահմանված ժամկետում տրամադրել դրական եզրակացություն: Սահմանված ժամկետից ուշացումով տրված կարծիքները հաշվի չեն առնվում: Սահմանված ժամկետում շահագրգիռ մարմնի կողմից չպատասխանելու արդյունքում պատասխանը դրական համարվելուն հաջորդող խնդիրների ծագման համար պատասխանատվությունը կրում է պատասխանը ժամկետում չտրամադրած շահագրգիռ մարմինը:

**(12-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

13. Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, նախագծման առաջադրանքները և սույն կարգի 10-րդ կետով սահմանված հողատեսքերը ներառող Առանձին հողամասի նպատակային և

գործառնական նշանակությունների փոփոխությունները Կարգով նախատեսված համապատասխան մարմինների կողմից կարող են հաստատվել միայն համապատասխանաբար Հանձնաժողովի և Միջգերատեսչական հանձնաժողովի (Հանձնաժողովը և Միջգերատեսչական հանձնաժողովը միասին հիշատակման դեպքում այսուհետ՝ Հանձնաժողովներ) դրական (այդ թվում՝ Կարգի համաձայն՝ դրական համարված) եզրակացությունների առկայության դեպքում: Հանձնաժողովների եզրակացությունները ստորագրվում են Հանձնաժողովների նախագահի և քարտուղարի կողմից՝ համաձայն սույն կարգի N 1 հավելվածում ներկայացված Ձև N 5.5, Ձև N 5.5.1 և Ձև N 5.5.2-ի և ՀՀ վարչապետի 2024 թվականի նոյեմբերի 1-ի N 978-Լ որոշման N 2 հավելվածի Ձևի:

**(13-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

13.1. Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետում նշված դեպքերում Առանձին հողամասի գործառնական նշանակության փոփոխությունները Կարգով նախատեսված Իրավասու մարմնի կողմից կարող է հաստատվել միայն Լիազոր մարմնի, իսկ Կարգի 24-րդ կետի 5-րդ ենթակետում նշված դեպքում՝ Միջգերատեսչական հանձնաժողովի կամ շահագրգիռ մարմինների համաձայնության առկայության դեպքում:

**(13.1-ին կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

14. Հանձնաժողովների դրական եզրակացությունը տրվում է, եթե համաձայնեցման ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ Հանձնաժողովների բոլոր անդամների կարծիքները դրական են (այդ թվում՝ Կարգի համաձայն՝ դրական համարված):

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, նախագծման առաջադրանքների վերաբերյալ կարծիքները Լիազոր մարմին են ներկայացվում դրանք ստանալուց հետո՝ 15, իսկ Առանձին հողամասերի նպատակային և գործառնական, իսկ Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքերում՝ գործառնական նշանակության փոփոխությունների վերաբերյալ կարծիքները՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում: Կարծիքները ներկայացվում են Էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ կամ գրավոր փաստաթղթերի փոխանցմամբ: Սույն կետում նշված ժամկետում շահագրգիռ մարմինների՝ Հանձնաժողովի (Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դեպքում) և Միջգերատեսչական հանձնաժողովի (Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման առաջադրանքների և Առանձին հողամասերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունների դեպքում) անդամների, իսկ Կարգի 24-րդ կետի 5-րդ ենթակետում նշված դեպքում՝ Միջգերատեսչական հանձնաժողովի կամ շահագրգիռ մարմինների կողմից առարկություն չներկայացվելու դեպքում Լիազոր մարմինը պարտավոր է սույն կարգի կարծիքը համարել դրական և սահմանված ժամկետում տրամադրել դրական եզրակացություն կամ համաձայնեցում: Սահմանված ժամկետից ուշացումով տրված կարծիքները հաշվի չեն առնվում: Սահմանված ժամկետում շահագրգիռ մարմնի կողմից չպատասխանելու արդյունքում պատասխանը դրական համարվելու հաջորդող խնդիրների ծագման համար պատասխանատվությունը կրում է պատասխանը ժամկետում չտրամադրած շահագրգիռ մարմինը:

**(14-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

15. Այն դեպքում, երբ Հանձնաժողովների անդամներից ստացվել են՝ յուրաքանչյուրից իրեն առնչվող մասով, համապատասխան իրավական ակտերի համապատասխան դրույթների հղումներ պարունակող բացասական կարծիքներ (դիտողություններ և առաջարկություններ), կամ քաղաքաշինական խնդիրներին առնչվող մասով Լիազոր մարմինն ունի դիտողություններ և առաջարկություններ, ապա Լիազոր մարմինը նախագիծը 3 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է լրամշակման՝ կցելով ներկայացված դիտողությունների և առաջարկությունների ամփոփ տեղեկանքը: Լիազոր մարմինն Իրավասու մարմնի կողմից ներկայացված լրամշակված փաթեթը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է միայն Հանձնաժողովների բացասական կարծիք ներկայացրած անդամին (մարմին)՝ կարծիքի: Հանձնաժողովների անդամների/(մարմինների) կողմից կարծիքը (կարծիքները)՝ Լիազոր մարմին են ներկայացվում այն ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

**(15-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

16. Լրամշակված փաստաթղթերի վերաբերյալ կրկին բացասական կարծիք ստանալու դեպքում, Լիազոր մարմինը՝ բացասական կարծիքը Կարգի 15-րդ կետի պահանջներին համապատասխան հիմնավորված լինելու դեպքում, 3 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է Իրավասու մարմնին՝ կցելով մերժման հիմքերը: Լրամշակված փաստաթղթերի վերաբերյալ Հանձնաժողովների անդամների կողմից 5 աշխատանքային օրվա ընթացքում կարծիք չներկայացնելու դեպքում այն համարվում է դրական:

**(16-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

17. Լիազոր մարմինը կարող է Միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կարծիքը ստանալ նաև հարցման միջոցով՝ Էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ: Հանձնաժողովների անդամ շահագրգիռ մարմնի կարծիքը համարվում է ստացված, եթե այն ներկայացվել է շահագրգիռ մարմնի կողմից ստորագրված փաստաթղթում:

**(17-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

17.1. Այն դեպքերում, երբ հիմնավորված նոր առաջացած կարիքների հիման վրա անհրաժեշտություն է առաջանում քաղաքաշինական գոտևորման չափորոշիչների վերանայման, Ձև N 5.2-ով սահմանված դիմումում նշված և 56-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերի փաթեթում միաժամանակ ներկայացվում են նոր հայցվող չափորոշիչների (համաձայն սույն կարգի N 2 հավելվածի «Գործառնական գոտիներում կառուցապատման չափորոշիչները և դրանց ներկայացման օրինակելի ձևը» աղյուսակի) վերաբերյալ հիմնավորումները և համապատասխան տարածական պլանավորման փաստաթղթերում դրանց փոփոխության վերաբերյալ առաջարկը:

**(17.1-ին կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

17.2. Առանձին հողամասի փոփոխության վերաբերյալ դիմումը կարող է պատճառաբանված որոշմամբ մերժվել, եթե՝

1) հողամասի նախատեսվող նպատակային և (կամ) գործառնական նշանակության, իսկ Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դեպքերում միայն գործառնական նշանակությունների փոփոխության վերաբերյալ առկա են քաղաքաշինական, բնապահպանական նորմերի խախտումներ կամ քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներ (այսուհետ՝ հատակագծային սահմանափակումներ),

2) գոտևորման չափորոշիչների, նպատակային նշանակության փոփոխությունների հերթականության փոփոխության վերաբերյալ առկա են քաղաքաշինական նորմերի խախտումներ կամ հատակագծային սահմանափակումներ,

3) տարածքում առկա են պետական գրանցում չստացած կամ չհաշվառված ինքնակամ շինություններ,

4) գույքի նկատմամբ առկա են սահմանափակումներ:

**(17.2-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

17.3. Կարգի 17.2-րդ կետով նախատեսված մերժումը պետք է պարունակի հղումներ համապատասխան իրավական ակտերի համապատասխան դրույթներին: Մերժումը պետք է ներկայացվի թվային urban-landuse.e-gov.am համակարգի միջոցով՝ մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:

**(17.3-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

17.4. Քաղաքացու կամ իրավաբանական անձի դիմումի հիման վրա հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունների մասին դրական պատասխանը տրվում է համայնքի կողմից առաջիկա ավագանու նիստով հաստատվելուց հետո առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում:

**(17.4-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

17.5. Եթե ներկայացված փաթեթի նկատմամբ առկա չեն սույն կարգի 17.2-րդ կետով սահմանված մերժման հիմքերը, սակայն շահագրգիռ մարմնի (Միջգերատեսչական հանձնաժողովի անդամի) կողմից այսուհանդերձ առկա են դրական եզրակացության տրամադրման համար ոչ էական բնույթի լրամշակման ենթակա առաջարկություններ, ապա փաթեթի վերաբերյալ տվյալ առաջարկությունները ներկայացրած շահագրգիռ մարմնի (Միջգերատեսչական հանձնաժողովի անդամի) դիրքորոշումը համարվում է դրական՝ համապատասխան սյունակում ներկայացնելով նաև փաթեթում ոչ էական լրամշակման պայմանը:

**(17.5-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

17.6. Առանձին հողամասի նպատակային և գործառնական, իսկ Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքերում միայն գործառնական նշանակությունների փոփոխությունը չի երաշխավորում դրա կառուցապատման նպատակով ճարտարապետահատակագծային առաջադրանքի (նախագծման թույլտվության) ստացումը, եթե հնարավոր չէ պահպանել գործող նորմատիվ իրավական կամ քաղաքաշինական փաստաթղթերի պահանջները: Բացառություն են կազմում հավելվածի 10-րդ կետով սահմանված դեպքերը, եթե փաթեթին կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) նախագծում չեն կատարվում չափորոշիչների փոփոխություններ:

**(17.6-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

18. Հանձնաժողովի նիստում (կամ հարցման արդյունքում) հարցի վերաբերյալ միասնական կարծիք չձևավորելու դեպքում, Լիազոր մարմինն ամփոփում է կարծիքները և ներկայացնում Վարչապետի աշխատակազմ՝ մշտապես գործող տարածքային զարգացման և շրջակա միջավայրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) առաջիկա նիստում զեկուցելու համար: Կոմիտեի որոշումը հիմք է հարցի վերաբերյալ Հանձնաժողովի վերջնական որոշումն ընդունելու համար:

19. Օրենքի պահանջներին համապատասխան գլխավոր հատակագծի, Համակցված փաստաթղթի կազմում կամ որպես ինքնուրույն փաստաթուղթ մշակվող գոտևորման նախագծերը (նույնն է, ինչ գոտիավորման նախագիծը) մշակվում են որոշմամբ սահմանված Կարգով: Ընդ որում՝

1) գլխավոր հատակագծի կազմում մշակվող գոտևորման նախագիծը հաստատվում ու փոփոխվում է Օրենքի և Կարգով գլխավոր հատակագծի հաստատման և (կամ) փոփոխման համար նախատեսված պահանջների ապահովմամբ.

2) Համակցված փաստաթղթի կազմում մշակվող գոտևորման նախագիծը հաստատվում ու փոփոխվում է Համակցված փաստաթղթի հաստատման և (կամ) փոփոխման համար Օրենքով և Կարգով սահմանված պահանջների ապահովմամբ.

3) որպես ինքնուրույն փաստաթուղթ մշակվող գոտևորման նախագիծը, եթե այն հանգեցնում է գլխավոր հատակագծի և (կամ) Համակցված փաստաթղթի փոփոխություններին, հաստատվում ու փոփոխվում է Կարգի պահանջների ապահովմամբ, համապատասխանաբար գլխավոր հատակագծում և (կամ) Համակցված փաստաթղթում համապատասխան փոփոխությունների հաստատումից հետո:

20. Օրենսդրությամբ նախատեսված կարգով հաստատված գլխավոր հատակագծով սահմանված պայմանները պարտադիր են քաղաքաշինական գործունեության բոլոր սուբյեկտների համար, տարածվում են անշարժ գույք հանդիսացող բոլոր օբյեկտների վրա՝ անկախ սեփականության ձևից, սեփականատերերի կամ օգտագործողների փոփոխման

դեպքում պահպանում են իրենց ուժը և հիմք են քաղաքաշինական գործունեության իրականացման, վերահսկողության ու վիճելի հարցերի լուծման համար:

21. Գլխավոր հատակագծի իրագործումը, համաձայն դրանով սահմանված միջոցառումների ծրագրի, ապահովում է համայնքի ղեկավարը՝ Կարգի պահանջներին համաձայն:

22. Համայնքի ղեկավարն իրականացնում է գլխավոր հատակագծին համապատասխան իրականացված միջոցառումները և գլխավոր հատակագծով չնախատեսված Առանձին հողամասերի կամ քաղաքաշինական գոտևորման (կառուցապատման) չափորոշիչների մասով կատարված փոփոխությունները՝ տեղադրված համայնքի ընթացիկ քարտեզի վրա՝ քարտեզին կցելով սույն Կարգի Ձև N 6-ի լրացված աղյուսակները:

**(22-րդ կետը փոփ. 30.05.24 N 800-Ն, լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

23. Կարգի 21-րդ և 22-րդ կետերով գլխավոր հատակագծի համար սահմանված դրույթները տարածվում են նաև Համակցված փաստաթղթերի վրա, ընդ որում 22-րդ կետում նշված ընթացիկ քարտեզը և աղյուսակները Միկրոռեգիոնալ միավորի մեջ ընդգրկված համայնքների ղեկավարները մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 20-ը ներկայացնում են համապատասխան մարզպետին, որը Կարգի Ձև N 3-ի և Ձև N 6-ի համապատասխան ամփոփում է ստացված նյութերը և մինչև դեկտեմբերի 25-ը ներկայացնում Լիազոր մարմին:

24. Կարգով նախատեսված ընթացակարգով հաստատվելուց հետո գլխավոր հատակագծի և (կամ) Համակցված փաստաթղթի փոփոխությունները՝

1) կատարվում են Օրենքով և Կարգով գլխավոր հատակագծի և (կամ) Համակցված փաստաթղթի մշակման ու հաստատման համար նախատեսված ընթացակարգով, եթե՝

ա. գլխավոր հատակագծի, Համակցված փաստաթղթի (Կարգի իմաստով՝ տարածական պլանավորման փաստաթուղթ) հաստատումից հետո՝ դրանում չնախատեսված Առանձին հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունների հանրագումարը գերազանցում է բնակավայրի սահմաններում ընդգրկված հողերի 10 տոկոսը: Բնակավայրի սահմաններից դուրս գտնվող ընդերքօգտագործման նպատակով կատարվող փոփոխությունների դեպքում սույն կետի սահմանափակումը չի կիրառվում, եթե վերջինիս վերաբերյալ առկա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության դրական եզրակացությունը,

բ. տարածական պլանավորման փաստաթուղթը հաստատվելուց հետո՝ առաջին չորս տարվա ավարտին դեռևս չեն իրականացվել Կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությամբ նշված առաջնահերթ միջոցառումների առնվազն 50 տոկոսը:

2) սույն կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերություններում նշված դեպքերում Իրավասու մարմինը գլխավոր հատակագծով (Համակցված փաստաթղթով) չնախատեսված փոփոխությունների անհրաժեշտության դեպքում պետք է նախաձեռնի համայնքի տարածական պլանավորման փաստաթղթի լրամշակման կամ նոր փաստաթղթի մշակման աշխատանքներ: Համակցված փաստաթղթի դեպքում նշված աշխատանքները կարող են իրականացվել փաստաթղթում ընդգրկված առանձին համայնքի (բնակավայրի) մասով:

3) հողամասերի գործառնական նշանակության, գլխավոր հատակագծի իրականացման հերթականության (ըստ առաջնահերթ (մինչև 5 տարի), միջնաժամկետ (5-10 տարի), երկարաժամկետ (10-15 տարի) տեղափոխության փոփոխությունները, եթե դրանք չեն հանգեցնում հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը, կատարվում են համայնքների ղեկավարների կողմից և ներկայացվում համայնքի ավագանու հաստատմանը, բացառությամբ սույն կետի 4-րդ ենթակետում նշված դեպքերի, երբ հողամասի գործառնական նշանակությունը կարող է փոխվել միայն Լիազոր մարմնի համաձայնությամբ: Քաղաքաշինական գոտևորման (կառուցապատման) չափորոշիչների փոփոխությունների դեպքում հողամասի սեփականատերը կամ օգտագործման իրավունք ունեցող անձը համայնքի ղեկավարին ներկայացնում է դիմում՝ համաձայն Ձև N 5.2-ի ձևաչափի: Քաղաքաշինական գործունեության իրականացում չնախատեսող դեպքերում, հողամասերի գործառնական նշանակության փոփոխության նպատակով հողամասի սեփականատերը կամ օգտագործման իրավունք ունեցող անձը համայնքի ղեկավարին ներկայացնում է դիմում՝ համաձայն սույն Կարգի Ձև N 4-ի, իսկ գլխավոր հատակագծի իրականացման հերթականության փոփոխության դեպքում՝ Ձև N 5.3-ի համաձայն: Համայնքի ղեկավարը 3 աշխատանքային օրվա ընթացքում Կարգի պահանջների համաձայն ընթացք է տալիս դիմումին (փոփոխում է հողամասի գործառնական նշանակությունը կամ քաղաքաշինական գոտևորման (կառուցապատման) չափորոշիչները, հերթականությունը կամ համապատասխան հիմնավորմամբ մերժում է, կամ սույն կետի 4-րդ ենթակետով սահմանված դեպքերում ներկայացնում է Լիազոր մարմնի համաձայնեցմանը):

Քաղաքաշինական գործունեության իրականացում նախատեսող դեպքերում հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունները կատարվում են հողամասի սեփականատիրոջ կամ օգտագործողին Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) տրամադրման շրջանակներում:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված հողերի գործառնական նշանակության և հերթականության փոփոխությունները համաձայնեցվում են Լիազոր մարմնի հետ, եթե՝

ա. դրանք առնչվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերին,

բ. դրանք առնչվում են Կարգի 10-րդ կետում նշված շահագրգիռ մարմինների կանոնադրական խնդիրներին,

գ. հողամասերը գտնվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների (գոտիների) տարածքներում,

դ. հողամասերը նախատեսված են բարձր և բարձրագույն ռիսկայնության՝ IV և V կատեգորիաների շինարարական օբյեկտների կառուցման համար,

ե. հողամասերը նախատեսված են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի (այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ օբյեկտների կառուցման համար:

5) սույն կետի 4-րդ ենթակետի ա-ե պարբերություններում նշված դեպքերում Լիազոր մարմնի նախաձեռնությամբ հարցը կարող է ներկայացվել Հանձնաժողովի քննարկմանը կամ համաձայնեցվել համապատասխան շահագրգիռ մարմինների հետ:

6) սույն կետի 1-ին ենթակետում չնշված դեպքերում Առանձին հողամասի նպատակային նշանակության և քաղաքաշինական գոտևորման (կառուցապատման)

չափորոշիչների փոփոխությունը կատարվում է Կարգի 56-րդ, 57-րդ և 58-րդ կետերի պահանջներին համապատասխան, ընդ որում, հողամասի յուրաքանչյուր մեկ կադաստրային միավորի համար կազմվում է առանձին գործ.

7) Առանձին հողամասի նպատակային նշանակության և քաղաքաշինական գոտևորման (կառուցապատման) չափորոշիչների փոփոխությունը չի իրականացվում հիմնադրութային փաստաթղթի մշակմամբ և չի համարվում շրջակա միջավայրի վրա ազդեցության և քաղաքաշինական համալիր փորձաքննությունների ենթակա գործունեություն.

8) անկախ Առանձին հողամասի գործառնական կամ նպատակային նշանակության փոփոխման հանգամանքից՝ գլխավոր հատակագծով կամ Համակցված փաստաթղթով չնախատեսված՝ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքով սահմանված օբյեկտներին վերաբերող՝ Լիազոր մարմնի համաձայնեցմանը ներկայացված գործերը, քաղաքաշինական նորմերին համապատասխանության դեպքում, Լիազոր մարմինը ներկայացնում է հակահրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառի պետական լիազորված մարմին (նպատակային և գործառնական, իսկ Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետում նշված դեպքերում՝ միայն գործառնական նշանակության փոփոխության դեպքում՝ կցելով շահագրգիռ մարմինների կարծիքները), որը հինգ աշխատանքային օրվա ընթացքում իր դրական կամ բացասական (սույն Կարգի 15-րդ կետի պահանջներին համապատասխան՝ հղում կատարելով իրավական ակտի կոնկրետ դրույթին) եզրակացությունը տրամադրում է առաջարկությունը Լիազոր մարմին ներկայացրած համապատասխան մարմնին՝ դրա մասին տեղեկացնելով Լիազոր մարմնին.

9) Հաստատված միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի «ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅՄՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ» աղյուսակում կառուցապատման չափորոշիչների փոփոխություն կատարելու՝ նոր հապավումներին (դասիչներին) համապատասխան՝ փաստաթղթում չկիրառված չափորոշիչներ սահմանելու դեպքում փաթեթը ներկայացվում է Լիազոր մարմնի համաձայնեցմանը սույն կարգի 10-րդ կետով և Ձև N 5.2-ով սահմանված դիմումում նշված և 56-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով (եթե միաժամանակ չի կատարվում հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխություն) սահմանված պահանջներին համապատասխան և հաստատվում է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում.

10) Հաստատված միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի «ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅՄՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ» աղյուսակում առկա հապավումների (դասիչներին) համապատասխան չափորոշիչների՝ սույն փաստաթղթում արդեն իսկ կիրառված այլ հապավումների (դասիչներին) փոփոխությունները իրականացվում են սույն կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջներին համապատասխան (բացառությամբ սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերի).

11) **Այն դեպքերում, երբ սույն հողամասի սահմաններում իրականացվող քաղաքաշինական օբյեկտի/համալիրի ծավալատարածական հորինվածքը ներառում է N 2 հավելվածի «ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅՄՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ»** աղյուսակի մեկից ավելի հապավումներին (դասիչներին) համապատասխան չափորոշիչներ, մասնավորապես՝ ԲՆԿԳ 3-ից ԲՆԿԳ 4-ի սահմաններում ներկայացված հարկայնություն, ապա սույն կարգի 17.1-ին կետով պահանջվող հիմնավորումներին կից ներկայացվում է տարածքի կառուցապատման սխեմա՝ ըստ սույն կարգի N 2 հավելվածի 6-րդ գլխի 10-րդ կետով սահմանված դրույթների՝ նշելով նախատեսվող շենքերի համար առավելագույն թույլատրելի բարձրության կառուցապատման գոտին:

**(24-րդ կետը փոփ. 30.05.24 N 800-Ն, խմբ., լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

25. Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխելու նպատակով հողամասի սեփականատերը կամ օգտագործողը համայնքի ղեկավարին ներկայացնում է դիմում համաձայն սույն Կարգի Ձև N 5-ի: Համայնքի ղեկավարը դիմումն ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում՝

1) ընդունում է որոշում հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխման մասին, եթե տվյալ հողամասի համար այդպիսի նպատակային և գործառնական նշանակություն սահմանված է տարածական պլանավորման փաստաթղթով.

2) սույն կարգի 10-րդ կետով սահմանված դեպքերում Կարգի 56-րդ կետով սահմանված կարգով ներկայացնում է Լիազոր մարմին, եթե տվյալ հողամասի համար գլխավոր հատակագծով սահմանված է այլ նպատակային և գործառնական նշանակություն.

3) Կարգի 59-րդ կետով սահմանված կարգով ներկայացնում է համապատասխան մարզպետին, եթե տվյալ հողամասի համար Համակցված փաստաթղթով սահմանված է այլ

Նպատակային և գործառնական նշանակություն: Մարզպետն իր դրական եզրակացության հետ միասին ներկայացնում է Լիազոր մարմին, կամ պատճառաբանված որոշմամբ մերժում է դրական եզրակացության տալը:

**(25-րդ կետը լրաց., խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

## **2. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԵՎ ՀԱՄԱԿԵՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՈՒ ԴԻՆԵՑ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆԹԻ ՄՇԱԿՄԱՆ, ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒ ՓՈՓՈԽՄԱՆ ԸՆԹՁՅԱԿԱՐԳԸ**

26. Գլխավոր հատակագծի նախագծման առաջադրանքը կազմում է համայնքի ղեկավարն, իսկ Համակցված փաստաթղթի առաջադրանքը՝ համապատասխան մարզպետը:

27. Համակցված փաստաթղթի առաջադրանքը՝ տարածքային հատակագծման նախագծի մասով կազմում է համապատասխան մարզպետը և Միկրոռեզիոնալ միավորի մեջ ընդգրկված համայնքների ղեկավարների կողմից կազմված և ավագանիների հավանությանն արժանացած գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի մշակման առաջադրանքների հետ միասին ամփոփում մեկ ընդհանուր փաստաթղթում:

28. Իրավասու մարմինն առաջադրանքի նախագիծը կազմելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 660 որոշմամբ սահմանված կարգով համայնքի (Միկրոռեզիոնալ միավորի մեջ ընդգրկված համայնքների) բնակչությանն իրազեկում է առաջադրանքի հասարակական քննարկման օրվա և ժամի, ինչպես նաև մինչև քննարկումն առաջադրանքի բովանդակությանը ծանոթանալու հնարավորության մասին: Իրազեկումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով նախատեսված հասարակական լսումների շրջանակներում:

29. Քննարկումը կարող է նշանակվել դրա մասին իրազեկման օրվանից ոչ շուտ, քան 10 աշխատանքային օր անց՝ 5-օրյա ժամկետում:

30. Համայնքի (համայնքների) բնակիչները կարող են մինչև քննարկման օրը իրավասու մարմին ներկայացնել առաջադրանքի նախագծի վերաբերյալ առաջարկություններ:

31. Իրավասու մարմինը հասարակական քննարկման արդյունքում արված առաջարկություններն ամփոփում է և անհրաժեշտության դեպքում լրամշակում առաջադրանքի նախագիծը քննարկման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո Կարգի պահանջներին համապատասխան լրացրած նախագծման առաջադրանքի նախագիծը ներկայացնում է Լիազոր մարմին՝ համաձայնեցման:

32. Լիազոր մարմինն, առաջադրանքի նախագծին համաձայնություն տալու դեպքում, նախագիծը ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում այն ներկայացնում է շահագրգիռ մարմիններին՝ առաջադրանքի վերաբերյալ առաջարկություններ և համայնքին առնչվող ելակետային նյութեր, տվյալներ և իրականացվող ու նախատեսվող ոլորտային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

33. Այն դեպքում, երբ առաջադրանքի նախագիծը կազմված է թերություններով և այն աշխատանքային կարգով հնարավոր չէ լրամշակել, Լիազոր մարմինն, առաջադրանքը ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում այն համապատասխան հիմնավորումներով վերադարձնում է Իրավասու մարմին՝ լրամշակման:

34. Շահագրգիռ մարմիններն առաջադրանքի նախագծի վերաբերյալ առաջարկությունները և Կարգի 37-րդ կետում նշված նյութերը առաջադրանքի նախագիծը ստանալու օրվանից 7 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են Լիազոր մարմին: Լիազոր մարմինն ամփոփում է շահագրգիռ մարմիններից ստացված առաջարկությունները և 5 աշխատանքային օրվա ընթացքում Իրավասու մարմինն է տրամադրում շահագրգիռ մարմինների առաջարկությունների ու դիտողությունների հիման վրա լրամշակված առաջադրանքի նախագիծը՝ կցելով ստացված ելակետային նյութերը: Եթե սույն կետում նշված ժամկետում առաջադրանքի նախագծի վերաբերյալ շահագրգիռ մարմնի կողմից առաջարկություն չի ներկայացվում, Լիազոր մարմինն ամփոփում է առաջադրանքի նախագիծը ստացված կարծիքների հիման վրա:

35. Իրավասու մարմինը, ստանալով համաձայնեցված առաջադրանքի նախագիծը, բնակչությանն իրազեկելու նպատակով փակցնում է այն հայտարարությունների պատիկ և հրապարակում իր պաշտոնական կայքում (Համակցված փաստաթղթի դեպքում նաև Միկրոռեզիոնալ միավորի մեջ ընդգրկված համայնքների կայքերում), որից հետո 15 օրվա ընթացքում բնակչությանից գրավոր առարկություններ չստանալու դեպքում առաջադրանքի նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը (Համակցված փաստաթղթի դեպքում՝ մարզպետի հաստատմանը): Հիմնավորված առաջարկություններ ստանալու դեպքում Իրավասու մարմինը ներառում է դրանք առաջադրանքում, 5-օրյա ժամկետում համաձայնեցնում փոփոխությունները Լիազոր մարմնի հետ, որից հետո ներկայացնում հաստատման:

36. Քաղաքաշինության ոլորտի հիմնադրությամբ նախնական գնահատման հայտի փորձաքննությունը և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման առաջադրանքի համաձայնեցման գործընթացները կարող են համատեղվել՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պայահովման դեպքում:

37. Առաջադրանքը հաստատելուց հետո Իրավասու մարմինը «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով ընտրված՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման լիցենզիա /արտոնագիր/ ունեցող նախագծային աշխատանքներ իրականացնող՝ կապալառուի հետ (այսուհետ՝ Կատարող) կնքում է պայմանագիր, նրան է փոխանցում իր տրամադրության տակ գտնվող ելակետային նյութերը: Բացակայող ելակետային նյութերի հավաքագրման պարտավորությունը պայմանագրով կարող է դրվել Կատարողի վրա:

38. Ելնելով տարածական պլանավորման փաստաթղթի առանձնահատկություններից,

ծավալից և (կամ) բարդությունից՝ Լիազոր մարմնի կամ Իրավասու մարմնի նախաձեռնությամբ փաստաթղթի մշակման աշխատանքների նախագծային կապալի պայմանագրով սահմանված փուլերը կարող են քննարկվել Հանձնաժողովի նիստում՝ վերջինիս առաջարկությունների և դիտողությունների հիման վրա հետագա աշխատանքները շարունակելու նպատակով:

39. Իրավասու մարմինը, նախագծային կազմակերպությունից ստանալով ավարտված նախագիծն, ուսումնասիրում է այն և հիմնական նախագծային լուծումների հետ համաձայն լինելու դեպքում 7 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության լիցենզիա ունեցող անձին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով քաղաքաշինական փորձաքննություն իրականացնելու:

40. Նախագծային փաստաթղթերը փորձաքննության կարող են ներկայացվել Կատարողի կողմից, եթե այդպիսի պայման նախատեսված է նախագծային աշխատանքների կապալի պայմանագրով: Փորձաքննությունն իրականացվում է պատվիրատուի (կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ Կատարողի) և փորձաքննություն իրականացնողի միջև կնքվող պայմանագրի համաձայն:

41. Տարածական պլանավորման փաստաթղթերը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման և փորձաքննության:

**(41-րդ կետը փոփ. 30.05.24 N 800-Ն)**

42. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 660 որոշմամբ նախատեսված իրավասու մարմնի կողմից հասարակության իրազեկումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հասարակական լսումների շրջանակներում:

43. Իրավասու մարմինը գլխավոր հատակագծի (Համակցված փաստաթղթի) նախագիծը, նախագծի վերաբերյալ քաղաքաշինական և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունների դրական եզրակացությունները, ինչպես նաև հասարակական լսումների արձանագրությունը մեկ օրինակ թղթային և 15 օրինակ էլեկտրոնային կրիչների վրա ներկայացնում է Լիազոր մարմին՝ նախագծի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը ստանալու նպատակով:

44. Լիազոր մարմինն ուսումնասիրում է գլխավոր հատակագծի նախագիծը և կից փաստաթղթերն ու հավանություն տալու դեպքում՝ նախագիծն ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում շահագրգիռ մարմինների համաձայնեցմանը կամ դիտողություններ և առարկություններ ունենալու դեպքում՝ վերադարձնում է լրամշակման՝ կցելով համապատասխան հիմնավորումներով իր դիտողությունները: Լիազոր մարմնի դիտողությունները ներկայացվում են նաև Կատարողին և նախագծի վերաբերյալ փորձաքննության դրական եզրակացություն տրամադրած անձին:

45. Կարգի 56-րդ կետի պահանջներին համապատասխան ներկայացված Առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխման փաթեթը լրակազմ լինելու դեպքում Լիազոր մարմինը այն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է շահագրգիռ մարմինների համաձայնեցմանը կամ առարկություններ ունենալու դեպքում՝ վերադարձնում է Իրավասու մարմնին՝ նշելով բացակայող փաստաթուղթը:

**(45-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

46. Իրավասու մարմինը տարածական պլանավորման փաստաթղթի (սույն կարգի 10-րդ կետով սահմանված Առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխման) վերաբերյալ առարկություններն ստանալուց հետո ուղղում է թերությունները և լրամշակված փաթեթը ներկայացնում Լիազոր մարմին:

**(46-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

47. Հանձնաժողովների անդամ(ներ)ը տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի վերաբերյալ առաջարկություններն ու դիտողությունները 15 աշխատանքային օրվա, իսկ Առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխման վերաբերյալ առաջարկություններն ու դիտողությունները՝

1) 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում են Լիազոր մարմին, եթե Կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետում նշված տեղեկանքը (կամ դրոշմակնքված ուրվագիծը) ներկայացվում է փաթեթի կազմում և փաթեթը լրացուցիչ չի ուղարկվում մատակարար կազմակերպությունների համաձայնեցմանը:

2) 7 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում են Լիազոր մարմին, եթե Կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետում նշված տեղեկանքը չի ներկայացվում փաթեթի կազմում և իրավասու մարմնի կողմից փաթեթն ուղարկվում է մատակարար կազմակերպություններին՝ համաձայնեցման:

3) այն դեպքում, երբ համայնքը Կարգի 56-րդ կետի համաձայն ներկայացված լրակազմ փաթեթում ներկայացնում է մատակարար կազմակերպությունների հետ համաձայնեցումը հավաստող փաստաթուղթը (դրոշմակնքված ուրվագիծ կամ տեղեկանք), ապա Միջգերատեսչական հանձնաժողովի պատասխանատու անդամը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը լրացուցիչ չի ուղարկում մատակարար կազմակերպություններին՝ կրկնակի համաձայնեցման:

4) այն դեպքում, երբ քաղաքացին կամ իրավաբանական անձը ներկայացնում է տարածքում պատմամշակութային-հնագիտական արժեքների բացակայության մասին տեղեկանք, Լիազոր մարմինը փաթեթը լրացուցիչ չի ուղարկում Հայաստանի Հանրապետության կրթության,

գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն կարծիքի, այլ ամփոփաթերթում կցվում է նշված տեղեկանքը:

**(47-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

47.1. Կարգի 47-րդ կետում նշված ժամկետներում Հանձնաժողովների անդամ(ներ)ի կողմից կարծիք չներկայացվելու դեպքում համարվում է, որ շահագրգիռ մարմինը քննարկվող փաստաթղթերի վերաբերյալ առարկություններ չունի, ուստիև կարծիքը համարվում է դրական:

**(47.1-ին կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

48. Տարածական պլանավորման փաստաթղթի կամ Առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ շահագրգիռ մարմինների առաջարկություններն ու դիտողությունները պետք է ներկայացվեն յուրաքանչյուրն իրեն առնչվող մասով, լինեն սպառիչ և հիմնավորվեն՝ հողմներ կատարելով համապատասխան իրավական ակտերի կոնկրետ դրույթներին:

**(48-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

49. Լիազոր մարմինը 10 աշխատանքային օրվա (Առանձին հողամասի դեպքում՝ 5 աշխատանքային օրվա) ընթացքում ամփոփում է շահագրգիռ մարմիններից ստացված առաջարկություններն ու դիտողություններն, ընդ որում՝

1) բոլոր շահագրգիռ մարմիններից դրական կարծիքներ ստանալու դեպքում, եթե Լիազոր մարմինը քաղաքաշինական խնդիրներին առնչվող մասով դիտողություններ և առարկություններ չունի, ապա կազմում է Հանձնաժողովի դրական եզրակացությունը և 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում Իրավասու մարմին և Հանձնաժողովի անդամներին.

2) շահագրգիռ մարմիններից հիմնավորված դիտողություններ և առաջարկություններ ստանալու և (կամ) քաղաքաշինական խնդիրներին առնչվող մասով դիտողություններ և առարկություններ ունենալու դեպքում, տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը կամ Առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխման փաթեթը վերադարձվում է Իրավասու մարմին՝ լրամշակման.

3) Սույն կետի 2-րդ ենթակետում նշված տարածական պլանավորման փաստաթղթի լրամշակված նախագիծը կամ Առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության լրամշակված փաթեթը Լիազոր մարմինը՝ ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (Առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում) ուսումնասիրում և համապատասխան մարմին (մարմիններ) ներկայացնում է իր դիտողությունները, իսկ համաձայնեցման կամ լրամշակումն անբավարար գտնելու դեպքում փաթեթը վերադարձնում է Իրավասու մարմին:

Եթե համապատասխան մարմինը (մարմինները) 10 աշխատանքային օրվա (Առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության դեպքում 5 աշխատանքային օրվա) ընթացքում Լիազոր մարմնի դիտողություններով տարածական պլանավորման փաստաթղթի լրամշակված նախագծի կամ Առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության լրամշակված փաթեթի վերաբերյալ կարծիք չի ներկայացնում, ապա համարվում է, որ լրամշակված փաստաթղթերի վերաբերյալ առարկություններ չկան.

4) շահագրգիռ մարմինների կողմից ներկայացվող կարծիքները (դիտողությունները և առաջարկությունները) պետք է կազմվեն իրենց լիազորությունների շրջանակում, իրենց առնչվող մասով՝ սույն Կարգի N 1 աղյուսակի դրույթներին համապատասխան:

**Աղյուսակ N 1**

ՀՀ	Շահագրգիռ մարմինների անվանումը	Ներկայացվող կարծիքների (դիտողությունների/առաջարկությունների) շրջանակը
1	2	3
1	Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե	Քաղաքաշինական նորմերի դրույթների խախտում: Հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի դրույթների հետ անհամապատասխանություն: Քաղաքաշինական օրենսդրությանը հակասություն: Քաղաքաշինական ժառանգությանն անհամապատասխանություն: Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:
2	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հանրային առողջապահության բնագավառին վերաբերող խնդիրներին առնչվող անճշտություններ, առաջարկներ: Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:
3	Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն	Համապատասխան տվյալ քաղաքաշինական գործունեությունից հնարավոր ազդեցության ենթակա տարածքների շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցությանն առնչվող անճշտություններ, առաջարկներ: Ազդեցության մեղմմանն ու կանխարգելմանը միտված միջոցառումներին առնչվող անճշտություններ,

		առաջարկներ: Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:
4	Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն	Համապատասխան տվյալ քաղաքաշինական գործունեության առնչությունը երկրի տնտեսական զարգացման, զբոսաշրջային ու ներդրումային գրավչությանն առնչվող անճշտություններ, առաջարկներ: Գյուղատնտեսական շրջանառությունից բարձրարժեք հողերի անհիմն բացառման դրույթներին առնչվող, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից սահմանված գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման թույլատրելի դեպքերի վերաբերյալ առաջարկներ: Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:
5	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ներառված և նորահայտ հուշարձանների տեղադիրքերը, պահպանական գոտիները, պահպանման միջոցառումներին առնչվող դիտողություններ, առաջարկներ: Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:
6	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին ու սահմանումներին առնչվող անճշտություններ: Հաղորդակցողիներին (ճանապարհային ցանց, երկաթուղագծեր, ինժեներական ենթակառուցվածքներ (բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի, միջին և ցածր ճնշման բաշխիչ գազատարների ու գազի էներգատեղակայանքների, մայրուղային ջրատարերի), օդանավակայաններ) առնչվող դրույթներին առնչվող անճշտություններ, առաջարկներ: Աղբավայրերին առնչվող անճշտություններ, առաջարկներ: Գրականության ցանկում հղում կատարած նորմերի նորացմանն առնչվող առաջարկներ: Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:
7	Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Համապատասխան տվյալ քաղաքաշինական գործունեության կամ մատչելիության գոտու տարածքում ՀՀ հեռահաղորդակցության ոլորտի զարգացման քաղաքականության վերաբերյալ ՀՀ ԲՏԱ նախարարության դիրքորոշումը: Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:
8	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն	Համապատասխան տվյալ քաղաքաշինական գործունեության կամ մատչելիության գոտու տարածքում վտանգավոր բնական երևույթների, ինժեներաերկրաբանական իրավիճակին առնչվող անճշտություններ, առաջարկներ: Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների վերաբերյալ (ծրագրային փաստաթղթերի դեպքում) Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:
9	Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե	Տվյալ հողամասերի կադաստրային քարտեզում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում: Պետական գրանցում չստացած կամ չհաշվառված ինքնակամ շինությունների առկայությամբ 17.2-րդ կետի գ) ենթակետով սահմանված մերժման հիմքերին առնչվող դիտողություններ,

		առաջարկներ: Գույքի նկատմամբ սահմանափակումների առկայությամբ պայմանավորված դիտողություններ: Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:
10	Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին	Հանրապետության Նորմերի դրույթների պահանջներին անհամապատասխանություն, մասնավորապես՝ գոյություն ունեցող և նախատեսվող շենքերի և շինությունների հակահրդեհային միջտարածությունների մասով: Տեղազննության անհամապատասխանությունների (տարածքում փաստացի առկա շենքերի, շինությունների վերաբերյալ ոչ լիարժեք տեղեկատվության մասին) հետ կապված լրամշակումներ: Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:
11	Համապատասխան մարզպետ	Մարզի զարգացման ծրագրերին անհամապատասխանություն: Մարզային ներդրումային ծրագրերի շրջանակում համադրություններ: Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:
12	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:
13	Համապատասխան համայնքի ղեկավար (համաձայնությամբ)	Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:
14	«Հայաստանի շինարարների միություն» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)	Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:
15	«Հայաստանի ճարտարապետների պալատ» ինքնակարգավորվող կազմակերպություն (համաձայնությամբ)	Քաղաքաշինական միջավայրի խաթարմանն առնչվող դիտողություններ, առաջարկներ: Ճարտարապետական կերպարային անհամապատասխանություններին առնչվող առարկություններ: Վրիպակներ, խմբագրական բնույթի լրամշակումներ:

**(աղյուսակը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

**(49-րդ կետը խմբ., լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

50. Կրկին ներկայացված փաթեթի վերաբերյալ Հանձնաժողովների անդամ(ներ)ից Կարգի համաձայն բացասական կարծիք ստանալու դեպքում նախագիծը կամ Առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության առաջարկությունը մերժվում է, կամ, եթե բացասական կարծիքը ներկայացվել է նորմատիվ իրավական ակտերի համապատասխան դրույթներին հղում կատարելով, սակայն լրամշակումից հետո դարձյալ չի տրվում դրական կարծիք և Հանձնաժողովների անդամների կողմից ընդհանուր կարծիք չի ձևավորվում Լիազոր մարմնի կողմից հարցը ներկայացվում է Վարչապետի աշխատակազմ՝ Կոմիտեի առաջիկա նիստում զեկուցելու համար: Կոմիտեի որոշումը հիմք է հարցի վերաբերյալ Հանձնաժողովի վերջնական որոշումն ընդունելու համար:

**(50-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

51. Կոմիտեի նիստին մասնակցելու համար հրավիրվում է բացասական կարծիք ներկայացրած Հանձնաժողովի անդամը, ով ներկայացնում է իր հիմնավորումը՝ իրեն առնչվող մասով և հղում կատարելով իրավական ակտի համապատասխան դրույթի վրա: Քննարկման արդյունքում ընդունված որոշումն արձանագրվում է: Կոմիտեի որոշումը հիմք է փաստաթղթի վերաբերյալ Հանձնաժողովի համապատասխան եզրակացություն կազմելու համար:

**(51-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

52. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը մերժվում է:

53. Կոմիտեի որոշումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում Լիազոր մարմինը Հանձնաժողովի եզրակացությունը Կոմիտեի որոշման հետ միասին փոխանցում է Իրավասու մարմնին և Հանձնաժողովի անդամներին: Տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի վերաբերյալ Հանձնաժողովի բացասական եզրակացությունն Իրավասու մարմնի համար հիմք է Կատարողի հետ պայմանագիրը միակողմանի լուծելու համար՝ կիրառելով պայմանագրի համապատասխան դրույթները: Առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ բացասական եզրակացությունը հիմք է դիմումատուին

մերժելու կամ այլ տարբերակ առաջարկելու համար:

54. Ստանալով գլխավոր հատակագծի նախագծի (գոտևորման նախագծի ներառմամբ) վերաբերյալ Հանձնաժողովի դրական եզրակացությունը՝ համայնքի ղեկավարն այն ներկայացնում է համայնքի ավագանու առաջիկա նիստի քննարկմանը, որի արդյունքներով համայնքի ավագանին ընդունում է համապատասխան որոշում:

55. Համակցված փաստաթղթի վերաբերյալ Հանձնաժողովի դրական եզրակացությունը ստանալուց հետո մարզպետը 3 աշխատանքային օրվա ընթացքում այն ներկայացնում է համապատասխան համայնքների ղեկավարներին, որոնք Հանձնաժողովի դրական եզրակացությունը և նախագծային փաստաթղթերը ներկայացնում են համայնքների ավագանիների հաստատմանը, որից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ավագանիների որոշումները ներկայացնում են մարզպետին.

1) համայնքների ավագանիների՝ գլխավոր հատակագծերի նախագծերի հաստատման մասին դրական որոշումների դեպքում, մարզպետը դրանք ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է որոշում՝ Համակցված փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին.

2) եթե համայնքների ավագանիներից որևէ մեկը չի հաստատում տվյալ համայնքի գլխավոր հատակագծի (գոտևորման) նախագիծը, համայնքի ղեկավարը բացասական որոշումը՝ համապատասխան հիմնավորմամբ ներկայացնում է մարզպետին: Մարզպետը 5 աշխատանքային օրվա ընթացքում հարցը ներկայացնում է Լիազոր մարմին՝ Հանձնաժողովի քննարկմանը, որին պարտադիր հրավիրվում է այն համայնքի ղեկավարը, որի ավագանին ընդունել է բացասական որոշումը.

3) Հանձնաժողովի որոշումը հիմք է համայնքի ավագանու որոշման ընդունման համար՝ ա. եթե Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն, ապա այն հիմք է հանդիսանում Համակցված փաստաթղթի հաստատման համար,

բ. եթե Հանձնաժողովի եզրակացությունը բացասական է որևէ համայնքի մասով, ապա Համակցված փաստաթուղթն ընդունվում է՝ առանց տվյալ համայնքի գլխավոր հատակագծի (գոտևորման) նախագծի ընդգրկման:

56. Առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության մասով գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու նպատակով համայնքի ղեկավարի կողմից համապատասխան մարզպետի միջոցով Լիազոր մարմին ներկայացվող փաթեթում ներառվում են՝

1) համայնքի ղեկավարին քաղաքացու կամ իրավաբանական անձի դիմումը՝ սույն Կարգի Ձև N 5-ին համապատասխան (նպատակային նշանակության փոփոխության դեպքում) (ընդհանուր սեփականության, օգտագործման կամ կառուցապատման իրավունքի մի քանի սուբյեկտների դեպքում՝ վերջիններիս ստորագրությամբ), իսկ պետական կամ համայնքային սեփականություն լինելու պարագայում համայնքի ղեկավարի գրությունը.

2) տվյալ հողամասի և հողամասի սահմաններից 100 մետր շառավղով տեղանքի օրթոֆոտոլուսանկարը կամ հատված գործող կադաստրային քարտեզից (կոորդինատային կազմակցմամբ), որի վրա պետք է նշված լինեն հողամասի տեղադիրքը (հատված կադաստրային քարտեզից (ձեռք է բերվում համայնքից, կադաստրի էլեկտրոնային շտեմարանից)՝ դիմումին կից սեփականության վկայականի ծածկագրին համապատասխան հողամասի ուրվագիծը, այսուհետ՝ Հատակագիծը), հարևան հողօգտագործումները և մոտեցնող ճանապարհները (առկայության դեպքում), դրանց տարածքում գոյություն ունեցող և նախատեսվող շենքերը և շինությունները, դրանց բնույթը և նշանակությունը, շենքերի, շինությունների միջև, հողամասի սահմաններից հեռավորությունները, հողամասից 70 մ շառավղով միջպետական, հանրապետական, տեղական նշանակության ճանապարհները, ինժեներական ենթակառուցվածքի գծային և կետային օբյեկտները, հիմնական գոյություն ունեցող ճանապարհից դեպի հողամաս տրանսպորտային միջոցների մուտքի և ելքի կազմակերպման սխեման՝ երկրորդային գոյություն ունեցող մոտեցումից, սեփականության իրավունքով պատկանող կամ համայնքապատկան հողամասի սահմաններում նախատեսվող մոտեցումից: Համայնքապատկան հողամասի (բնակավայրի ներսում ՀՀ հողային օրենսգրքի բնակավայրի այլ կամ ընդհանուր օգտագործման հողերի, բնակավայրերից դուրս հատվածներում՝ գյուղատնտեսական այլ հողատեսքով ներկայացված դաշտամիջյան ճանապարհների) սահմաններում դրանց նախատեսման դեպքում՝ ներկայացվող ուրվագծում անհրաժեշտ է ապահովել համայնքի համաձայնությունը հավաստող դրոշմակնիք, ընդ որում, բնակավայրից դուրս հատվածներում գյուղատնտեսական այլ հողատեսքերը պահպանում են իրենց նպատակային և գործառնական նշանակությունը.

3) այն տարածքներում, որտեղ առկա է օրթոֆոտոլուսանկարում իրականացնելու սահմանափակում, ներկայացվում են հողամասի առկա վիճակը փաստող լուսանկարները, որոնցում արտացոլված կլինեն հարակից հողամասերը և ճանապարհները (առկայության դեպքում) և իրավիճակային հատակագիծը՝ 1:500, 1:1000 կամ 1:2000 (տարածքային մեծ ընդգրկումների դեպքում) մասշտաբով, որը կպարունակի սույն մասով նախատեսված տեղեկատվությունները.

4) տեղեկանքներ (կամ դրոշմակնիքով ուրվագիծ)՝ տրամադրված մատակարար կազմակերպությունների կողմից՝ ինժեներական ենթակառուցվածքի օբյեկտների (խողովակաշարեր, ստորգետնյա գազապահեստարաններ, մինչև 1000 Վ լարման էլեկտրական ցանցերի էլեկտրահաղորդման օդային գծեր, 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրական ցանցեր, մալուխային գծեր, ինչպես նաև I և II դասերի գազատարներ, կապի ենթակառուցվածքներ) վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անվտանգության գոտիներով, համաձայնեցված տնօրինող և շահագործող կազմակերպությունների հետ և Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող ընկերությունների դիրքորոշումները պարունակող տեղեկանքներ: Քաղաքացու կամ

իրավաբանական անձի դիմումը համայնքի ղեկավարին առցանց ներկայացնելու դեպքում ինժեներական ենթակառուցվածքի օբյեկտների վերաբերյալ հայտը գուգահեռ ներկայացվում է նաև մատակարար կազմակերպությունների համաձայնեցմանը:

5) համայնքի ղեկավարի տեղեկանք-հիմնավորումը, որում նշվում են տեղեկություններ համայնքի համար նախատեսվող օբյեկտի կարևորության և առաջարկվող փոփոխության անհրաժեշտության վերաբերյալ, սանիտարապաշտպանիչ գոտիներ ունեցող (առկայության դեպքում) օբյեկտների վերաբերյալ (այդ թվում՝ համայնքի վարչական սահմանից դուրս)՝ 500-ից մինչև 1000 մետր շառավղով՝ կախված տվյալ օբյեկտի սանիտարապաշտպանիչ գոտու նորմատիվային չափից, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի դեպքում տեղեկանք Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին առնչություն ունենալու, այլընտրանքի բացակայության դեպքում համայնքային սեփականության հողամասի միջով մոտեցում կազմակերպելու դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից համաձայնությունը հավաստող տեղեկանք և հողամասին առնչվող այլ սահմանափակումների վերաբերյալ:

6) հողամասի առկա վիճակը փաստող լուսանկարները, որոնցում արտացոլված կլինեն հարակից հողամասերը և ճանապարհները (առկայության դեպքում):

**(56-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

56.1. Առանձին հողամասի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ժամկետներում ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև պայմանագրի կնքումը հիմք է տվյալ բնակավայրի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթում (միկրոռեգիոնայ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ, բնակավայրի գլխավոր հատակագիծ) Առանձին հողամասի նպատակային և գործառնական, իսկ Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դեպքերում հողերի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ դրական եզրակացության տրամադրման համար: Ձեռքբերողը (պետություն, համայնք կամ կազմակերպություն) գերակա շահի մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը ներկայացնում է Իրավասու մարմին: Իրավասու մարմինը 10-օրյա ժամկետում պարզեցված փաթեթ է ներկայացնում Լիազոր մարմին՝ կցելով՝

1) հանրության գերակա շահ ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը:

2) ձեռքբերողի սեփականության վկայականի պատճենը՝ գերակա շահ ճանաչված հողամասի քարտեզով (կոորդինատային նշահարմամբ):

3) ձեռքբերողի կողմից Իրավասու մարմինն ներկայացված դիմումը՝ ըստ գերակա շահ ճանաչելու մասին որոշմամբ հողամասին վերագրվող համապատասխան նպատակային և գործառնական, իսկ Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքերում՝ միայն գործառնական նշանակությունների հայցի վերաբերյալ՝ ըստ Ձև N 5.4-ի:

4) առանձին հողամասերի նպատակային և գործառնական, իսկ Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքերում՝ միայն գործառնական նշանակությունների փոփոխությունները՝ Ձև N 1 աղյուսակին համապատասխան:

**(56.1-ին կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

56.2. Լիազոր մարմինը՝

1) ստանալով փոփոխությունների լրակազմ փաթեթը և հաշվի առնելով, որ հանրության գերակա շահ ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ կարծիք են ներկայացրել նաև Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ հանդիսացող պետական կառավարման համակարգի մարմինները (ովքեր տվյալ՝ հանրության գերակա շահ ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ընդունել են նաև օտարվող գույքին նոր վերագրվող (փոփոխվող) Առանձին հողամաս(եր)ի նպատակային և գործառնական, իսկ Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դեպքերում՝ միայն գործառնական նշանակությունները), գերակա շահի առարկա հանդիսացող հողամաս(եր)ի նպատակային և գործառնական, իսկ Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դեպքերում՝ միայն գործառնական, նշանակությունների փոփոխություններն իրականացնում է պարզեցված ընթացակարգով՝ 3-օրյա ժամկետում փաթեթը ներկայացնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեին՝ Առանձին հողամասին առնչվող սահմանափակումները մատնանշելու համար:

2) կազմում է դրական եզրակացություն՝ Ձև N 5.5.2-ին համապատասխան և ներկայացնում է համապատասխան մարզպետին (Երևանի քաղաքապետին):

**(56.2-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

56.3. Միջգերատեսչական հանձնաժողովի Ձև N 5.5.2-ին համապատասխան դրական եզրակացությունն ստանալուց հետո մարզպետը 3 աշխատանքային օրվա ընթացքում այն ներկայացնում է համապատասխան համայնքների ղեկավարներին, որոնք Միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը և գերակա շահ ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ օտարվող Առանձին հողամասին վերագրվող նպատակային և գործառնական, իսկ Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դեպքերում՝ միայն գործառնական նշանակությունների փոփոխությունների լրակազմ փաթեթը ներկայացնում են համայնքի ավագանու հաստատմանը, որից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում համայնքի ավագանու որոշումը ներկայացվում է մարզպետին (բացառությամբ Երևան համայնքի):

**(56.3-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

56.4. Համայնքի ավագանու դրական որոշումն ստանալուց հետո մարզպետը (բացառությամբ Երևան համայնքի) 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է որոշում՝ գերակա շահ ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ օտարվող Առանձին հողամասին վերագրվող նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները հաստատելու մասին:

**(56.4-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

56.5. Համապատասխան մարզպետը՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում մարզպետի և համայնքի ավագանու որոշումները, իսկ Երևան համայնքում՝ Երևանի քաղաքպետը, ներկայացնում է Լիազոր մարմին, ով 2 աշխատանքային օրվա ընթացքում գերակա շահ ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ օտարվող Առանձին հողամասին վերագրվող նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների լրակազմ փաթեթը և համապատասխան մարզպետի (բացառությամբ Երևան համայնքի) և համայնքի ավագանու որոշումները տրամադրում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեին, ձեռքբերողին (պետություն, համայնք կամ կազմակերպություն):

**(56.5-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

57. Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետում նշված հողամասերի գործառնական նշանակության փոփոխություն կատարելու նպատակով համայնքի ղեկավարը (համակցված փաստաթղթում փոփոխություն կատարելու դեպքում՝ սույն կարգի 59-րդ կետով սահմանված ընթացակարգով) առաջարկություն է ներկայացնում Լիազոր մարմին, որը նախաձեռնում է Կարգի 24-րդ կետի 4-րդ և Կարգի 24-րդ կետի 5-րդ ենթակետերով նախատեսված գործողություններ:

**(57-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

57.1. Քաղաքաշինական գոտևորման (կառուցապատման) չափորոշիչների, գլխավոր հատակագծի իրականացման հերթականության փոփոխություն կատարելու նպատակով համայնքի ղեկավարը մարզպետին ներկայացնում է առաջարկություն (բացառությամբ Երևան համայնքի): Առաջարկությանը դրական եզրակացություն տալու դեպքում՝ ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում մարզպետը (Երևան համայնքի դեպքում՝ Երևանի քաղաքպետը) այն ներկայացնում է Լիազոր մարմին, իսկ բացասական եզրակացության դեպքում վերադարձնում է համայնքի ղեկավարին՝ հիմնավորելով բացասական եզրակացությունը և հղում կատարելով իրավական ակտի համապատասխան դրույթին:

**(57.1-ին կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

57.2. Սույն կարգի 56-րդ և 57-րդ կետերում ներկայացված առաջարկությունների վերաբերյալ բացասական կարծիքը պետք է առնչվի տվյալ կարծիքը ներկայացնող շահագրգիռ մարմնի գործառնականության, լինի հստակ և չափելի, նշվի անճշտություն պարունակող և ճշտման ենթակա հանգամանքները, պարունակի իրավական ակտի համապատասխան դրույթներին հղում, չպարունակի սույն կարգի պահանջներից դուրս լրացուցիչ պահանջներ և չպարունակեն հետևյալ արտահայտությունները՝ «նպատակահարմար չէ», «խմբագրել N-րդ գլուխը», «առկա են անճշտություններ N-րդ էջում», «դիտողությունները լիովին հաշվի չեն առնվել», «առկա են անհամապատասխանություններ աղյուսակներում»:

**(57.2-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

57.3. Միջգերատեսչական հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ներկայացնում է կարծիք (դիտողություններ և առաջարկություններ) միայն մեկ անգամ: Բնօրինակ՝ սկզբունքային նոր ներդրված փոփոխված դրույթներ չպարունակող, սակայն շրջանառված փաստաթղթում ուշադրությունից դուրս մնացած, կամ յուրաքանչյուր հաջորդ շրջանառության ընթացքում նույն մարմնի տարբեր մասնագետների տարբեր մոտեցումների արդյունքում ծագած նոր դիտողություններ ու առաջարկություններ չեն ներկայացվում: Վերոնշյալ փաստաթղթի վերաբերյալ երկրորդ անգամ ներկայացված նոր դիտողությունները հաշվի չեն առնվում, չեն ուղարկվում լրամշակման և մերժման համար հիմք հանդիսանալ չեն կարող: Մեկից ավելի անգամ դիտողություն կամ առաջարկություն կարող է ներկայացվել հետևյալ բացառիկ դեպքերում՝

1) Եթե նախկինում ներկայացված էական (ոչ խմբագրական բնույթի) դիտողությունները կամ առաջարկությունները չեն ընդունվել կամ ուղղվել՝ առանց պատշաճ հիմնավորման.

2) Միջգերատեսչական հանձնաժողովի այլ անդամներից որևէ մեկի կողմից ներկայացված դիտողության կամ առաջարկության հիման վրա կատարված ուղղումները հանգեցրել են տվյալ մարմնի կողմից իրավական ակտի համապատասխան դրույթների վրա հղում պարունակող նոր դիտողության կամ առաջարկի:

**(57.3-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

57.4. Եթե Միջգերատեսչական հանձնաժողովի անդամներից որևէ մեկի կողմից ներկայացվել է այլ ոլորտի (բնագավառի) լիազոր մարմնի լիազորությունների մասով դիտողություն, որի վերաբերյալ տվյալ ոլորտի (բնագավառի) լիազոր մարմինը տվել է դրական կարծիք, ապա տվյալ դիտողությունը հաշվի չի առնվում:

**(57.4-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

58. Համայնքի ղեկավարի կողմից մարզպետին հողամասի գործառնական նշանակության, քաղաքաշինական գոտևորման (կառուցապատման) չափորոշիչների, գլխավոր հատակագծի իրականացման հերթականության փոփոխության համաձայնեցման ներկայացվող փաթեթում ներառվում է՝

1) քաղաքաշինական գործունեության իրականացում չնախատեսող դեպքերում՝ սույն Կարգի Ձև N 4-ին համապատասխան (ընդհանուր սեփականության կամ օգտագործման իրավունքի մի քանի սուբյեկտների դեպքում՝ վերջիններիս ստորագրությամբ) դիմումը և տվյալ հողամասի և հողամասի սահմաններից 100 մետր շառավղով տեղանքի օրթոֆոտոլուսանկարը

(կորոդինատային կապակցմամբ) կամ քաղվածք գործող կադաստրային քարտեզից, որի վրա պետք է նշված լինի հողամասի տեղադիրքը: Այն տարածքներում, որտեղ առկա է օրթոֆոտոլուսանկարում իրականացնելու սահմանափակում, ներկայացվում են հողամասի առկա վիճակը փաստող լուսանկարները:

2) քաղաքաշինական գործունեության իրականացում նախատեսող դեպքերում՝ սույն Կարգի Ձև N 5.1, Ձև N 5.2 և Ձև N 5.3-ին համապատասխան (ընդհանուր սեփականության, օգտագործման կամ կառուցապատման իրավունքի մի քանի սուբյեկտների դեպքում՝ վերջիններիս ստորագրությամբ) դիմումը և 56-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը:

**(58-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

59. Առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության և Կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետում նշված հողերի գործառնական նշանակության փոփոխության մասով համակցված փաստաթղթում փոփոխություն կատարելու նպատակով համայնքի ղեկավարը մարզպետին ներկայացնում է առաջարկություն՝ կցելով Կարգի 58-րդ կետում նշված փաստաթղթերը: Մարզպետն իր դրական եզրակացությամբ առաջարկությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Լիազոր մարմին, իսկ բացասական եզրակացության դեպքում, իրավական ակտի համապատասխան դրույթին հղմամբ հիմնավորելով կարծիքը, 5 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է համայնքի ղեկավարին:

**(59-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

60. Հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը համայնքի ավագանու կողմից կարող է հաստատվել միայն Միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում: Պարզեցված ընթացակարգի դեպքում փոփոխությունը կատարվում է հետևյալ պետական մարմինները ներառող կազմով Միջգերատեսչական հանձնաժողովի (Հանձնաժողով 1)-ի կողմից տրված եզրակացությունների հիման վրա՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե (Լիազոր մարմին).

2) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն.

3) Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

**(60-րդ կետը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

60.1. Սույն կարգի 60-րդ կետով նախատեսված պարզեցված ընթացակարգով հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը կատարվում է ստորև ներկայացվող դեպքերում՝

1) մինչև 1000 քառ. մ մակերեսով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված գյուղատնտեսական հողերից բնակելի և հասարակական նշանակության հողատեսքերի փոփոխությունները.

2) մինչև 200 քառ. մ մակերեսով կապի օբյեկտների (բջջային, ռադիոռելեային և այլ նշանակության կայանների՝ բացառությամբ շենքերի) տեղադրման.

3) բնակավայրերի հատակագծային միավորների (թաղամասերի) տարածքներում ինժեներական ենթակառուցվածքի օբյեկտների (ենթակայաններ, պոմպակայաններ, կաթսայատներ) տեղադրման.

4) ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող 5000 քառ. մ գերազանցող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասում մինչև 300 մակերեսով բնակելի և 50 քառ. մ օժանդակ, 300 քառ. մ մակերեսով հասարակական և գյուղատնտեսական արտադրական նպատակային նշանակության շինությունների կառուցման.

5) կորոդինատային սխալները կամ կադաստրային քարտեզի այլ անճշտությունները հիմք չեն հողամասի նպատակային նշանակությունը չփոփոխելու համար: Նշված անճշտությունների առկայության վերաբերյալ ոլորտի շահագրգիռ մարմնի կողմից տրվում է տեղեկատվություն:

**(60.1-ին կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

60.2. Պարզեցված ընթացակարգով հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը (բացառությամբ հանրության գերակա շահի դեպքերի) համարվում է կատարված՝ համայնքի ավագանու կողմից (սեփականատիրոջ հայտի համաձայն) այդ հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային և գործառնական նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո, որոնք արտացոլվում են հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

**(60.2-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

60.3. Հողամասերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունները սույն կարգի 56.2-րդ և 60-րդ կետերով սահմանված դեպքերում քաղաքացիներին և իրավաբանական անձանց չի ազատում տեղական տուրքերից և վճարներից:

**(60.3-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

60.4. Լիազոր մարմինը տալիս է եզրակացություն՝ կցելով միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթով սահմանված հատակագծային սահմանափակումների (ենթակառուցվածքներ, սանիտարապաշտպանիչ գոտի պահանջող օբյեկտներ, հուշարձանների պահպանական գոտիներ և այլն), նույն փաստաթղթերի գոտևորման բաժնով սահմանված չափորոշիչների մասին տեղեկատվություն (սահմանված կարգով բոլոր պետական մարմինների դրական եզրակացությունն ստացած և հաստատված): Այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում նոր առաջացած հիմնավորված կարիքների հիման վրա չափորոշիչների վերանայման, փաթեթում միաժամանակ ներկայացվում են նոր հայցվող

չափորոշիչների վերաբերյալ հիմնավորումները և համապատասխան փաստաթղթերում դրանց փոփոխության առաջարկը:

**(60.4-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

60.5. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ներկայացնում է փոփոխվող հողամասի նկատմամբ տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների գծերի տեղադիրքի և դրանով պայմանավորված սահմանափակումների կամ տեղափոխման անհրաժեշտության վերաբերյալ տեղեկություն:

**(60.5-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

60.6. Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեն ներկայացնում է տվյալ քաղաքաշինական գործունեության շրջանակում փոփոխվող հողամասերի կադաստրային քարտեզում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկատվություն, պետական գրանցում չստացած կամ չհաշվառված ինքնակամ շինությունների, գույքի նկատմամբ սահմանափակումների առկայությամբ պայմանավորված դիտողություններ:

**(60.6-րդ կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

61. Կարգի 22-րդ կետում նշված ընթացիկ քարտեզը և աղյուսակները սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում, գլխավոր հատակագծով (Համակցված փաստաթղթով) չնախատեսված կռանձին հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխման առաջարկությունները Լիազոր մարմնի կողմից 3-օրյա ժամկետում վերադարձվում են Իրավասու մարմնին՝ նշելով պատճառը:

62. Տարածական պլանավորման փաստաթուղթը Կատարողի կողմից մշակվում է համակարգչային ծրագրերի կիրառմամբ (վեկտորային՝ «Dwg» (դի վի ջի) կամ «Dxf» (դի էքս Էֆ) կամ «Shape» (Շեյփ) ձևաչափերով) և սահմանված կարգով հաստատվելուց հետո 4 օրինակներով (թղթային և էլեկտրոնային) տրամադրվում է համայնքի (համայնքների) ղեկավարին (ղեկավարներին): Նշված օրինակներից մեկը մնում է համայնքում, մեկական օրինակ (թղթային և էլեկտրոնային) համայնքի ղեկավարը տրամադրում է մարզպետին, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի և Լիազոր մարմնին:

63. Նախագծի էլեկտրոնային տարբերակը Լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի տրամադրվում է նախագծի մշակման բնօրինակ համակարգչային ծրագրով և ՊԴՖ (PDF) ձևաչափերով:

64. Տարածական պլանավորման փաստաթուղթը սահմանված կարգով հաստատվելուց հետո համայնքի (համայնքների) վարչական տարածքում (տարածքներում) հողերի նպատակային նշանակության փոփոխությունները կատարվում են բացառապես տարածական պլանավորման փաստաթղթում փոփոխություններ կատարելու միջոցով՝ Օրենքով և Կարգով նախատեսված պահանջներին համապատասխան:

64.1. Մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը (մինչև սույն կարգի N 2 հավելվածի գոտևորման աղյուսակների օրինակելի ձևերը հաստատելը) ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված՝ Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացություն ստացած միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի գոտևորման նախագծի չափորոշիչներն ընդունվում են նշված փաստաթղթերով հաստատված գործառնական գոտիներում կառուցապատման չափորոշիչները և դրանց ներկայացման օրինակելի ձևերի սահմանված պահանջները աղյուսակներով ներկայացված ձևաչափերին համապատասխան: ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 597-Ն որոշմամբ հաստատված կարգի N 2 հավելվածի «ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԶՄՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅՄՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ» աղյուսակի դրույթները դրանց նկատմամբ կիրառելի չեն:

**(64.1-ին կետը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

65. Գլխավոր հատակագծի և Համակցված փաստաթղթի փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման ժամանակ ծագող վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆԵՐՆ ԵՎ ԱՆՀՐԱՑԵՑՏ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅՄՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

66. Հայաստանի Հանրապետության համայնքների գլխավոր հատակագծերի նախագծման առաջադրանքում նշվում են՝

- 1) համայնքի անվանումը.
- 2) համայնքի հիմնական բնութագիրը, այդ թվում՝

- ա. տարածքի մակերեսը,
- բ. բնակչության թիվը և ժողովրդագրական տվյալները,
- գ. ռեսուրսների հիմնական տեսակները (բնական, բուժական, առողջարարական, հանքահումքային և այլ),

դ. հանրային օգտագործման կանաչ գոտիները, լանդշաֆտային, ռեկրեացիոն, բնության հատուկ պահպանվող տարածքները,

ե. արտադրության գերիշխող ճյուղերը,

զ. տվյալներ ինժեներատրանսպորտային և կոմունալ-կենցաղային ենթակառուցվածքների, այդ թվում՝ էներգետիկայի և տրանսպորտի կետային և գծային օբյեկտների, գերեզմանատների, աղբավայրերի, կենցաղային կեղտաջրերի մաքրման կառույցների, խմելու ջրի աղբյուրների տեղակայման և սանիտարական պահպանման գոտիների վերաբերյալ,

է. տվյալներ շրջակա միջավայրի վիճակի, այդ թվում՝ տեղեկատվություն ջրային օբյեկտների

առկա վիճակի՝ կարգավորման, մաքրման և հատակի խորացման ենթակա գետերի ու այլ ջրային ավազանների հունների տարածքների մասով, մթնոլորտային օդի աղտոտման վիճակի, բնական ու տեխնածին արտակարգ իրավիճակների աղբյուրների առկայության վերաբերյալ,

ը. տեղեկատվություն պատմամշակութային հիմնավորման նախագծերի, պատմության և մշակույթի հուշարձանների (այդ թվում՝ նաև նորահայտ հուշարձանների) զբաղեցրած տարածքի և պահպանական գոտիների մակերեսների և օգտագործման պայմանակարգերի վերաբերյալ,

թ. տվյալներ առկա և նախատեսվող էներգատեղակայանքների ու դրանց զբաղեցրած հողատարածքների վերաբերյալ՝ համաձայնեցված տվյալ տեղակայանքները տնօրինող շահագործող ընկերությունների հետ,

ժ. համայնքի առանձնահատկություններից բխող այլ տեղեկատվություն.

3) համայնքի տարածական զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները, այդ թվում՝

ա. համայնքի զարգացման ծրագրից բխող՝ համայնքի (բնակավայրի) հատակագծային կառուցվածքի և գործառնական զարգացմանը, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքի սպասարկման ու զարգացման կազմակերպմանը, գծային օբյեկտների պահպանմանն ու կատարելագործմանը, շրջակա միջավայրի, բնական լանդշաֆտների պահպանությանն ու կատարելագործմանը, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքների առանձնացմանը, տարածքների կազմակերպմանն ու կառուցապատմանը, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանը ներկայացվող հիմնական պահանջները,

բ. հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով առաջարկվող համայնքի տարածքային զարգացման հեռանկարային ուղղությունները,

գ. բնակավայրի (բնակավայրերի) տարածական զարգացմանը ներկայացվող պահանջները,

դ. քաղաքաշինական, գյուղատնտեսական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին, ինչպես նաև հատուկ կարգավորման դրույթներին վերաբերող պահանջները,

ե. ինժեներակրթաբանական նախապատրաստմանը, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանության միջոցառումներին, հողերի պահպանությանը, քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին ներկայացվող հիմնական պահանջները,

զ. համայնքի զարգացման առանձնահատկություններից բխող այլ լրացուցիչ պահանջներ.

4) նախագծման հիմքը (գլխավոր հատակագծի մշակման առաջադրանքը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը).

5) համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները (որոշումների անվանումները, ընդունման ժամկետները, համարները).

6) համայնքի գլխավոր հատակագծի նախագծի կազմին և բովանդակությանը ներկայացվող լրացուցիչ պահանջները (առկայության դեպքում):

67. Գլխավոր հատակագծի մշակման առաջադրանքում ներառվում են նաև դրա կազմում մշակվող քաղաքաշինական գոտևորման նախագծին ներկայացվող պահանջները՝ որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի համապատասխան:

68. Գյուղական բնակավայրեր ներառող համայնքների համար նախագծային առաջադրանքով կարող է նախատեսվել հողերի օգտագործման սխեմայի մշակում համայնքի սահմաններում ընդգրկված գյուղատնտեսական հողերի, դրանց հողատեսքերի և գյուղատնտեսությունում դրանց արդյունավետ օգտագործման մասով:

69. Համակցված տարածական պլանավորման փաստաթղթի մշակման առաջադրանքում սույն Կարգի 66-րդ և 67-րդ կետերով սահմանված կարգով նշված դրույթները լրացվում են տարածական միավորում ընդգրկված յուրաքանչյուր համայնքի մասով, Համակցված փաստաթղթի տարածքային հատակագծման նախագծի մասով մշակվող գծագրերը նախատեսվում են 1:25 000 կամ 1:50 000 մասշտաբներով:

70. Հայաստանի Հանրապետության համայնքների գլխավոր հատակագծերի ելակետային կյուբերի ցանկը ներառում է՝

1) տարածքի տեղագրական հանույթը, 1:10 000 կամ 1: 5000, 1: 2000 կամ 1:1000 մասշտաբներով.

2) կադաստրային քարտեզագրման կյուբերը (այդ թվում՝ տարածքի կառուցապատված հատվածի կադաստրային հանույթը, տարածքի չկառուցապատված հատվածի կադաստրային հանույթը, կադաստրի թեմատիկ շերտերի տեղեկատվությունը թվային տարբերակով).

3) փաստացի հողօգտագործումների և սեփականության սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվություն և հողերի հաշվետվությունը.

4) նախկինում հաստատված քաղաքաշինական ծրագրային և հողաշինական փաստաթղթերը.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաստատված սեյսմամիկրոշրջանացման քարտեզը՝ 1:10 000 կամ 1:5000 մասշտաբներով (գլխավոր հատակագծի դեպքում), մանրամասն սեյսմաշրջանացման քարտեզը՝ 1:25 000 կամ 1:50 000 մասշտաբներով (Համակցված փաստաթղթերի դեպքում).

6) ինժեներակրթաբանական շրջանացման քարտեզը, 1:10 000 կամ 1:5000 մասշտաբներով և ինժեներակրթաբանական հետազննման կյուբերը.

7) տվյալներ պատմամշակութային հիմնավորման նախագծերի վերաբերյալ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների զբաղեցրած տարածքների և պահպանական գոտիների հաստատված նախագծերը և դրանց օգտագործման պայմանակարգերը.

8) տվյալներ շրջակա միջավայրի վիճակի, բնության հատուկ պահպանվող տարածքների (ներառյալ բնության հուշարձանների) և դրանց պահպանական գոտիների վերաբերյալ.

9) տվյալներ ընդհանուր (հանրային) օգտագործման կանաչ գոտիների, լանդշաֆտների, ռեկրեացիոն տարածքների, ջրային օբյեկտների վերաբերյալ:

10) տվյալներ բնակելի, հասարակական, արտադրական կառուցապատման, կոմունալ տնտեսության, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքի (այդ թվում՝ գծային օբյեկտների) առկա վիճակի վերաբերյալ:

11) համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմնի որոշումների պատճենները:

12) տվյալներ ռեսուրսների՝ բնական, բուժական, առողջարարական և այլ պաշարների մասին:

13) համայնքին վերաբերող արխիվային նյութերը (առկայության դեպքում):

14) տվյալներ առկա և նախատեսվող էներգատեղակայանքների ու դրանց զբաղեցրած հողատարածքների վերաբերյալ՝ համաձայնեցված տվյալ տեղակայանքները տնօրինող շահագործող ընկերությունների հետ:

15) առաջադրանքով ամրագրված լրացուցիչ պահանջներին վերաբերող նյութեր (առկայության դեպքում):

16) տվյալներ օգտակար հանածոների հանքավայրերի վերաբերյալ:

Սույն դրույթը տարածվում է որոշման նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո մեկնարկած քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի վրա:

**(70-րդ կետը խմբ. 30.05.24 N 800-Ն, 25.12.25 N 1972-Ն)**

71. Կարգի 70-րդ կետում նշված ելակետային նյութերը Համակցված փաստաթղթի մշակման դեպքում հավաքագրվում են տարածքային միավորումներում ընդգրկված յուրաքանչյուր համայնքի մասով, Համակցված փաստաթղթի տարածքային հատակագծման նախագծի մասով մշակվող գծագրերի համար տեղագրական հանույթը տրամադրվում է 1: 25 000 կամ 1:50 000 մասշտաբներով:

**3.1. ԹՎԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԱՈՒՆՁԻՆ ՀՈՂԱՍԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ, ԻՍԿ ԱՈՒՆՁԻՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ՝ ՄԻԱՅՆ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆԵՄԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՃԱՆՁՆԵՐԸ**  
**(գլուխը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

71.1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են առանձին հողամասերի նպատակային և գործառնական, իսկ առանձին դեպքերում՝ միայն գործառնական նշանակությունների (այսուհետ՝ հողամասերի նպատակային և գործառնական նշանակություններ) փոփոխության թվային հարթակում տրամադրման ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:

71.2. Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների թվային հարթակը (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) գործում է առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխության գործընթացը որոշակիորեն և փաստաթղթերի տրամադրման, ծանուցումների և համաձայնեցումների ընթացակարգերը մասնակիցների կողմից թվային եղանակով, կարճ ժամկետներում և համակարգված իրականացնելու նպատակով: Էլեկտրոնային համակարգը հնարավորություն է տալիս իրականացնելու միաժամանակյա տեղեկացումներ, մի քանի մարմինների և կազմակերպությունների հետ առցանց փոխհամաձայնեցումներ, ինչպես նաև ապահովում է ամբողջ ընթացակարգի թափանցիկությունը և գործընթացների մշտադիտարկումը:

71.3. Էլեկտրոնային համակարգի ավտոմատացման միջոցառումներն իրականացվում են երեք հիմնական ուղղություններով՝

1) գործառույթների ներքին ավտոմատացում ընթացակարգին մասնակից շահագրգիռ մարմինների (գերատեսչությունների) կորպորատիվ ցանց:

2) հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների էլեկտրոնային միջավայրում (այսուհետ՝ ինստիտուցիոնալ ցանց), որտեղ պարտադիր հասանելիություն ունեն ընթացակարգին մասնակից բոլոր այն շահագրգիռ մարմինները, որոնք Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 1 հավելվածի (այսուհետ՝ N 1 հավելված) պահանջների շրջանակում ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անմիջական լիազորություն կամ գործառույթ համապատասխան վարչական վարույթի արդյունքում տրվող կամ ձևակերպվող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխության համար: Քաղաքացին, իրավաբանական անձը կամ իրավասու մարմինը հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխության իրականացման համար իրավասու մարմինն ուղղված իր հայտը (դիմումը) ներկայացնում է բացառապես էլեկտրոնային համակարգի միջոցով՝ առցանց (online) անձամբ կամ լիազորված անձի միջոցով, կամ իրավասու մարմնի մեկ պատուհան ծառայության աշխատակցի միջոցով, N 1 հավելվածի Ձևերի պահանջներին համապատասխան: Հանրային տեղեկությունների մասին օրենքի և կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի N 572-Ն որոշման համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայություններ ստանալու համար անձանց նույնականացումը պետք է իրականացվի "Ես Եմ" ազգային նույնականացման հարթակի միջոցով:

3) արտաքին (ինստիտուցիոնալ) ցանցի միջոցով հայտատուներին առցանց ծառայությունների մատուցման ապահովում՝ հայտատուի կողմից մուտքագրվող նույնականացման տվյալները՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի՝ արտաքին ցանցի

միջոցով հայտատուներին առցանց ծառայությունների մատուցման ապահովում հայտատուի կողմից մուտքագրվող նույնականացման տվյալները՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, պետական ռեգիստրի գործակալության, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի տվյալների շտեմարանների և այլ թվային շտեմարանների տվյալների հետ ինքնաշխատ նույնականացնելու նպատակով՝ ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի Էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով անձնական տվյալների փոխանցման N 1849-Ն որոշման կարգի համաձայն:

71.4. Արտաքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է ինստիտուցիոնալ ցանցի միջոցով, որը համակարգվում է, ինչպես նաև անխափան ու անվտանգ շահագործման սպասարկումն իրականացվում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից, իսկ ներքին փաստաթղթաշրջանառությունը՝ կորպորատիվ ցանցի միջոցով, որի անխափան ու անվտանգ շահագործման սպասարկումն իրականացվում է սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված յուրաքանչյուր մարմնի կողմից, որով հայտատուի կողմից ներկայացված հայտը (դիմումը)՝ կից փաստաթղթերով և ինքնաշխատ գեներացված տվյալներով հասանելի է դառնում գործառույթի կատարման լիազորություն ունեցող իրավասու մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը:

71.5. Էլեկտրոնային ընդունարանը (իրավասու մարմնի մեկ պատուհան ծառայության Էլեկտրոնային համարժեքը), հայտատու իրավասու մարմնի շղթայի միջանկյալ օղակն է, որի գործառույթները ներառում են հայտատուից դիմումներ (կից փաստաթղթերով) մուտքագրումը (տեղեկատվական մուտքի միասնական հարթակում գրանցման համար (ծածկագիր) տրամադրելու և անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն մատուցելու), իսկ գործընթացի ավարտից հետո՝ հայտատուին ծանուցելու և համապատասխան փաստաթղթերը նրան արտածելու պարտականություններով:

71.6. Տեղեկատվական մուտքի միասնական հարթակի միջոցով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխության տրամադրման ընթացակարգերն իրականացվում են N 1 հավելվածով սահմանված հաջորդականությամբ, պայմաններով և ժամկետներով:

71.7. Տեղեկատվական մուտքի միասնական հարթակի միջոցով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունն ստանալու համար հայտատուն իրավասու մարմնի Էլեկտրոնային ընդունարանում կարող է գրանցվել սույն կարգի 6-րդ կետում նշված գործառույթների իրականացման առաջին կամ յուրաքանչյուր հաջորդական փուլում, ընդ որում, գրանցման համարը (ծածկագիրը)՝ հայտատուի համար իր կողմից ներկայացված հայտի (դիմումի) հետագա շարժի մասին, հավաստի տեղեկություններ ստանալու միջոց է՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը դրա իրականացման ամբողջ ընթացքում:

71.8. Տեղեկատվական մուտքի միասնական հարթակի համակարգի միջոցով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունն ստանալու համար հայտատուն գրանցվում է տեղեկատվական մուտքի միասնական հարթակի վեբ կայքում՝ նշելով իր Էլեկտրոնային հասցեն ու հեռախոսահամարը, ստեղծում է հաշիվ (account) համակարգում և լրացնում է ու իր Էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնում է N 1 հավելվածով սահմանված համապատասխան Էլեկտրոնային հայտը (դիմումը): Իրավասու մարմնի մեկ պատուհանի աշխատակցի միջոցով հայտ ներկայացնելու դեպքում տվյալները տեղեկատվական մուտքի միասնական հարթակ են մուտքագրվում աշխատակցի կողմից՝ միաժամանակ ստեղծելով հայտատուի համար նոր օգտատիրոջ հաշիվ: Նորաստեղծ հաշվի տվյալները (օգտատիրոջ անունը և գաղտնաբառը) ուղարկվում են հայտատուին՝ հայտում նշված Էլեկտրոնային հասցեին կամ Էլեկտրոնային կարճ հաղորդագրությամբ: Օգտագործելով իր հաշիվը՝ հայտատուն հնարավորություն է ստանում հետևելու իր դիմումի համապատասխան գործառույթի ընթացքին: Հայտին կից պահանջվող փաստաթղթերն Էլեկտրոնային համակարգի կարգավորումների շնորհիվ ավտոմատ եղանակով նույնականացվում են համապատասխան մարմինների տվյալների շտեմարանների միջոցով կամ դրա անհնարինություն դեպքում՝ հայտատուի կողմից կցվում են փաստաթղթերի տեսաներածված պատճենները:

71.9. Իրավասու մարմնի կողմից պետական լիազոր և այլ մարմիններին՝ N 1 հավելվածով սահմանված դեպքերում ու ժամկետներում ներկայացվող հարցումները, վերջիններիս հետ հետադարձ կապը, ինչպես նաև հայտատուներին իրավասու մարմնի Էլեկտրոնային ստորագրությամբ համապատասխան հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների տրամադրումն ապահովվում է Էլեկտրոնային հաղորդակցության՝ թվային հարթակի ինստիտուցիոնալ ցանցի միջոցով:

71.10. Տեղեկատվական մուտքի միասնական հարթակի միջոցով հայտատուներին՝ իրավասու մարմնի Էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված համապատասխան հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների (կամ հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների տրամադրումը մերժելու մասին գրությունների) տրամադրման պահին, Էլեկտրոնային համակարգի ավտոմատ կարգավորումների միջոցով հայտատուին ծանուցում է ուղարկվում նաև հայտում նշված Էլեկտրոնային հասցեով, ընդ որում, հայտը (դիմումը) կարող է մերժվել N 1 հավելվածով սահմանված հիմքերով և իրավական ակտերին հղում կատարելով:

71.11. Այն դեպքում, երբ միջգերատեսչական հանձնաժողովի առանձին գերատեսչության կողմից պատասխանի համար սահմանված ժամկետում ստացվում է դիտողություն կամ առաջարկ, հայտատուն կարող է կատարել տվյալ դիտողության լրամշակում և մինչ սահմանված ժամկետի սպառմվելը մուտքագրել նույն հայտի շրջանակում: Դիտողությունը ներկայացրած մարմնի կողմից պատասխանն ընդունելու դեպքում կտրվի դրական կարծիք:

71.12. Այն դեպքերում, երբ տեղեկատվական մուտքի միասնական հարթակի մուտքագրված փաստաթղթերի տվյալների ինքնաշխատ եղանակով նույնականացումը հնարավոր չէ իրականացնել ես ԵՄ-ի և առկա տվյալների շտեմարանների հիման վրա, N 1 հավելվածով սահմանված պահանջներով և սույն կարգով նախատեսված ընթացակարգով հարուցված ցանկացած վարչական վարույթի շրջանակում իրավասու մարմինը, ըստ անհրաժեշտության, կարող է էլեկտրոնային ծանուցմամբ առաջարկել հայտատուին վերջինիս հայեցողությամբ, իրավասու մարմինն ներկայացնել նաև N 1 հավելվածով սահմանված կարգերի շրջանակներում նախատեսված թվային հայտին (դիմումին)՝ (մուտքագրվող տվյալների համակցությամբ) կցվող որոշ փաստաթղթերի բնօրինակները:

71.13. Հայտատուն կեղծ տվյալներ ներկայացնելու դեպքում կրում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

#### **4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ, ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾՄԱՆ ԴԼԱՆՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄԻՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

72. Հայաստանի Հանրապետության համայնքի գլխավոր հատակագծի նախագծային փաստաթղթերի փաթեթը կազմված է գրաֆիկական և տեքստային մասերից: Գրաֆիկական մասի գծագրերը մշակվում են կադաստրային քարտեզի հիմքի վրա, հաշվի առնելով ինժեներաերկրաբանական և սեյսմամիկրոշրջանացման քարտեզների (առկայության դեպքում) տվյալները, քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումները:

##### **(72-րդ կետը փոփ. 30.05.24 N 800-Ն)**

73. Գլխավոր հատակագծի գրաֆիկական մասը ներկայացվում է հետևյալ կազմով՝

**1) հենակետային հատակագիծ** (կամ տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ)՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբներով, որտեղ ցույց են տրվում՝

ա. տարածքի հատակագծային կառուցվածքը (բնակելի, հասարակական, ընդհանուր օգտագործման, արտադրական, գյուղատնտեսական, կոմունալ և այլ տարածքներն ըստ գործառնական նշանակության (հողատեսքերի),

բ. տրանսպորտային (այդ թվում՝ արտաքին տրանսպորտի) կապերը և ճանապարհային ցանցը,

գ. ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքների տարածքները,

դ. ջրային օբյեկտների սահմանները,

ե. բնության հատուկ պահպանվող տարածքների սահմանները,

զ. բնակավայրի փաստացի սահմանագիծը.

**2) ռիսկերի և սահմանափակումների քարտեզ** (կամ տարածքի համալիր գնահատման քարտեզ)՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբներով: Ռիսկերի և սահմանափակումների քարտեզում ցույց են տրվում՝

ա. կառուցապատման համար անբարենպաստ տարածքները՝ դրանց բնութագրերի նշումով,

բ. իրավասու մարմինն հայտնի բնական ու տեխնածին վտանգավոր երևույթների պատճառով կառուցապատման և այլ նպատակներով հողօգտագործման համար անբարենպաստ տարածքները,

գ. երկրաբանական ֆոնդում պետական գրանցում ստացած հանքավայրերի սահմանագծերը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների սահմանները,

դ. շրջակա միջավայրն աղտոտող իրավասու մարմինն հայտնի օբյեկտների

սանիտարապաշտպանիչ գոտիները,

ե. էկոլոգիական իրավիճակի նկարագիրը՝ աղմուկի, էլեկտրամագնիսական ճառագայթման, ռադիոակտիվ աղտոտվածության և այլ էկոլոգիական խախտումների իրավասու մարմինն հայտնի գոտիները,

զ. սույն ենթակետի «բ» և «դ» պարբերություններում նշված, ինչպես նաև

սանիտարապաշտպանիչ գոտիներ ունեցող այլ օբյեկտները հարևան համայնքների կողմից տրամադրված նյութերի հիման վրա նշվում են նաև համայնքի վարչական սահմանից դուրս՝ հարևան համայնքների առավելագույնը 1000 մետր շառավղով տարածքներում՝ կախված տվյալ օբյեկտի սանիտարապաշտպանիչ գոտու նորմատիվային չափից.

**3) ճանապարհային ցանց և տրանսպորտի կազմակերպման ուղղագիծ**՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբներով: Տրանսպորտի գոյություն ունեցող և նախագծային գծային օբյեկտները գծագրի վրա նշվում են նույն գույնի՝ համապատասխանաբար հոծ և կետագիծ գծերով, իսկ կետային օբյեկտների տարածքները նույն գույնի թափանցիկ լիցքերով՝ նախագծայինի դեպքում ավելացնելով համապատասխան գույնի շեղագիծ: Տրանսպորտի կազմակերպման ուղղագիծում միագույն գծային հենակետային հիմքի վրա ցույց են տրվում գոյություն ունեցող և նախագծային.

ա. արտաքին տրանսպորտի (երկաթուղային գծեր և կայարաններ, օդանավակայաններ, կամուրջներ, ուղեկամուրջներ, թունելներ, ճոպանուղիներ և այլն) տարածքներն ու կառույցները,

բ. ավտոմոբիլային ճանապարհների ցանցը և դրանց դասակարգումը,

գ. միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտիները, ներհամայնքային ավտոմոբիլային ճանապարհների կարմիր գծերը,

դ. **(պարբերությունն ուժը կորցրել է 30.05.24 N 800-Ն)**

**4) ինժեներական ու կոմունալ ենթակառուցվածքի ուղղագիծ**՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբներով: Ինժեներական ենթակառուցվածքների գոյություն ունեցող և նախագծային գծային օբյեկտները գծագրի վրա նշվում են տարբեր գույներով՝ համապատասխանաբար հոծ և

կետագիծ գծերով, իսկ կետային օբյեկտների տարածքները՝ նույն գույնի թափանցիկ լիցքերով՝ նախագծայինի դեպքում ավելացնելով համապատասխան գույնի շեղագիծ: Ինժեներական ու կոմունալ ենթակառուցվածքի ուրվագծում միագույն գծային հենակետային հիմքի վրա ցույց են տրվում գոյություն ունեցող և նախագծային՝

ա. ինժեներական և կոմունալ սարքավորումների հիմնական կառուցվածքները,

բ. հիդրոտեխնիկական կառույցները,

գ. առաջարկություններ աղբավայրերի, մաքրման կայանների վերաբերյալ:

5) **լանդշաֆտային կազմակերպման ուրվագիծ**՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբներով:

Լանդշաֆտային կազմակերպման ուրվագծում միագույն գծային հենակետային հիմքի վրա ցույց են տրվում՝

ա. համայնքի սահմաններում ընդգրկված անտառային, ջրային և այլ բնական օբյեկտների, ինչպես նաև բնակավայրի սահմաններում ներառված բնական համալիրների տարածքները:

6) **տարածքային զարգացման հատակագիծ (հիմնական գծագիր)**՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբներով: Տարածքային զարգացման հատակագծում, հենակետային հատակագծի և ռիսկերի ու սահմանափակումների քարտեզի հիման վրա ցույց են տրվում՝

ա. համայնքի տարածական զարգացման հիմնական ուղղությունները,

բ. հատակագծային և ծավալատարածական կառուցվածքի բարելավման և զարգացման վերաբերյալ առաջարկությունները,

գ. ճանապարհափողոցային ցանցի զարգացման միջոցառումները,

դ. ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքի զարգացման վերաբերյալ

առաջարկություններ, աղբահանության և այլ կենցաղ-սպասարկման միջոցառումները,

ե. բնապահպանական միջոցառումները, սանիտարական գոտիները, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները գրանցված հողամասերի սահմաններով:

7) **հողերի նպատակային նշանակության փոփոխությունների գծագիր**՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբներով, որտեղ նշվում են՝

ա. նախագծային լուծումներից բխող հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները՝ ճանապարհների կամ շենքերի և շինությունների սահմանագծերով,

բ. գլխավոր հատակագծի իրականացման հերթականությունը՝ ըստ առաջնահերթ (մինչև 5 տարի), միջնաժամկետ (5-10 տարի), երկարաժամկետ (10-15 տարի) փուլերի (գծագրի վրա հողամասերը նշվում են համապատասխանաբար «Ա», «Մ», «Ե» տառերով):

8) **համայնքի դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում**՝ 1:50000 կամ 1:25000

մասշտաբներով: Համայնքի դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում գծագրում ցույց են տրվում համայնքի հիմնական գործառնական, ինժեներական, տրանսպորտային և հատակագծային կապերը հարևան համայնքների և այլ կարևոր օբյեկտների հետ:

9) մինչև 15 հազար բնակիչ ունեցող համայնքների գլխավոր հատակագծերի նախագծային փաստաթղթերի կազմում պարտադիր մշակվում են քաղաքաշինական գոտևորման նախագծերը՝ բնակավայրի ողջ տարածքի համար որոշման N 2 հավելվածի պահանջներին համապատասխան:

10) **(ենթակետն ուժը կորցրել է 30.05.24 N 800-Լ)**

11) **(ենթակետն ուժը կորցրել է 30.05.24 N 800-Լ)**

12) **(ենթակետն ուժը կորցրել է 30.05.24 N 800-Լ)**

13) **(ենթակետն ուժը կորցրել է 30.05.24 N 800-Լ)**

14) Կարգի 74-րդ կետի 1-7-րդ ենթակետերում նշված գծագրերից յուրաքանչյուրը, կախված հագեցվածության աստիճանից, իր հերթին կարող է բաժանվել համապատասխան թվով շերտերի (ըստ առանձին հատակագծային գործոնների հագեցվածության, ինչպես նաև տարածքային պլանավորման գործընթացում դրանց նշանակության):

15) Պայմանագրով նախատեսված լինելու դեպքում, գլխավոր հատակագծի կազմում կարող են մշակվել նաև այլ գծագրեր, որոնց կազմը, բովանդակությունը և մասշտաբը նշվում են նախագծման առաջադրանքում:

**(73-րդ կետը խմբ., փոփ. 30.05.24 N 800-Լ)**

74. Գլխավոր հատակագծի տեքստային մասը ներկայացվում է հետևյալ կազմով՝

1) **բացատրագիր**, հետևյալ բաժիններով:

ա. «Համայնքի մասին» բաժնում համառոտ ներկայացվում են՝ համայնքի (բնակավայրի) պատմության, բնակչության, պատմամշակութային հուշարձանների, բնության հատուկ պահպանվող տարածքների, հիմնական տրանսպորտային կապերի, հարևան համայնքների վերաբերյալ տեղեկությունները:

բ. «Տարածքի փաստացի իրավիճակ» բաժնում ներկայացվում է տարածքի բնակլիմայական և աշխարհագրական պայմանների, կառուցապատված հատվածի հատակագծային կառուցվածքի, հիմնական կառույցների, բնակելի ֆոնդի, ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքի, կանաչ տարածքների, բնակավայրի այլ տարրերի համառոտ նկարագրությունը, բնակչության դեմոգրաֆիական տվյալները, բնական և արտադրական ռեսուրսները, առկա հողային ֆոնդը և դրա փաստացի օգտագործումը, համայնքի տարածական զարգացման խնդիրները, զարգացման հնարավորությունները և նպատակները:

գ. «Տարածքի համալիր գնահատական» բաժնում նկարագրվում են բնական և տեխնածին վտանգները, ռիսկերը, քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, առողջապահական և այլ սահմանափակումները: Ներկայացվում է կառուցապատման և այլ նպատակներով առանձնացված տարածքների նկարագրությունը, դրանց ընտրության հիմնավորումները, հողամասերի հատկությունները, ցուցանիշները և այլն:

դ. «Համայնքի քաղաքաշինական զարգացում» բաժնում ներկայացվում են համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունները և դրանց ներդրմանը կամ կատարելագործմանն ուղղված նախագծային լուծումների նկարագրությունը, նախագծման ընթացքում դիտարկված

տարբերակների վերլուծությունը և վերջնական ընտրության հիմնավորումը: Ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքի բարելավման, զարգացման և ստեղծման միջոցառումները, դրանց համար նախատեսված հողամասերը: Բնակելի ֆոնդի զարգացման հեռանկարները: Բնակչության հեռանկարային աճի կանխատեսումները, համապատասխան հիմնավորումներով, նախագծով նախատեսված այլ միջոցառումների նկարագրությունը և հիմնավորումները: Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներ ներառող համայնքներում առանձին բաժնով ներկայացվում է նաև հատուկ կարգավորման գոտու սահմանների նկարագրությունը

**Ե. (պարբերությունն ուժը կորցրել է 30.05.24 N 800-Լ)**

2) շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ

3) քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ

4) պատմամշակութային հուշարձանների պահպանության միջոցառումներ

5) բնական լանդշաֆտների և կանաչապատ տարածքների պահպանման և զարգացման միջոցառումներ

6) գլխավոր հատակագծի կազմում մշակվող Գոտևորման նախագծի տեքստային մասը մշակվում է որոշման N2 հավելվածի պահանջներին համապատասխան:

**7) (ենթակետն ուժը կորցրել է 30.05.24 N 800-Լ)**

Սույն Կարգի 74-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված բաժինները մշակվում են համապատասխան ոլորտների իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

**(74-րդ կետը խմբ., փոփ. 30.05.24 N 800-Լ)**

75. Գյուղական համայնքների համար, հաշվի առնելով կառուցապատման, ճանապարհների և ինժեներական ու կոմունալ ենթակառուցվածքների փոքր խտությունը և սույն Կարգի 72-րդ կետի պահանջների մշակվում է Պարզեցված գլխավոր հատակագիծ, ընդ որում՝ մեկ համատեղված գծագրով կարող են ներկայացվել՝

1) հենակետային հատակագիծը ու ռիսկերի և սահմանափակումների քարտեզը,

2) ճանապարհային ցանցը, տրանսպորտի, ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքների կազմակերպման ուղղագծերը

3) տարածքային զարգացման հատակագիծը, հողերի նպատակային նշանակության փոփոխությունները, հատակագծի իրականացման հերթականությունը՝ առաջնահերթ (մինչև 5 տարի), միջնաժամկետ (5-10 տարի), երկարաժամկետ (10-15 տարի) միջոցառումները

4) գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի կազմում պարտադիր մշակվում է գոտևորման նախագիծը, որը ներառում է որոշման N 2 հավելվածով սահմանված պահանջները:

**5) (ենթակետն ուժը կորցրել է 30.05.24 N 800-Լ)**

**(75-րդ կետը փոփ. 30.05.24 N 800-Լ)**

76. Պարզեցված գլխավոր հատակագծի տեքստային մասը մշակվում է սույն Կարգի 4-րդ կետի պահանջներին համապատասխան, համատեղելով՝ 1-ին ենթակետի «բ», «գ», «դ» և «ե» կետերը, 4-րդ և 5-րդ ենթակետերը, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված «Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ» և «Քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ» մասերը մշակվում են համառոտ՝ ներառելով միայն նախատեսված միջոցառումներին վերաբերող նախագծային լուծումների հիմնավորումները:

77. **Համակցված փաստաթղթերը** մշակվում են գրաֆիկական և տեքստային մասերով և ներառում են՝ միկրոռեգիոնալ մակարդակի տարածքային հատակագծման նախագծի և բնակավայրերի գոտևորման նախագծերի բաժինները, հետևյալ կազմով՝

1) **հենակետային հատակագիծ** (տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ), 1:10000 կամ 1:25000 մասշտաբներով, իսկ Միկրոռեգիոնալ միավորում ընդգրկված յուրաքանչյուր բնակավայրի համար՝ 1:5000 մասշտաբով: Հենակետային հատակագծում ցույց են տրվում՝ ա. ներառված համայնքների սահմանները, դրանց բնակավայրերի փաստացի սահմանագծերը,

բ. միջպետական և հանրապետական նշանակության ավտոմայրուղիները, բնակավայրերի միջև տրանսպորտային կապերը, երկաթուղային գծերը և կայանները, օդանավակայանները և այլն,

գ. միջբնակավայրային ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները, ուղեգծերը, ջրամատակարարման աղբյուրները, ջրամբարները, հեղեղատարները, արտեզյան ջրերի ելքերը, աղբավայրերը, կոյուղու մաքրման կայանները, արտադրական թափոնների տարածքները, ընդերքօգտագործման նպատակով հատկացված տարածքները, ընդերքօգտագործման թափոնների օբյեկտները,

դ. գետերի և այլ ջրային ավազանների տարածքները, անտառային զանգվածները, հանքավայրերը, հանգստյան, առողջարարական գոտիները, տարածաշրջանային նշանակություն ունեցող արտադրատնտեսական օբյեկտները,

ե. հատուկ պահպանվող բնության, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքները, ջրամատակարարման ակունքների պահպանական գոտիները, բնության հուշարձանների, տարածաշրջանային նշանակություն ունեցող գերիտնավ, ջրահավաք ավազանների տարածքները, ջրանկուսման կարգերի պահպանության գոտիները, ինչպես նաև շրջակա միջավայրի մոնիտորինգի իրականացման դիտակետերի տարածքները:

2) **տարածքի համալիր գնահատում**՝ 1:10000 կամ 1:25000 մասշտաբներով: Հենակետային գծագրի հիմքի վրա նշվում են՝

ա. ինժեներատեխնիկական շրջանացման գոտիները, կառուցապատման համար

անբարենպաստ տարածքները, բնական և տեխնածին երևույթների (սողանքների, սելավների, հեղեղների և այլն) տարածման գոտիներն ու պաշտպանական կառույցները,

բ. քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքները (միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներ, սահմանված կարգով առանձնացված այլ օբյեկտներ), ինժեներական և կոմունալ ուղեգծերի անվտանգության գոտիները, արտադրական և այլ օբյեկտների սանիտարապաշտպանիչ գոտիները, պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիները, այլ սահմանափակումները,

գ. օգտակար հանածոների պաշարների և շահագործվող հանքավայրերի գոտիները, վերականգնման (ռեկուլտիվացիայի) ենթակա տարածքները,

դ. շրջակա միջավայրի աղտոտման գոտիները, բնակության համար անբարենպաստ տարածքները, 2010 մ բացարձակ նիշից բարձր գոտիները,

ե. գյուղատնտեսական արժեքավոր հողատեսքերի տարածքները, մշակվող ոռոգելի վարելահողերը, ոռոգման ենթակա տարածքները,

զ. սահմանափակ գոտիները, հատուկ նշանակության հողերը և այլն:

**3) տարածքի զարգացման հատակագիծ** (հիմնական գծագիր)՝ 1:10000 կամ 1:25000 մասշտաբներով, իսկ Միկրոռեգիոնալ միավորում ընդգրկված յուրաքանչյուր բնակավայրի համար՝ 1:5000 մասշտաբով: Հենակետային գծագրի հիմքի վրա արտացոլվում են տարածքի համալիր գնահատման վերլուծությունից բխող՝

ա) բնակավայրերի տարածքային զարգացման վերաբերյալ առաջարկությունները,

բ) արտադրատնտեսական օբյեկտների և նոր բնակավայրերի համար ընտրված

տարածքները,

գ) հանգստյան, առողջարարական, անտառային գոտիների տեղաբաշխումը,

դ) քաղաքային և գյուղական տարաբնակեցման կատարելագործումը,

ե) միջբնակավայրային ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները,

զ) արտադրական և կենցաղային թափոնների վնասագերծման, վերամշակման, պահեստավորման ու թաղման օբյեկտների համար տարածքների ընտրությունը,

է) բնակավայրերի, արտադրական օբյեկտների և էկոլոգիապես անբարենպաստ պայմաններում գտնվող տարածքների համար բնապահպանական ու սանիտարապաշտպանական գոտիները, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների ինժեներական պաշտպանության միջոցառումները,

ը) հատուկ պահպանվող բնության, պատմության և մշակույթի օբյեկտների տարածքները, ջրի, ակունքների պահպանական գոտիները, տարածաշրջանային նշանակություն ունեցող ջրավազանները, ջրաէկոհամակարգերի պահպանության գոտիները, ինչպես նաև Օրենքով նախատեսված հիմքերով քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների ստեղծման վերաբերյալ առաջարկները,

թ) զարգացման նպատակով առանձնացված հողերի նպատակային նշանակությունների փոփոխությունները, հեռանկարային զարգացման միջոցառումները, իրագործման փուլերը, Կարգի Ձև N 1-ին համապատասխան ներկայացվում են հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները և Ձև N 3-ին համապատասխան նախագծի տեխնիկատնտեսական ցուցանիշները:

**4) տրանսպորտային և ինժեներական հաղորդակցության ուղիների ուրվագիծ**՝ 1:10000 կամ 1:25000 մասշտաբներով, որտեղ ցույց են տրվում նախագծվող տարածքի միջբնակավայրային և ինժեներատրանսպորտային մայրուղային ենթակառուցվածքների կատարելագործման հիմնական ուղղությունները:

**5) բնության և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանման ուրվագիծ**՝ 1:10000 կամ 1:25000 մասշտաբներով, որտեղ ցույց են տրվում տարածքի ինժեներական պաշտպանությունը բնական և տեխնածին վտանգավոր գործընթացներից ու երևույթներից, էկոլոգիական և այլ արտակարգ իրավիճակների ու աղետների կանխարգելումը և հետևանքների վերացումը:

**6) քաղաքաշինական գոտևորման նախագիծ**՝ 1:2000 կամ 1:1000 մասշտաբներով, որը մշակվում է Միկրոռեգիոնալ միավորում ընդգրկված յուրաքանչյուր բնակավայրի և դրանց հեռանկարային զարգացման տարածքների համար և ներառում է որոշման N 2 հավելվածով սահմանված գոտևորման մասի պահանջները:

**7) Միկրոռեգիոնալ միավորի դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում**՝ 1:50000 կամ 1:25000 մասշտաբներով, որի գծագրում ցույց են տրվում Միկրոռեգիոնալ միավորման հիմնական գործառնական, ինժեներական, տրանսպորտային և հատակագծային կապերը հարևան Միկրոռեգիոնալ միավորման և այլ կարևոր օբյեկտների հետ:

**8) զբոսաշրջության զարգացման քարտեզը**՝ 1:10000 կամ 1:25000 մասշտաբներով, որտեղ նշվում են պատմության, մշակույթի և բնության հուշարձանները, թանգարանները, թատրոնները, հայտնի ռեստորանները համալիրները, սրճարանները, զբոսայգիները (այդ թվում կենդանաբանական և բուսաբանական), հանգստի (այդ թվում հյուրանոցները, մոթելները, քեմպինգները, իջևանատները), ժամանցի և տեսարժան այլ վայրերը, ավտոկայանատեղերը, տրանսպորտային կանգառները, և այլ տեղեկատվություն:

**78. Համակցված փաստաթղթի տեքստային մասը** մշակվում է սույն Կարգի 74-րդ կետի պահանջների համաձայն, ներկայացվում է նմանատիպ կառուցվածքով և պարունակում է ամբողջ տարածքային միավորին և դրանում ընդգրկված համայնքներին վերաբերող տեղեկատվություն, տարածքի համալիր գնահատման արդյունքները, վերլուծությունը, հեռանկարային առաջարկությունների և նախագծային լուծումների հիմնավորումները, Կարգի Ձև N 1-ին համապատասխան հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների

փոփոխությունները (ըստ առանձին համայնքների) և Ձև N 3-ին համապատասխան նախագծի տեխնիկատնտեսական ցուցանիշները, ինչպես նաև Համակցված փաստաթղթի կազմում մշակվող քաղաքաշինական գոտևորման նախագծի վերաբերյալ վերլուծություն և առաջարկություններ՝ համաձայն որոշման N 2 հավելվածով սահմանված կարգի:

**5. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԴԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԶԵՎԱԶՈՓԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

79. Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները ներկայացվում են Ձև 1-ին համապատասխան երեք աղյուսակների տեսքով՝

- 1) Աղյուսակ 1. Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի),
- 2) Աղյուսակ 2. Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի),
- 3) Աղյուսակ 3. Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի):

**Ձև N 1**

<b>Հողամասի N գծագրի վրա</b>	<b>Առկա նպատակային և գործառնական նշանակությունը</b>	<b>մակերեսը (հա)</b>	<b>Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը</b>	<b>մակերեսը(հա)</b>
<b>1</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>4</b>	<b>5</b>
	<b>Գյուղատնտեսական նշանակության հողերից՝</b>			
			<b>Գյուղատնտեսական նշանակության</b>	
	<i>Լրացվում է համապատասխան հողատեսքը, օրինակ՝ արոտ հողատեսքը</i>		<i>Լրացվում է համապատասխան հողատեսքը, օրինակ՝ վարելահող հողատեսքը</i>	
			<b>Բնակավայրերի</b>	
	<i>Լրացվում է համապատասխան հողատեսքը, օրինակ՝ արելահող</i>		<i>Լրացվում է համապատասխան գործառնական նշանակությունը, օրինակ՝ բնակելի կառուցապատման</i>	
	<i>հողատեսքը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>	
			<b>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության</b>	
	<i>հողատեսքը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>	
			<b>Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների</b>	
	<i>հողատեսքը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>	
			<b>Հատուկ պահպանվող տարածքների</b>	
	<i>հողատեսքը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>	
			<b>Հատուկ նշանակության</b>	
	<i>հողատեսքը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>	

	հողատեսքը		<b>Զրային</b> գործառնական նշանակությունը	
	հողատեսքը		<b>Մնտառային</b> գործառնական նշանակությունը	
	հողատեսքը		<b>Պահուստային</b> գործառնական նշանակությունը	
	<b>Բնակավայրերի հողերից</b>			
			<b>Գյուղատնտեսական նշանակության</b>	
	գործառնական նշանակությունը		հողատեսքը	
	գործառնական նշանակությունը		<b>Բնակավայրերի</b> գործառնական նշանակությունը	
			<b>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
			<b>Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
			<b>Հատուկ պահպանվող տարածքների</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
			<b>Հատուկ նշանակության հողերի</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
			<b>Զրային</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
			<b>Մնտառային</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
			<b>Պահուստային</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
	<b>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից</b>			
			<b>Գյուղատնտեսական նշանակության</b>	
	գործառնական		հողատեսքը	

	<i>Նշանակությունը</i>		
			<b>Բնակավայրերի</b>
	<i>գործառնական նշանակությունը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>
			<b>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության</b>
	<i>գործառնական նշանակությունը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>
			<b>Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների</b>
	<i>գործառնական նշանակությունը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>
			<b>Հատուկ պահպանվող տարածքների</b>
	<i>գործառնական նշանակությունը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>
			<b>Հատուկ նշանակության հողերի</b>
	<i>գործառնական նշանակությունը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>
			<b>Զբային</b>
	<i>գործառնական նշանակությունը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>
			<b>Մնտառային</b>
	<i>գործառնական նշանակությունը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>
			<b>Պահուստային</b>
	<i>գործառնական նշանակությունը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>
	<b>Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերից</b>		
			<b>Գյուղատնտեսական նշանակության</b>
	<i>գործառնական նշանակությունը</i>		<i>հողատեսքը</i>
			<b>Բնակավայրերի</b>
	<i>գործառնական նշանակությունը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>
			<b>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության</b>
	<i>գործառնական նշանակությունը</i>		<i>գործառնական նշանակությունը</i>
			<b>Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների</b>

		<b>Օբյեկտների</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Հատուկ պահպանվող տարածքների</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Հատուկ նշանակության հողերի</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Զրային</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Անտառային</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Պահուստային</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
	<b>Հատուկ պահպանվող տարածքների հողերից</b>		
		<b>Գյուղատնտեսական նշանակության</b>	
	գործառնական նշանակությունը	հողատեսքը	
		<b>Բնակավայրերի</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Հատուկ պահպանվող տարածքների</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Հատուկ նշանակության հողերի</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Զրային</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	

	գործառնական նշանակությունը		<b>Անտառային</b> գործառնական նշանակությունը	
			<b>Պահուստային</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
	<b>Հատուկ նշանակության հողերից</b>			
			<b>Գյուղատնտեսական նշանակության</b>	
	գործառնական նշանակությունը		հողատեսքը	
			<b>Բնակավայրերի</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
			<b>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
			<b>Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
			<b>Հատուկ պահպանվող տարածքների</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
			<b>Հատուկ նշանակության հողերի</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
			<b>Զրային</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
			<b>Անտառային</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
			<b>Պահուստային</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	
	<b>Զրային հողերից</b>			
			<b>Գյուղատնտեսական նշանակության</b>	
	գործառնական նշանակությունը		հողատեսքը	
			<b>Բնակավայրերի</b>	
	գործառնական նշանակությունը		գործառնական նշանակությունը	

		<b>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության</b>	
	<i>գործառնական նշանակությունը</i>	<i>գործառնական նշանակությունը</i>	
		<b>Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների</b>	
	<i>գործառնական նշանակությունը</i>	<i>գործառնական նշանակությունը</i>	
		<b>Հատուկ պահպանվող տարածքների</b>	
	<i>գործառնական նշանակությունը</i>	<i>գործառնական նշանակությունը</i>	
		<b>Հատուկ նշանակության հողերի</b>	
	<i>գործառնական նշանակությունը</i>	<i>գործառնական նշանակությունը</i>	
		<b>Զբային</b>	
	<i>գործառնական նշանակությունը</i>	<i>գործառնական նշանակությունը</i>	
		<b>Մևտառային</b>	
	<i>գործառնական նշանակությունը</i>	<i>գործառնական նշանակությունը</i>	
		<b>Պահուստային</b>	
	<b>Մևտառային հողերից</b>		
		<b>Գյուղատնտեսական նշանակության</b>	
	<i>գործառնական նշանակությունը</i>	<i>հողատեսքը</i>	
		<b>Բնակավայրերի</b>	
	<i>գործառնական նշանակությունը</i>	<i>գործառնական նշանակությունը</i>	
		<b>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության</b>	
	<i>գործառնական նշանակությունը</i>	<i>գործառնական նշանակությունը</i>	
		<b>Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների</b>	
	<i>գործառնական նշանակությունը</i>	<i>գործառնական նշանակությունը</i>	
		<b>Հատուկ պահպանվող տարածքների</b>	
	<i>գործառնական նշանակությունը</i>	<i>գործառնական նշանակությունը</i>	
		<b>Հատուկ</b>	

	գործառնական նշանակությունը	<b>նշանակության հոդերի</b> գործառնական նշանակությունը	
		<b>Ջրային</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Մնտառային</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Պահուստային</b>	
	<b>Պահուստային հոդերից՝</b>		
		<b>Գյուղատնտեսական նշանակության</b>	
	գործառնական նշանակությունը	հողատեսքը	
		<b>Բնակավայրերի</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Հատուկ պահպանվող տարածքների</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Հատուկ նշանակության հոդերի</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Ջրային հոդերի</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Մնտառային հոդերի</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	
		<b>Պահուստային հոդերի</b>	
	գործառնական նշանակությունը	գործառնական նշանակությունը	

**6. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

80. Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի

տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացվում են հետևյալ փուլերի համար՝

- 1) Ելակետային տարվա.
- 2) Իրականացման առաջնահերթ ծրագրային փուլի.
- 3) Իրականացման հեռանկարային փուլերի (խոշորացված ցուցանիշներով):

81. Կոմունալ-կենցաղային և արտադրական կարիքների համար Էլեկտրաէներգիայի, ջերմության, ջրի, գազի պահանջարկի, տնտեսական ու խմելու ջրերի և արտադրական կեղտաջրերի արտանետման ծավալների ցուցանիշներն ընդունվում են ըստ մարզային և համայնքային ծառայությունների տվյալների:

82. Անհրաժեշտության դեպքում կարող են ավելացվել այլ ցուցանիշներ:

83. **(Կետն ուժը կորցրել է 30.05.24 N 800-Ն)**

**Ձև N 2**

**(ձևն ուժը կորցրել է 30.05.24 N 800-Ն)**

**7. ՀԱՄԱԿԳՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԴԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

84. Համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացվում են հետևյալ փուլերի համար՝

- 1) Ելակետային տարվա.
- 2) Իրականացման առաջնահերթ ծրագրային փուլի.
- 3) Իրականացման հեռանկարային փուլերի (խոշորացված ցուցանիշներով):

85. Կոմունալ-կենցաղային և արտադրական կարիքների համար Էլեկտրաէներգիայի, ջերմության, ջրի, գազի պահանջարկի, տնտեսական ու խմելու ջրերի և արտադրական կեղտաջրերի արտանետման ծավալների ցուցանիշներն ընդունվում են ըստ մարզային և համայնքային ծառայությունների տվյալների:

86. Անհրաժեշտության դեպքում կարող են ավելացվել այլ ցուցանիշներ:

87. Համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

**Ձև N 3**

NN ը/կ	Տեխնիկատնտեսական ցուցանիշները	Չափի միավորը	Փաստացի	Առաջնահերթ	Հեռանկարային
1	2	3	4	5	6
1.	Տարածքը (ընդամենը)	հազ. հա			
	այդ թվում՝				
	<b>Գյուղատնտեսական նշանակության հողեր,</b>				
	վարելահող	հազ. հա			
	բազմամյա տնկարկներ, ընդամենը	հազ. հա			
	այդ թվում՝ պտղատու այգի	հազ. հա			
	խաղողի այգի	հազ. հա			
	այլ բազմամյա	հազ. հա			
	խոտհարք	հազ. հա			
	արոտ	հազ. հա			
	այլ հողատեսքեր	հազ. հա			
	<i>Ընդամենը</i>	հազ. հա			
	<b>Բնակավայրերի հողեր,</b>				
	բնակելի կառուցապատման	հազ. հա			
	այդ թվում՝ տնամերձ հողեր	հազ. հա			
	այգեգործական (ամառ-ն)	հազ. հա			
	հասարակական կառուցապատման	հազ. հա			
	խառը կառուցապատման	հազ. հա			
	ընդհանուր օգտագործման,	հազ. հա			
	այլ հողեր	հազ. հա			
	<i>Ընդամենը</i>	հազ. հա			
	<b>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր,</b>				

	արդյունաբերության	հազ. հա		
	գյուղատնտեսական	հազ. հա		
	արտադրության			
	պահեստարանների	հազ. հա		
	ընդերքի օգտագործման	հազ. հա		
	<i>Ընդամենը</i>	հազ. հա		
	<b>Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբ.</b>			
	Էներգետիկայի	հազ. հա		
	կապի	հազ. հա		
	տրանսպորտի	հազ. հա		
	կոմունալ ենթակառուցվածք	հազ. հա		
	<i>Ընդամենը</i>	հազ. հա		
	<b>Հատուկ պահպանվող տարածքների,</b>			
	բնապահպանական	հազ. հա		
	այդ թվում՝ արգելոցներ	հազ. հա		
	արգելավայրեր	հազ. հա		
	ազգային պարկեր	հազ. հա		
	առողջարարական	հազ. հա		
	հանգստի	հազ. հա		
	պատմական և մշակութային	հազ. հա		
	<i>Ընդամենը</i>	հազ. հա		
	<b>Հատուկ նշանակության հողեր</b>			
	<i>Ընդամենը</i>	հազ. հա		
	<b>Անտառային հողեր</b>			
	անտառ	հազ. հա		
	թփուտ	հազ. հա		
	վարելահող	հազ. հա		
	խոտհարք	հազ. հա		
	արոտ	հազ. հա		
	այլ հողեր	հազ. հա		
	<i>Ընդամենը</i>	հազ. հա		
	<b>Ջրային</b>			
	գետեր	հազ. հա		
	ջրամբարներ	հազ. հա		
	լճեր	հազ. հա		
	ջրանցքներ	հազ. հա		
	հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հազ. հա		
	<i>Ընդամենը</i>	հազ. հա		
	<b>Պահուստային հողեր</b>			
	<i>Ընդամենը</i>	հազ. հա		
	պետության սեփականությունը հանդիսացող հողեր	հազ. հա		
	համայնքների սեփականությունը հանդիսացող հողեր	հազ. հա		
	քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողեր	հազ. հա		
	պաշտպանիչ անտառաշերտեր, կանաչ տարածքներ	հա		
2.	Բնակչության թիվը (ընդամենը)	հազ. մարդ		

	այդ թվում՝ քահանայների	հազ. մարդ		
	գյուղերի	հազ. մարդ		
3.	Բնակչության խտությունը	հազ. մարդ/հա		
4.	Քաղաքների թիվը	հատ		
	այդ թվում՝ բնակչությամբ՝			
	մինչև 5 հազ. մարդ	հատ		
	5-25 հազ. մարդ	հատ		
	25-50 հազ. մարդ	հատ		
	50-100 հազ. մարդ	հատ		
	100-500 հազ. մարդ	հատ		
	500 հազ. և ավելի մարդ	հատ		
5.	Գյուղերի թիվը	հատ		
	այդ թվում՝ բնակչությամբ՝			
	մինչև 0,2 հազ. մարդ	հատ		
	0,2-1 հազ. մարդ	հատ		
	1-5 հազ. մարդ	հատ		
	5-10 հազ. մարդ	հատ		
	10 հազ. և ավելի	հատ		
6.	Սոցիալական ենթակառուցվածքը	հազ. քառ. մ		
	Բնակելի ֆոնդը՝	(ընդհանուր մակերեսը)		
	քաղաքում	հազ. քառ. մ		
	գյուղում	հազ. քառ. մ		
7.	Բնակչության ապահովվածությունն ընդհանուր մակերեսով	մ2/մարդ		
	այդ թվում՝			
	քաղաքում	մ2/մարդ		
	գյուղում	մ2/մարդ		
8.	Բնակչության ապահովվածությունը միջբնակավայրային և շանակության մշակութային, կենցաղ- սպասարկման և պարտադիր կրթական համակարգի օբյեկտներով՝	1000 բնակչին		
	դպրոցներ	1000 բնակչին		
	մշակութային օբյեկտներ (թատրոններ, ակումբներ, կինոթատրոններ, թանգարաններ, ցուցասրահներ և այլն)	1000 բնակչին		
	առողջապահական օբյեկտներ (առողջարաններ, հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ և այլն)	1000 բնակչին		
	երկարատև հանգստի օբյեկտներ (հանգստյան տներ, պանսիոնատներ, դպրոցականների համար ճամբարներ և այլն)	1000 բնակչին		
9.	Տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքը			
	Երկաթուղային ցանցի երկարությունը (դասակարգումն ըստ ՀՀՇՆ-ի IV-11.05.01-96)	կմ		
	Ավտոմոբիլային ցանցի երկարությունը	կմ		

	(դասակարգումն ըստ ՀՀՇՆ-ի IV-11.05.02-99)			
	այդ թվում՝			
	միջպետական նշանակության	կմ		
	հանրապետական նշանակության	կմ		
	տեղական նշանակության	կմ		
10.	Տրանսպորտային ցանցի խտությունը	կմ/կմ <sup>2</sup>		
	երկաթուղային	կմ/կմ <sup>2</sup>		
	ավտոմոբիլային	կմ/կմ <sup>2</sup>		
11.	Օդանավակայաններ	միավոր		
	այդ թվում՝			
	միջազգային	միավոր		
	հանրապետական նշանակության	միավոր		
12.	Գազատարների երկարությունը	կմ		
13.	Էլեկտրամատակարարում	կՎտ		
14.	Ջերմամատակարարում	մլն կկալ/տարի		
15.	Պահանջարկը			
	Էլեկտրաէներգիայի,			
	որից՝ կոմունալ-կենցաղային պահանջների համար՝	մլն կՎտ/ժամ		
	ջերմության՝			
	որից՝ կոմունալ-կենցաղային պահանջների համար՝	մլն կկալ/տարի		
	բնական գազի	մլն մ <sup>3</sup>		
	ջրի (ընդամենը)	հազ. մ <sup>3</sup> /օր		
	այդ թվում՝			
	մակերևութային ջրերից	հազ. մ <sup>3</sup> /օր		
	ստորգետնյա ջրերից	հազ. մ <sup>3</sup> /օր		
16.	Ջրային պաշարների օգտագործումը			
	խմելու որակի ջուր	հազ. մ <sup>3</sup> /օր		
	արտադրական կարիքների համար՝ տեխնիկական որակի	հազ. մ <sup>3</sup> /օր		
	ոռոգման ջուր	հազ. մ <sup>3</sup> /օր		
	Կեղտաջրերի ընդհանուր ծավալը	հազ. մ <sup>3</sup> /օր		
	այդ թվում՝			
	արտադրական կեղտաջրեր	հազ. մ <sup>3</sup> /օր		
	կենցաղային կեղտաջրեր	հազ. մ <sup>3</sup> /օր		
	մաքրման ենթարկված կեղտաջրեր	հազ. մ <sup>3</sup> /օր		
	այդ թվում՝			
	արտադրական	հազ. մ <sup>3</sup> /օր		
	կենցաղային	հազ. մ <sup>3</sup> /օր		
	Վերամշակված կոշտ կենցաղային թափոնների քանակը	հազ. տ/տարի		
	Արդյունաբերական թափոնների հեռացում	հազ. տ/տարի		
	Կոշտ կենցաղային թափոնների հեռացում	հազ. տ/տարի		
17.	Բնապահպանություն և բնօգտագործում			
	Մթնոլորտ արտանետվող վտանգավոր նյութերի քանակը	հազ. տ/տարի		
	Կեղտաջրերի հետ	հազ. տ/տարի		

արտանետվող վտանգավոր նյութերի քանակը				
Բաց ջրավազանների աղտոտվածությունն ըստ կարգերի	ջրային ռեսուրսներն ըստ կարգերի			
Աղտոտված ջրամբարների տեսակարար կշիռը	ջրային ռեսուրսների աղտոտվածությունն ըստ վնասակար նյութերի աղտոտվածության աստիճանի			
Ռոռզում	տոկոս			
Ճահճացած տարածքների չորացում	տոկոս			
Խախտված հողերի վերականգնում (ռեկուլտիվացիա)	տոկոս			
Վնասակար վերականգնման աշխատանքներ	տոկոս			
Դեգրադացված հողերի վերականգնում	հազ. հա			
Աղակալված հողերի աղազերծում	հազ. հա			

**Ձև N 4**

\_\_\_\_\_ (համայնքի անվանումը)

\_\_\_\_\_ (համայնքի ղեկավարի անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ (ղիմողի անունը, ազգանունը (անվանումը))

\_\_\_\_\_ (բնակության վայրը (գտնվելու վայրը))

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌԱԿՎԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿՎԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՈՂ ԴԵՊՔԵՐԻ)**

Խնդրում եմ \_\_\_\_\_  
 հասցեում գտնվող հողամասի (ծածկագիրը՝ \_\_\_\_\_)  
 գործառնական նշանակությունը փոփոխել \_\_\_\_\_ նշանակությամբ  
 \_\_\_\_\_ նպատակով:

1) հողամասի մակերեսը՝ \_\_\_\_\_, փոփոխվող հողամասի  
 մակերեսը՝ \_\_\_\_\_

2) գլխավոր հատակագծով նախատեսված նպատակային և գործառնական  
 նշանակությունները՝ \_\_\_\_\_

3) առաջարկվող գործառնական նշանակությունը՝ \_\_\_\_\_

4) հողամասի սեփականության (օգտագործման (վարձակալության) կառուցապատման)  
 իրավունքի վկայականի պատճենը՝ \_\_\_\_\_ թերթ.

5) ինքնակամ շինություններ (հաշվառված)՝ \_\_\_\_\_

Դիմող \_\_\_\_\_  
 (ստորագրությունը)

\_\_\_\_\_ (անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 20 թ.  
**(ձևը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

**Ձև N 5**

\_\_\_\_\_ (համայնքի անվանումը)  
 \_\_\_\_\_ (համայնքի ղեկավարի անունը, ազգանունը)  
 \_\_\_\_\_ (ղիմողի անունը, ազգանունը (անվանումը))

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**ՀՈՂԱՄԱՍԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ) ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Խնդրում եմ փոփոխել

\_\_\_\_\_ հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը (հողամասի ծածկագիրը՝ \_\_\_\_\_)

1) հողամասի մակերեսը՝ \_\_\_\_\_, փոփոխվող հողամասի մակերեսը՝ \_\_\_\_\_

2) գլխավոր հատակագծով նախատեսված նպատակային և գործառնական նշանակությունները՝ \_\_\_\_\_

3) առաջարկվող նպատակային և գործառնական նշանակությունները՝ \_\_\_\_\_

4) հողամասի նշանակությունը փոփոխելու նպատակը (նախատեսվող օբյեկտի բնույթը, ծավալը, հզորությունը)՝ \_\_\_\_\_

5) բիզնեսի նպատակով նախատեսվող օբյեկտների մասին տեղեկատվություն (կատարվելիք ներդրումների չափի և ստեղծվելիք աշխատատեղերի վերաբերյալ)՝ \_\_\_\_\_

6) հողամասի սեփականության (օգտագործման (վարձակալության), իրավունքի վկայականի պատճենը՝ \_\_\_\_\_

7) ինքնակամ շինություններ (հաշվառված)՝ \_\_\_\_\_ թերթ.

Դիմող \_\_\_\_\_

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 20 թ.  
**(ձևը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

**Ձև N 5.1**

\_\_\_\_\_ (համայնքի անվանումը)

\_\_\_\_\_ (համայնքի ղեկավարի անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ (դիմողի անունը, ազգանունը (անվանումը))

\_\_\_\_\_ (բնակության վայրը (գտնվելու վայրը))

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**ՀՈՂԱՄԱՍԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ) ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ (ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՈՂ ԴԵՊՔԵՐ) ՄԱՍԻՆ**

Խնդրում եմ փոփոխել

\_\_\_\_\_ հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը (հողամասի ծածկագիրը՝ \_\_\_\_\_)

1) հողամասի մակերեսը՝ \_\_\_\_\_, փոփոխվող հողամասի մակերեսը՝ \_\_\_\_\_

2) գլխավոր հատակագծով նախատեսված նպատակային և գործառնական նշանակությունները՝ \_\_\_\_\_

3) առաջարկվող գործառնական նշանակությունը՝ \_\_\_\_\_

4) հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու նպատակը (նախատեսվող օբյեկտի բնույթը, ծավալը, հզորությունը)՝ \_\_\_\_\_

5) Հարկայնության հայտ (անհրաժեշտության դեպքում)

6) բիզնեսի նպատակով նախատեսվող օբյեկտների մասին տեղեկատվություն (կատարվելիք ներդրումների չափի և ստեղծվելիք աշխատատեղերի վերաբերյալ)՝ \_\_\_\_\_

7) հողամասի սեփականության (օգտագործման (վարձակալության), իրավունքի վկայականի պատճենը՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_ թերթ.  
8) ինքնակամ շինություններ (հաշվառված) \_\_\_\_\_

Դիմող \_\_\_\_\_

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 20 թ.  
(ձևը լրաց. 25.12.25 N 1972-Ն)

**Ձև N 5.2**

\_\_\_\_\_ (համայնքի անվանումը)

\_\_\_\_\_ (համայնքի ղեկավարի անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ (դիմողի անունը, ազգանունը (անվանումը))

\_\_\_\_\_ (բնակության վայրը (գտնվելու վայրը))

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**ՀԱՍՏԱՏՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԿԱՄ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՈՒՐԹ ՈՒՆԵՑՈՂ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ԶԱՂԱԶԱՅՈՒՄԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ (ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ)  
ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Խնդրում եմ փոփոխել

\_\_\_\_\_ *հասցեում գտնվող հողամասի կառուցապատման չափորոշիչները (հողամասի ծածկագիրը` \_\_\_\_\_)*

1) հողամասի մակերեսը` \_\_\_\_\_, փոփոխվող հողամասի մակերեսը` \_\_\_\_\_  
2) գլխավոր հատակագծով նախատեսված կառուցապատման չափորոշիչները (հապավումը)` \_\_\_\_\_

3) առաջարկվող կառուցապատման չափորոշիչները (հապավումը)` \_\_\_\_\_

4) կառուցապատման չափորոշիչները փոփոխելու նպատակը (նախատեսվող օբյեկտի բնույթը, ծավալը, հզորությունը)` \_\_\_\_\_

5) բիզնեսի նպատակով նախատեսվող օբյեկտների մասին տեղեկատվություն (կատարվելիք ներդրումների չափի և ստեղծվելիք աշխատատեղերի վերաբերյալ)` \_\_\_\_\_

6) հողամասի սեփականության (օգտագործման (վարձակալության), իրավունքի վկայականի պատճենը` \_\_\_\_\_

\_\_\_\_\_ թերթ.

Դիմող \_\_\_\_\_

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 20 թ.  
(ձևը լրաց. 25.12.25 N 1972-Ն)

**Ձև N 5.3**

\_\_\_\_\_ (համայնքի անվանումը)

\_\_\_\_\_ (համայնքի ղեկավարի անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ (դիմողի անունը, ազգանունը (անվանումը))

\_\_\_\_\_ (բնակության վայրը (գտնվելու վայրը))

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**ՀԱՍՏԱՏՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԿԱՄ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՈՒՐԹ ՈՒՆԵՑՈՂ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Խնդրում եմ փոփոխել

\_\_\_\_\_ *հասցեում գտնվող հողամասի հերթականությունը (հողամասի ծածկագիրը` \_\_\_\_\_)*

1) հողամասի մակերեսը` \_\_\_\_\_, փոփոխվող հողամասի մակերեսը` \_\_\_\_\_

2) գլխավոր հատակագծով նախատեսված հերթականությունը (հապավումը)`

3) առաջարկվող հերթականությունը (հապավումը)`

4) կառուցապատման հերթականությունը փոփոխելու նպատակը (նախատեսվող օբյեկտի բնույթը, ծավալը, հզորությունը)`

5) բիզնեսի նպատակով նախատեսվող օբյեկտների մասին տեղեկատվություն (կատարվելիք ներդրումների չափի և ստեղծվելիք աշխատատեղերի վերաբերյալ)`

6) հողամասի սեփականության (օգտագործման (վարձակալության), իրավունքի վկայականի պատճենը`

\_\_\_\_\_ թերթ.

Դիմող

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

20 թ.

**(ձևը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

**Ձև N 5.4**

\_\_\_\_\_ (համայնքի անվանումը)

\_\_\_\_\_ (համայնքի ղեկավարի անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ (դիմողի (ձեռքբերողի) անունը, ազգանունը (անվանումը)

\_\_\_\_\_ (բնակության վայրը (գտնվելու վայրը)

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ԾԱՀ ՃԱՆԱԳԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ) ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Խնդրում եմ փոփոխել

\_\_\_\_\_ *հասցեում գտնվող հողամաս(եր)ի նպատակային նշանակությունը (հողամաս(եր)ի ծածկագիրը/ծածկագրերը` \_\_\_\_\_*

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_ )

1) փոփոխվող հողամաս (եր)ի մակերես(ներ)ը` \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

2) օտարման նպատակը` հանրության գերակա շահ ճանաչելու դեպքում

Դիմող (ձեռքբերող)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

**(ձևը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

**Ձև N 5.5**

**ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/Ա \_\_\_\_\_  
հերթական համարը**

**ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

*Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակման նախագծային առաջադրանքը հաստատելու վերաբերյալ (ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը)*

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն` \_\_\_\_\_ քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակման նախագծային առաջադրանքին:

2. Հիմք ընդունելով սույն եզրակացությունը՝ \_\_\_\_\_ համայնքների ղեկավարներին առաջարկվում է քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթի մշակման նախագծային առաջադրանքը սահմանված կարգով ներկայացնել ավագանիների հաստատմանը (միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի դեպքում հաստատել նաև մարզպետի համապատասխան որոշմամբ):

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովի նախագահ՝	ստորագրություն	անուն, ազգանուն
Հանձնաժողովի քարտուղար՝	ստորագրություն	անուն, ազգանուն

Երևան, « \_\_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 20 թ.  
**(ձևը լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

**Ձև N 5.5.1**

**ԵՂՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ \_\_\_\_\_**  
*հերթական համարը*

Նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ (ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությանը)

Դեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 56.1-ին կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը կամ Հանձնաժողով 1-ը տալիս է դրական եզրակացություն՝ գույքին վերագրվող նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությանը՝

..... Մարզ, ..... համայնք ..... բնակավայր)  Հողամաս(եր)ի մակերես(ներ)ը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամաս(եր)ի նպատակային և գործառնական նշանակություն(ներ)ը	Փոփոխությունից հետո հարկայնությունը/հապավումն ըստ 2011 թ. N 1920-Ն որոշման N 2 հավելվածի կառուցապատման չափորոշիչների աղյուսակի, հապավմանը համապատասխան չափորոշիչները (կառուցապատման տոկոսը, կանաչապատման տոկոսը, կառուցապատման խտությունը)
---	---	--

Ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 Հանձնաժողովի նախագահ՝

\_\_\_\_\_  
 Հանձնաժողովի քարտուղար՝

Երևան, « □ » « \_\_\_\_\_ » 202.... թ.

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-012023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում շինարարական նորմերի պահանջները:

3. .... համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (..... բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ .....ի մարզի ..... համայնքի (..... բնակավայրը) հաստատված գտնւորման նախագծում սույն որոշումից բխող

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ** \_\_\_\_\_  
*հերթական համարը*

Գերակա շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության ..... որոշմամբ .....  
օտարվող գույքին վերագրվող նպատակային և գործառնական նշանակությունների  
փոփոխությունների վերաբերյալ  
(ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված  
միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությանը)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-  
րդ և 56.1-ին կետերի պահանջներով.

**1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝**

Գերակա շահ ճանաչելու մասին որոշմամբ օտարվող գույքին վերագրվող նպատակային և  
գործառնական նշանակությունների փոփոխությանը՝

..... Մարզ, ..... համայնք ..... բնակավայր)  Հողամաս(եր)ի մակերես(ներ)ը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամաս(եր)ի նպատակային և գործառնական նշանակություն(ներ)ը	Փոփոխությունից հետո հարկայնությունը/հապավումն ըստ 2011 թ. N 1920-Ն որոշման N 2 հավելվածի կառուցապատման չափորոշիչների աղյուսակի, հապավումնը համապատասխան չափորոշիչները (կառուցապատման տոկոսը, կանաչապատման տոկոսը, կառուցապատման խտությունը)
---	---	---

Ստորագրություն

Հանձնաժողովի նախագահ՝ \_\_\_\_\_

Հանձնաժողովի քարտուղար՝ \_\_\_\_\_

Երևան, «  » «  » 202.... թ.

2. **Կառուցապատման հետագա գործառնություններն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀԾՆ 30-012023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում շինարարական նորմերի պահանջները և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված Առանձին հողամասին առնչվող սահմանափակումները:**

3. .... համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել  
համայնքի (..... բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ .....ի մարզի .....  
համայնքի (..... բնակավայրը) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից  
բխող փոփոխությունները:

(**ձևը լրաց. 25.12.25 N 1972-Ն**)

ՀՀ մարզի համայնքի գլխավոր հատակագծում \_\_\_\_\_ թվականին կատարված առանձին  
հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների, քաղաքաշինական  
գոտևորման (կառուցապատման) չափորոշիչների փոփոխություններ

Համայնքի սահմաններում ընդգրկված մակերեսը \_\_\_\_\_ հա  
Բնակավայրի սահմաններում ընդգրկված մակերեսը \_\_\_\_\_ հա

**Բնակավայրի սահմաններում ընդգրկված հողամասերի նշանակության փոփոխություններ**

N/N	Հողամասի հասցե/ծածկագիր	Գլխավոր հատակագծով նախատեսված նպատակային և գործառնական նշանակություն	Փոփոխված նպատակային և գործառնական նշանակություն	Մակերես	Չափման միավոր	Քաղաքաշինական գոտևորման (կառուցապատման) չափորոշիչներ (դասիչներ)
1	2	3	4	5	6	7
1					հա	
2					հա	
3					հա	
4					հա	
...					հա	
Ընդամենը					հա	
Ընդամենը՝ բնակավայրի սահմաններում ընդգրկված մակերեսի նկատմամբ տոկոսային արտահայտմամբ					%	

Բնակավայրի սահմաններից դուրս գտնվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների, քաղաքաշինական գոտևորման (կառուցապատման) չափորոշիչների փոփոխություններ

N/N	Հողամասի հասցե/ծածկագիր	Գլխավոր հատակագծով նախատեսված նպատակային և գործառնական նշանակություն	Փոփոխված նպատակային և գործառնական նշանակություն	Մակերես	Չափման միավոր	Քաղաքաշինական գոտևորման (կառուցապատման) չափորոշիչներ (դասիչներ)
1	2	3	4	5	6	7
1					հա	
2					հա	
3					հա	
4					հա	
...					հա	
Ընդամենը					հա	
Ընդամենը՝ բնակավայրի սահմաններից դուրս գտնվող հողամասերի մակերեսի նկատմամբ տոկոսային արտահայտմամբ					%	

**(ձևը խմբ. 25.12.25 N 1972-Ն)**

**(հավելվածը խմբ., լրաց., փոփ. 02.04.15 N 412-Ն, խմբ. 18.08.16 N 855-Ն, 14.12.17 N 1645-Ն, 15.06.18 N 678-Ն, փոփ. 15.02.19 N 101-Ն, 10.10.19 N 1442-Ն, խմբ. 28.04.22 N 597-Ն, փոփ. 03.08.23 N 1304-Ն, փոփ., խմբ. 30.05.24 N 800-Ն, խմբ., լրաց. 25.12.25 N 1972-Ն)**

Հավելված N 2  
 ՀՀ կառավարության 2011 թվականի  
 դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման

## ԿԱՐԳ

### ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ԱՆՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է բնակավայրերի տարածքների քաղաքաշինական գոտևորման նախագծերի (սույնն է ինչ գոտևավորման նախագիծ կամ քաղաքաշինական գոտևավորման նախագիծ, այսուհետև՝ Գոտևորման նախագիծ) մշակման փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման ընթացակարգերին, նախագծման առաջադրանքին, նախագծերի կազմին ու բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները:

2. Գոտևորման նախագիծը, հանդիսանալով քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ սահմանում է համայնքի տարածական զարգացման մանրամասն պայմանները՝ համայնքում ընդգրկված բնակավայրերի տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջներն ու սահմանափակումները՝ կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով:

Գոտևորման նախագծի դրույթները հիմք են հանդիսանում քաղաքաշինական նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման,

շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման ու շինարարության թույլտվության համար:

Որպես առանձին փաստաթուղթ մշակվող Գոտևորման նախագծի առաջադրանքը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից կազմված և համայնքի ավագանու կողմից սահմանված կարգով հաստատված նախագծման առաջադրանքի հիման վրա, համայնքի ղեկավարի պատվերով՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման իրավունք ունեցող անձանց հետ կնքված նախագծային կապալի պայմանագրով:

3. Գոտևորման նախագծերը կարող են մշակվել բնակավայրերի, դրանց առանձին հատվածների, ինչպես նաև բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող՝ քաղաքաշինական նպատակներով նախատեսված տարածքների համար:

4. Գոտևորման նախագծերում հաշվի են առնվում հաստատված և գործող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում, ինչպես նաև հողերի օգտագործման սխեմաներում ներառված դրույթները:

5. Եթե բնակավայրը չունի հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր, ապա, առկա իրադրության վերլուծության հիման վրա, Գոտևորման նախագծի մշակման առաջադրանքում ամրագրվում են նաև ինժեներատրանսպորտային, կոմունալ և սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացման հիմնական խնդիրներին ներկայացվող պահանջները:

6. Գոտևորման նախագծի կազմում պարտադիր մշակվում են բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությունը և կառուցապատման կանոնները: Համայնքի քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնների մշակման օրինակելի ձևը սահմանված է սույն Կարգով:

Մինչև որոշումն ուժի մեջ մտնելը հաստատված գոտևորման նախագծերի կազմում մշակված չլինելու դեպքում՝ բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությունը և կառուցապատման կանոնները կարող են մշակվել որպես առանձին փաստաթուղթ և հաստատվել որպես գործող Գոտևորման նախագծի հավելված:

7. Գոտևորման նախագծի հիմքում դրվում է «սահմանված գոտի-թույլատրելի օգտագործում (կառուցապատում)» սկզբունքը:

8. Գոտևորման նախագծում, ըստ առանձին գոտիների, սահմանվում են քաղաքաշինական նպատակներով հողերի օգտագործման և կառուցապատման թույլատրելի տեսակներն ու պայմանները: Գործառնական գոտիներում թույլատրելի օգտագործման ձևերը սահմանված են սույն Կարգով: Բնակավայրի կամ դրա առանձին հատվածի Գոտևորման նախագծի մշակման ընթացքում սույն Կարգով սահմանված՝ գործառնական գոտիներում թույլատրելի օգտագործման ձևերից ընտրվում են տվյալ բնակավայրի տվյալ գոտու համար սահմանող թույլատրելի օգտագործման ձևերը:

Տվյալ գոտում թույլատրելի օգտագործմանը (կառուցապատմանը) համապատասխանող քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար լրացուցիչ պահանջներ, քննարկումներ և համաձայնեցումներ չեն կարող սահմանվել:

9. Գոտևորման նախագիծը ներառում է.

1) գոտիավորումն՝ ըստ գործառնական նշանակության, հողատեսքերի և թույլատրված օգտագործումների՝ գոտու տարածքի ընդհանուր մակերեսի նկատմամբ դրանց սահմանային չափաբաժինների ամրագրմամբ.

2) ծավալատարածական գոտիավորումն՝ ըստ կառուցապատման չափորոշիչների, որոնք սահմանում են կառուցապատման բնույթն ու օգտագործման աստիճանն արտահայտող համակողմանի ցուցանիշներ (կառուցապատման խտություն, շենքերի ու շինությունների բարձրություն, կառուցապատված, կանաչապատ մակերեսների հարաբերակցություն և այլն)՝ տվյալ գոտու տարածքի համար թույլատրելի չափաբաժիններով:

10. Գործառնական գոտիների անվանումները, դրանց հապավումները (դասիչները) և գծագրում պայմանական նշանները սահմանված են սույն Կարգով:

11. Գործառնական գոտիներում կառուցապատման չափորոշիչները և դրանց ներկայացման օրինակելի ձևը սահմանված են սույն Կարգով:

12. Գոտևորմամբ սահմանված տարածքների օգտագործման ու կառուցապատման պայմանները տարբերվում են մեկից մյուս գոտի անցնելիս, բայց հաստատուն են մնում նույն գոտու ներսում:

## **2. ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

13. Գոտևորման նախագիծը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից կազմված և համայնքի ավագանու կողմից հաստատված նախագծման առաջադրանքի հիման վրա, համայնքի ղեկավարի պատվերով (միկրոռեզոլուցիոն մակարդակի Համակցված փաստաթղթի կազմում ներառված համայնքների դեպքում նաև պետական կառավարման մարմինների պատվերով)՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման իրավունք ունեցող անձանց հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված նախագծային կապալի պայմանագրով:

14. Մինչև համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը, նախագծման առաջադրանքը սույն որոշմամբ գլխավոր հատակագծերի մշակման նախագծման առաջադրանքի համար սահմանված կարգով ներկայացվում է հանրային քննարկման, անհրաժեշտության դեպքում լրամշակվում է և ներկայացվում ՀՀ քաղաքաշինության կոմիտե (այսուհետ՝ Լիագոր մարմին)՝ ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Մ որոշմամբ ստեղծված՝ Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող

միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով) հետ համաձայնեցման:

**(14-րդ կետը փոփ. 25.12.25 N 1972-Ն)**

15. Հանձնաժողովի դրական եզրակացությունը ստանալուց հետո, համայնքի ղեկավարը նախագծման առաջադրանքը ներկայացնում է համայնքի ավագանու առաջիկա նիստին՝ հաստատման: Առանց Հանձնաժողովի դրական եզրակացության հաստատված նախագծային առաջադրանքներն իրավական ուժ չունեն:

Հաստատված առաջադրանքը Գոտևորման նախագծի մշակման հիմքն է: Երևանում սույն կետով սահմանված փոխհարաբերություններն իրականացվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

16. Այն դեպքերում, երբ Գոտևորման նախագիծը մշակվում է համայնքի գլխավոր հատակագծի կամ Համակցված փաստաթղթի կազմում, Գոտևորման նախագծին ներկայացվող պահանջները ներառվում են նշված փաստաթղթերի նախագծման առաջադրանքներում:

17. Որպես առանձին փաստաթուղթ մշակվող Գոտևորման նախագծերի առաջադրանքում նշվում են.

- 1) գոտևորման սահմանները և տարածքի մակերեսը,
- 2) նախագծման հիմքը, նպատակը,
- 3) Գոտևորման նախագծին առնչվող հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը,

4) համայնքում առկա ելակետային կայանները,

5) համայնքի զարգացման ծրագրերով պայմանավորված գործառնական գոտիների սահմանման կամ փոփոխման վերաբերյալ առաջարկությունները,

6) նախագծի մշակմանն առնչվող այլ պահանջներ:

18. Գոտևորման նախագծի մշակման համար պատվիրատուն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված քաղաքաշինական փաստաթղթեր մշակողի (այսուհետև՝ Կատարող) հետ կնքում է պայմանագիր և տրամադրում է նախագծային առաջադրանքն ու նախագծման համար անհրաժեշտ ծավալի ելակետային կայանները:

Պատվիրատուի և Կատարողի համաձայնությամբ Կատարողը կարող է իրականացնել ելակետային կայանների կամ դրանց մի մասի հավաքումը:

19. Գոտևորման նախագծի փորձաքննությունն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

1) պատվիրատուն, Կատարողից ստանալով մշակված նախագիծը, այն ներկայացնում է փորձաքննության: Կապալի պայմանագրով նախատեսված լինելու դեպքում, նախագիծը փորձաքննության կարող է ներկայացվել Կատարողի կողմից:

2) փորձաքննությունն իրականացվում է պատվիրատուի (կամ Կատարողի) և փորձաքննությունն իրականացնողի միջև կնքվող պայմանագրի համաձայն:

3) Գոտևորման նախագիծերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական և էկոլոգիական գնահատման և փորձաքննության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

4) Գոտևորման նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 660 որոշմամբ սահմանված հասարակության իրազեկումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով նախատեսված հասարակական լուսմների շրջանակներում:

**(19-րդ կետը փոփ. 30.05.24 N 800-Ն)**

20. Գոտևորման նախագծի համաձայնեցումը, հաստատումը և փոփոխումն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

1) փորձաքննությունների դրական եզրակացություն ստացած Գոտևորման նախագիծը համայնքի ղեկավարի կողմից ներկայացվում է Լիազոր մարմին՝ նախագիծը համաձայնեցնելու և նախագծի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը ստանալու համար:

2) Լիազոր մարմինը նախագիծը քննարկում և ներկայացնում է Հանձնաժողովում ընդգրկված գերատեսչությունների և կազմակերպությունների համաձայնեցմանը՝ որոշման N 1 հավելվածով սահմանված ընթացակարգով:

3) Հանձնաժողովի դրական եզրակացությունը ստանալուց հետո համայնքի ղեկավարը ավագանու հերթական նիստին նախագիծը ներկայացնում է հաստատման:

4) որպես ինքնուրույն փաստաթուղթ մշակվող Գոտևորման նախագիծը չի կարող հանգեցնել հաստատված գլխավոր հատակագծի և (կամ) Համակցված փաստաթղթի փոփոխությունների: Գոտևորման նախագիծը հաստատվում ու փոփոխվում է Կարգի պահանջների ապահովմամբ, համապատասխանաբար գլխավոր հատակագծում և (կամ) Համակցված փաստաթղթում համապատասխան փոփոխությունների հաստատումից հետո:

5) Երևանում սույն կետով սահմանված փոխհարաբերություններն իրականացվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

6) առանց Հանձնաժողովի դրական եզրակացության հաստատված Գոտևորման նախագծերն իրավական ուժ չունեն:

21. Գոտևորման նախագծերի համաձայնեցման հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

22. Գոտևորման նախագծով առանձին գոտիների համար սահմանված թույլատրելի օգտագործման (կառուցապատման) անհրաժեշտ պահանջների, գոտիների սահմանների, ինչպես նաև ամբողջ նախագծի փոփոխությունները կատարվում են Կարգին համապատասխան:

### 3. ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԻՆ ԵՎ ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅՑՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

23. Գոտևորման նախագիծը բաղկացած է գրաֆիկական և տեքստային մասերից:

24. **Գոտևորման նախագծի գրաֆիկական մասը** մշակվում է Մ 1:2000 կամ 1:1000 մասշտաբի տեղագրական հանույթների վրա (առանձին դեպքերում մասշտաբը կարող է ճշգրտվել պատվիրատուի առաջադրանքով),

25. Գոտևորման նախագծերը մշակվում են համակարգչային ծրագրերի կիրառմամբ՝ «Dwg» (դի վի ջի) կամ «Dxf» (դի իքս էֆ) կամ «Shape» (Շեյփ) ձևաչափերով և հաստատվելուց հետո հանձնվում են պատվիրատուին և Լիազոր մարմինն մեկական օրինակ էլեկտրոնային և մշակման մասշտաբին համապատասխանող թղթային տարբերակներով:

26. Բնակավայրի, դրա նախագծային շրջանների, թաղամասերի և առանձին հատվածների Գոտևորման նախագծերի գրաֆիկական մասերում տարածքի փաստացի օգտագործման հիմքի վրա ցույց են տրվում՝

1) բնակավայրի զարգացման համար անհրաժեշտ հողատարածքներն ու դրանց կառուցապատման հերթականությունը,

2) տարածքի գործառնական գոտիները և դրանց տարբերակող նշանները՝ սույն Կարգով հաստատված ցանկին համապատասխան,

3) տարածքի ծավալատարածական գոտևորումն՝ ըստ կառուցապատման չափորոշիչների տեսակների, և դրանց տարբերակող նշանները (դասիչները), սույն Կարգով հաստատված օրինակելի ձևին համապատասխան,

4) բնակավայրի կազմավորված քաղաքաշինական միջավայրի վերակառուցման, արդիականացման, կառուցապատման առկա պահուստների օգտագործման առաջարկությունները,

5) տարածքի կառուցապատումը կարգավորող նախագծային կարմիր, կառուցապատման և այլ գծերը՝ հանգույցների կոորդինատային նշահարմամբ,

6) պատմամշակութային հուշարձանների զբաղեցրած տարածքները և պահպանական գոտիները, բնության հատուկ պահպանվող տարածքները և դրանց պահպանական գոտիները.

Սահմանված կարգով հաստատված հուշարձանների պահպանական գոտիների բացակայության դեպքում, նախագծողների կողմից առաջարկվում են պահպանական ժամանակավոր գոտիներ, մինչև դրանց ճշգրտումը հուշարձանների պահպանության լիազոր պետական մարմնի կողմից: Կառուցապատման կանոնակարգման և լանդշաֆտի պահպանման գոտիները սահմանվում են ըստ անհրաժեշտության, համապատասխան հիմնավորմամբ:

Հուշարձանների պահպանության, կառուցապատման կարգավորման և լանդշաֆտի պահպանման գոտիները հանդիսանում են ծածկող գոտիներ և դրանցով պայմանավորված սահմանափակումները զուգարկվում են ծածկող գործառնական գոտու կարգավորումներին:

7) ճանապարհային հաղորդակցողիների ցանցը, դասակարգումը, տրանսպորտային կառույցները, տրանսպորտային միջոցների մշտական և ժամանակավոր կայանման տեղերը, այդ թվում՝ ստորգետնյա,

8) մշակութային, սոցիալ-կենցաղային սպասարկման ենթակառուցվածքները՝ սպասարկման գոտիների սահմաններով,

9) ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքների՝ մայրուղային ցանցերի, շինությունների և ստորգետնյա տարածքների օգտագործման գոտիները, տարածքի ինժեներական նախապատրաստման, վտանգավոր բնական և տեխնածին երևույթներից տեղանքի ինժեներական պաշտպանական գոտիների սահմանները,

10) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների սահմանները՝ դրանց առկայության դեպքում:

27. **Գոտևորման նախագծերի տեքստային մասը** ներկայացվում է առանձին հոդվածների և աղյուսակների տեսքով, որոնց հիմնական բաժիններն են՝

1) ընդհանուր դրույթներ,

2) սահմանված գործառնական գոտիները, դրանցում թույլատրելի օգտագործման (կառուցապատման) ձևերը և կառուցապատման չափորոշիչները.

3) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահպանական, անվտանգության, սպասարկման (այդ թվում՝ սերվիտուտներ), սանիտարական և այլ գոտիներով (ծածկող գոտիներ) պայմանավորված գործառնական գոտիներում թույլատրելի օգտագործումների սահմանափակումները և դրանց հիմնավորումները,

4) համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ կառուցապատման կանոնները, շենքերին և շինություններին ներկայացվող ճարտարապետական պահանջները,

5) գոտևորմանը չհամապատասխանող կառուցապատման կարգավորմանն ուղղված միջոցառումները,

6) հուշարձանների պահպանմանը, վերականգնմանը, վերակառուցմանն ուղղված միջոցառումները,

7) պահպանության, անվտանգության, սպասարկման, սանիտարական և այլ գոտիներում իրականացվելիք միջոցառումները:

28. «**Ընդհանուր դրույթներ**» բաժնում նշվում են՝

1) նախագծի մշակման հիմքերը, ելակետային նյութերն ու տվյալները,

2) քաղաքաշինական այլ ծրագրային փաստաթղթերի և հողերի օգտագործման սխեմաների հետ փոխադարձ կապը, Գոտևորման նախագծի հիմնական դրույթները, նպատակը, գոտիների սահմանների որոշման սկզբունքները,

3) տարածքների փաստացի օգտագործման և նախագծային հաշվեկշիռները:

29. «Սահմանված գործառնական գոտիները, դրանցում թույլատրելի օգտագործման (կառուցապատման) ձևերը և կառուցապատման չափորոշիչները» բաժնում ներկայացվում են՝

1) սահմանված գոտիների ցանկը՝ անվանումները, հապավումը (դասիչը) և գծագրում կիրառված պայմանական նշանը,

2) յուրաքանչյուր գոտու անվանումը, համառոտ նկարագրությունը, թույլատրելի օգտագործման հիմնական և ոչ հիմնական՝ ուղեկցող ձևերը՝ սույն Կարգին համապատասխան, կառուցապատման չափորոշիչները՝ կառուցապատման տոկոսը և խտությունը, կանաչապատման տոկոսը, կառույցների հարկայնությունը, հողամասի (լոտի) նվազագույն և առավելագույն մակերեսները, հողամասի անբաժանելի մասը (քմ), հողամասի փողոցահայաց հատվածի նվազագույն լայնությունը և այլն՝ սույն Կարգին համապատասխան:

Յուրաքանչյուր գոտի ներկայացվում է առանձին պարբերությամբ, որտեղ ներկայացվում են գոտու համառոտ նկարագրությունը, թույլատրելի օգտագործման (կառուցապատման) ձևերը, կառուցապատման չափորոշիչները, լրացուցիչ պահանջները՝ դրանց առկայության դեպքում:

30. «ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահպանության, անվտանգության, սպասարկման (այդ թվում սերվիտուտներ), սանիտարական և այլ գոտիներով (ծածկող գոտիներ) պայմանավորված գործառնական գոտիներում թույլատրելի օգտագործումների սահմանափակումները և դրանց հիմնավորումները» բաժնում ներկայացվում են.

1) ծածկող գոտիների ցանկն՝ անվանումները, հապավումները (դասիչները) և գծագրում կիրառված պայմանական նշանը, սույն Կարգին համապատասխան,

2) ծածկող գոտու անվանումը, գոտիով պայմանավորված սահմանափակումներն այն գործառնական գոտիների համար, որոնց հետ դրանք համադրվում են, սահմանափակումների հիմնավորումները (հղումներ իրավական ակտերի համապատասխան դրույթներին, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին և այլն):

31. «Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ քաղաքաշինական գործունեության իրականացման, հողօգտագործման և կառուցապատման կանոնները, շենքերին և շինություններին ներկայացվող ճարտարապետական պահանջները» բաժնում սահմանվում են կանոններ՝ տեղական պայմաններից ելնելով, որոնք պարտադիր են բոլոր գոտիների համար: Դրանք ներկայացվում են առանձին հոդվածներով և սխեմաներով: Բաժինը մշակվում է սույն հավելվածի Ձև N 1-ին համապատասխան:

32. «Գոտևորմանը չհամապատասխանող կառուցապատման կարգավորմանն ուղղված միջոցառումները» բաժնում ներկայացվում են.

1) գոտևորման ընդունված սկզբունքներին չհամապատասխանող շենքերի և շինությունների աստիճանական վերափոխման միջոցառումների իրականացման մեխանիզմները,

2) ընդլայնման, վերանորոգման, վերակառուցման պայմանները:

33. «Հուշարձանների պահպանմանը, վերականգնմանը, վերակառուցմանն ուղղված միջոցառումները» բաժնում նշվում են.

1) այն հուշարձանները, որոնց պահպանման համար անհրաժեշտ է իրականացնել անհետաձգելի միջոցառումներ,

2) հուշարձանների զբաղեցրած տարածքի և պահպանության գոտիների սանիտարական մաքրման, միջավայրը խաթարող կրպակների, տաղավարների և այլ նորակառույց շինություններից ազատելու, տարածքները բարեկարգելու վերաբերյալ առաջարկություններ,

3) համայնքի ղեկավարի կողմից իրականացվելիք միջոցառումների համալիրը, ուղղված հուշարձանների փաստագրմանը (չափագրություններ, լուսանկարագրական աշխատանքներ, առկա վիճակի նկարագրություններ և այլն),

4) դեպի հուշարձաններ տանող ճանապարհների բարեկարգման, զբոսաշրջային քարտեզների կազմման առաջարկություններ:

34. «Պահպանության, անվտանգության, սպասարկման, սանիտարական և այլ գոտիներում իրականացվելիք միջոցառումները» բաժնում նշվում են.

1) առաջարկություններ կանաչապատման, ծառապատման, ծառահատման վերաբերյալ՝ պայմանավորված տվյալ գոտուն ներկայացվող պահանջներով,

2) առաջարկություններ տեղանքում գոտիների սահմանների տեղանշման, նախագուշացվող/տեղեկատվական ցուցանակների և այլ միջոցառումների վերաբերյալ:

ԶԵՎ 1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ \_\_\_\_\_ ՄԱՐԶԻ \_\_\_\_\_ ՀԱՄԱՅՆԵԻ  
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱԴՊԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ**

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության ----- մարզի ---  
----- համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման  
առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և  
պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Որպես կանոն համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:

2. Համայնքի ավագանու որոշմամբ քաղաքաշինական կանոնադրությունը կարող է մշակվել նաև միևնույն ժամանակահատվածի և (կամ) գոտևորման նախագծի մշակումը՝ որպես առանձին փաստաթուղթ: Այս դեպքում կանոնադրությունը կցվում է նախագծային առաջադրանքին և

պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

3. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

**2. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԶԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆՂՈՒՅԹՆԵՐԸ  
(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)**

4. «Համայնքի (բնակավայրի) քաղաքաշինական ավանդույթները» բաժնում նշվում է համայնքի տարածքում գտնվող կարևոր շենքերի և շինությունների ճարտարապետական ոճի, ճակատների ձևավորման առանձնահատկությունների, օգտագործման շինակյութի և կառուցման եղանակի նկարագրությունը՝ հիմնավորված համապատասխան լուսանկարներով, գծագրերով (եթե առկա են):

**3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ**

5. «Համայնքում առկա պատմամշակութային հուշարձանները» բաժնում նշվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով հիմնավորված՝ համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների, դրանց ներկա վիճակի նկարագիրը, վերականգնման ու պահպանման հետ կապված խնդիրները:

**4. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

6. «Պահպանման ենթակա շենքեր, շինություններ» բաժնում նշվում են համապատասխան լուսանկարներով, հնարավոր գծագրերով հիմնավորված՝ համայնքի տարածքում գտնվող կարևոր նշանակություն ունեցող շենքերի և շինությունների, նրանց ներկա վիճակի նկարագրությունը, դրանց հետ առնչվող պատմությունները (եթե առկա են), վերականգնման և պահպանման հետ կապված խնդիրները:

**5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՄԱՂՂ ՃԱՐՏԱՐԱԴԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ**

7. «Համայնքի տարածքում խրախուսվող ճարտարապետական ոճը և շինարարական տեխնոլոգիաները» բաժնում թվարկվում են այն ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները (եթե դա որոշիչ առանձնահատկություն է համարվել), շինարարական կյութերը և կառուցման եղանակը, որոնք պահպանվելու են համայնքի տարածքում և խրախուսվելու են նոր շենքերի կառուցման ժամանակ: Ներկայացվում են հանձնարարելի առաջարկություններ համայնքում գործող ձեռնարկատերերի և արհեստավորների համար՝ արտադրանքի տեսակի, կյութի, գույնի և այլ չափորոշիչների վերաբերյալ:

**6. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

8. «Համայնքի տարածքում կառուցապատման կանոնները» բաժինը մշակվում է գրաֆիկական տեսքով՝ յուրաքանչյուր գծագիրը կամ սխեման ուղեկցող տեքստային բացատրական մասով:

9. Կառուցապատման սխեմաները մշակվում են բնակավայրի հատակագծային կառուցվածքի կարևոր հատվածների՝ խաչմերուկների, հրապարակների, հասարակական կենտրոնների, մայրուղային փողոցներիև հարող թաղամասերի համար: Համայնքի գոտևորման նախագծի հիմքի վրա կետագիծ սահմանագծերով նշվում են կառուցապատման սխեմաներով ներկայացված հատվածները, համապատասխան համարակալմամբ: Յուրաքանչյուր առանձին հատվածի կառուցապատման սխեման ներկայացվում է առանձին բաժնով, որի առաջին էջի վերևի աջ անկյունում նշվում է ընդհանուր գծագրում նշված տվյալ հատվածի համարը: Կառուցապատման սխեմաները մշակվում և փաթեթում ներառվում են առնվազն 1:500 մասշտաբով, սև սպիտակ գծագրական տեխնիկայով:

10. Կառուցապատման սխեմաներում նշվում են՝

1) հատվածի պայմանական սահմանագիծը, փողոցները, մայթերը, կարմիր գծերը, կառուցապատման գծերը (եթե վերջիններս տարբերվում է կարմիր գծերից), ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների սահմանները,

2) գոյություն ունեցող շենքերի կառուցապատման ուրվագծերը, նախատեսվող շենքերի համար կառուցապատման գոտին, կառուցապատման գոտու տարբերակումը ըստ թույլատրելի բարձրությունների (եթե անհրաժեշտ է), հիմնական և օժանդակ շենքերի և շինությունների տեղադրման նկատմամբ պահանջները, գոյություն ունեցող ծառերը, փոքր ճարտարապետական ձևերը և այլ քաղաքաշինական տարրեր,

3) ավտոկայանատեղերի կազմակերպման տարբերակները, թաղամաս մտնող ավտոմոբիլային և հետիոտն ճանապարհների և անցումների լուծումները, հեծանվառուղիների կազմակերպման կանոնները,

4) քանդման կամ ապամոնտաժման ենթակա օբյեկտները (առկայության դեպքում), բակային տարածքների հատակազմման տարբերակները՝ նշելով մանկական խաղահրապարակները, մարզադաշտերը տնտեսական հարթակները և այլ տարրեր,

5) շենքերի և շինությունների արտաքին աստիճանների, մուտքերի, ջրամուտքերի, կազմակերպման կանոնները,

6) պարիսպների և ցանկապատերի առավելագույն բարձրության սահմանափակումները, տեսքին և նյութին ներկայացվող պահանջները, տեղադրման կանոնները,

7) շենքերի ճակատներին, բացվածքներին, տանիքներին, տանիքներից ջրահեռացման համակարգին ներկայացվող պահանջներ, գովազդային վահանակների և էկրանների տեղադրմանը ներկայացվող պահանջները և սահմանափակումները,

8) բնակչության բոլոր խմբերի համար մատչելիության ապահովման պայմանները և առաջարկվող լուծումները,

9) ինժեներական ենթակառուցվածքներով ապահովվածության, գոյություն ունեցող ծառերի, հողի բերրի շերտի բնակվող կենդանիների պահպանման վերաբերյալ պահանջներ,

10) կիրառելի ծառատեսակները (ըստ անհրաժեշտության), կանաչապատման կանոնները:

**ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐ**

Գործառնական գոտու անվանումը	Թույլատրելի օգտագործման ձևերը
<b>ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐ</b>	
<b>Գյուղատնտեսական գոտի</b>	
<b>Վարելահողեր Բազմամյա տնկարկներ</b>	Հիմնական օգտագործման ձևեր՝ Գյուղատնտեսական գործունեություն
(Խաղողի այգի, Պտղատու այգի) <b>Խոտհարքներ Արոտավայրեր</b>	Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ՀՀ բոլոր համայնքներում ● կենցաղային, տնտեսական նշանակության շենքեր և շինություններ՝ մինչև 30 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով: ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի N498 որոշման 2-րդ կետի ա ենթակետում նշված համայնքներում ● մինչև 150 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով բնակելի և մինչև 300 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր ու շինություններ, ընդ որում, միայն այն հողամասերի վրա, որոնց մակերեսը առնվազն մեկ հեկտար է:
<b>Այլ հողատեսքեր</b>	Չի սահմանվում
<b>ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ</b>	
<b>Բնակելի կառուցապատման գոտի</b>	
Սակավահարկ բնակելի կառուցապատման գոտի (տնամերձերով)	Հիմնական օգտագործման ձևեր՝ առանձնատներ, բլոկացված բնակելի տներ,
Սակավահարկ բնակելի կառուցապատման գոտի (առանց տնամերձերի)	քրթեջներ, B&B համակարգում ընդգրկված բնակելի տներ Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ մինչև 150 մ² ընդհանուր մակերեսով մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների, մինչև 50 նստելատեղով հասարակական սննդի օբյեկտներ, բուժական կաբինետներ, բուժական կենտրոններ, մինչև 200 մ² ընդհանուր մակերեսով մարզական պարապմունքների տարածքներ, գրադարաններ, տուն-թանգարաններ, ցուցասրահներ, մինչև 30 տեղ ունեցող հյուրանոցներ և հյուրատներ, վարչական, ֆինանսական հիմնարկությունների և սպասարկման ծառայությունների գրասենյակներ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ,

	<p>փոքր հզորության անհատական կաթսայատներ մինչև 5Հ4(ժամ), մսուր- մանկապարտեզներ, փոքրածավալ արտադրական ձեռնարկություններ, որոնց գործունեությունը կապված է աղմուկի, փոշու, վնասարար արտանետումների հետ (մինչև 200 քառ.մ ընդհանուր մակերեսով):</p> <p>սեփական օգտագործման և անհատական ձեռնարկատիրության տեսակներ՝ սանիտարական և հակահրդեհային նորմերի պահպանմամբ, տնամերձ հողամասի սահմաններում՝ այգիներ, բանջարանոցներ, ընտանի կենդանիների համար շինություններ, անհատական բաղնիքներ, սաունաներ, ջերմոցներ, տնկարաններ, տնտեսական շինություններ, ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելին քան 2 մեքենայի, բյուրացված տների դեպքում՝ ոչ ավելին քան 1 մեքենայի համար):</p>
<p>Ամառանոցային (այգեգործական) կառուցապատման գոտի</p>	<p>Քրոմակալ օգտագործման ձևեր՝ առանձնատներ, ամառանոցներ, քոթեջներ, <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝</i> մինչև 150 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների, մինչև 30 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ, սպասարկման ծառայությունների գրասենյակներ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, անհատական կաթսայատներ: Սեփական հողամասի սահմաններում՝ այգիներ, բանջարանոցներ, անհատական բաղնիքներ, սաունաներ, ջերմոցներ, տնկարաններ, տնտեսական շինություններ, ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելին քան 2 մեքենայի,</p>
<p>Միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտի</p>	<p><i>Հիմնական օգտագործման ձևեր՝</i> Բազմաբնակարան բնակելի շենքեր</p> <p><i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝</i> Նախադպրոցական հաստատություններ, Մանրածախ առևտրի կետեր, խանութներ, Սրճարաններ, ռեստորաններ, Գրասենյակային տարածքներ, Առամաքուժական կենտրոններ, Ավտոտնակներ, ավտոկայանատեղեր (այդ թվում՝ ստորգետնյա կամ բազմահարկ), Կանաչ տարածքներ, պուրակներ, Մանկական խաղահրապարակներ, Սպորտային հարթակներ հեծանիվների կայանման հարթակներ</p>
<p><b>Հասարակական կառուցապատման գոտի</b></p>	
<p>Համայնքային նշանակության հասարակական կառուցապատման գոտի</p>	<p><i>Հիմնական օգտագործման ձևեր՝</i></p>
<p>Վարչական օբյեկտների գոտի Մշակութային և ժամանցային օբյեկտների գոտի</p>	<p>պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, վարչական հիմնարկների, հասարակական կազմակերպությունների շենքեր դեսպանատներ, հյուպատոսարաններ,</p>

	<p>միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններ, ոստիկանության ստորաբաժանումներ, քրեակատարողական հիմնարկներ, փոստային բաժանմունքներ, տրանսպորտի բոլոր տիպի կայաններ (ավտոկայաններ, օդանավակայաններ, երկաթուղային կայարաններ և այլն), կապի բաժանմունքներ, հեռուստաընկերություններ և ռադիոընկերություններ, ավտոմատ հեռախոսակայաններ, բանկային և ֆինանսական համակարգի օբյեկտներ հրշեջ կայաններ, արխիվներ, տարբեր տիպի գրասենյակներ մշակույթի տներ, թատրոններ, կինոթատրոններ, թանգարաններ, ցուցասրահներ,</p>
<p>Գիտական, կրթական, ուսումնական գոտի Առողջապահության և սոցիալական ապահովության հաստատությունների գոտի</p>	<p>Կրթական, համազգեստի կենտրոններ, համերգային և մարզահամերգային համալիրներ, կրկեսներ, գրադարաններ, արվեստանոցներ, կրոնական, պաշտամունքային շենքեր և շինություններ նախադպրոցական հաստատություններ (մուր և մանկապարտեզ), հանրակրթական դպրոցներ, նախնական և միջին մասնագիտական ուսումնարաններ և քոլեջներ, ԲՈՒՀ-եր, համալսարաններ, այլ կրթական և ուսումնական օբյեկտներ, գիտահետազոտական ինստիտուտներ և այլ գիտական հաստատություններ, հանրային և մասնագիտացված գրադարաններ</p> <ul style="list-style-type: none"> <li>● հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, ամբուլատորիաներ, հոսպիտալներ, շտապ բժշկական օգնության կայաններ, ծննդատներ, կաթնային խոհանոցներ, դեղատներ, հակահամաճարակային կայաններ,</li> </ul>
<p>Սպորտային օբյեկտների գոտի</p>	<p>առողջապահական գործակալություններ, վերականգնողական և դիագնոստիկ կենտրոններ, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ, պրոֆիլակտորիաներ</p> <ul style="list-style-type: none"> <li>● մարմնակրթական և սպորտային կենտրոններ, մարզադաշտեր, սպորտային կենտրոններ, լողավազաններ, սպորտ դպրոցներ, ձիարշավարաններ, սպորտային ակումբներ, թենիսի կորտեր, ավտոդրոմներ, հրաձգարաններ, սպորտային դահլիճներ,</li> </ul> <p><i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր`</i> տրանսպորտի ժամանակավոր և մշտական պահպանման համար նախատեսված շինություններ (վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղեր, ավտոտնակներ), քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ (ներկառուցված և առանձին օբյեկտների տեսքով), մինչև 50 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ` ռեստորաններ, սրճարաններ, բարեր, պանդոկներ, ճաշարաններ, մանրածախ առևտրի կետեր, խանութներ, դեղատներ, կրպակներ:</p>
<p>Բնակչության սոցիալական սպասարկման և առևտրի գոտի</p>	<p><i>Հիմնական օգտագործման ձևեր`</i> հյուրանոցներ, հյուրատներ, զբոսաշրջային բազաներ, մոթելներ, քեմփինգներ, հյուրանոցատիպ քոթեջային համալիրներ,</p>

	<p>հասարակական սևնդի օբյեկտներ՝ ռեստորաններ, բարեր, ճաշարաններ, սրճարաններ, հարսանյաց տներ, սգո սրահներ, գիշերային ակումբներ, ատրակցիոններ և ավտոմատ խաղերի դահլիճներ, խաղատներ, առևտրի կենտրոններ, խանութներ, մթերային և արտադրական ապրանքների շուկաներ, տոնավաճառներ, կենցաղ-սպասարկման առաջնային ծառայություններ՝ լուսանկարչատներ, քիմիական մաքրման կետեր, կոշիկի և կարի անհատական պատվերների սրահներ, վարսավիրանոցներ, լվացքատներ, երկրորդական հումքի ընդունման կետեր, ներկատներ հանրային բաղնիքներ, սաունաներ, սանհանգույցներ, <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝</i> տրանսպորտի ժամանակավոր և մշտական պահպանման համար նախատեսված շինություններ (վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղեր, ավտոտնակներ) հեծանիվների կայանման հարթակներ <i>Հիմնական օգտագործման ձևեր՝</i> բենզալցակայաններ, գազալիցքավորման կայաններ, ավտոտեխասպասարկման, վերանորոգման և ավտովազման կայաններ, ավտոկայանատեղեր <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝</i> գրասենյակներ, սպասասրահներ, մանրածախ առևտրի կետեր, սանհանգույցներ</p>
<p>Վառելիքի և տրանսպորտային միջոցների սպասարկման օբյեկտների գոտի</p>	<p><i>Հիմնական օգտագործման ձևեր՝</i> բենզալցակայաններ, գազալիցքավորման կայաններ, ավտոտեխասպասարկման, վերանորոգման և ավտովազման կայաններ, ավտոկայանատեղեր <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝</i> գրասենյակներ, սպասասրահներ, մանրածախ առևտրի կետեր, սանհանգույցներ</p>
<p><b>Խառը կառուցապատման գոտի</b></p>	
<p>Խառը կառուցապատման գոտի (բնակելի, հասարակական, ընդհանուր օգտագործման)</p>	<p><i>Հիմնական օգտագործման ձևեր՝</i> Բնակելի տներ, Գրասենյակային շենքեր, սոցիալական սպասարկման և առևտրի օբյեկտներ, բազմաֆունկցիոնալ շենքեր՝ բնակելի, հասարակական նշանակության մակերեսներով, այդ թվում՝ մասնավոր ուսումնական և նախադպրոցական հաստատությունների տարածքներով, կիրակնօրյա դպրոցներ, բուժական կաբինետներ, վարչական, ֆինանսական և այլ քաղաքային նշանակության ծառայությունների շենքեր և գրասենյակներ, կենցաղ-սպասարկման, spa- ծառայությունների օբյեկտներ, ակումբներ և հասարակական հավաքատեղիներ, գիշերային ակումբներ, մշակութային օբյեկտներ (թատրոններ, կինոթատրոններ, գրադարաններ, ցուցասրահներ և այլ), առևտրի մեծ և փոքր օբյեկտներ, հանրային սևնդի օբյեկտներ, զբոսայգիներ, ջրային մակերեսներ, պուրակներ, հուշահամալիրներ <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝</i> ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, ավտոկանգառներ (այդ թվում՝ ստորգետնյա կամ բազմահարկ), հեծանիվների կայանման հարթակներ փոքր ճարտարապետական ձևեր, փակ լողավազաններ, տաղավարներ,</p>

	կրպակներ:
<b>Ընդհանուր օգտագործման գոտի</b>	
Փողոցներ, հրապարակներ, հանրային նշանակության այլ բաց տարածքներ	Հիմնական օգտագործման ձևեր՝ Ճանապարհային եզրային կանաչապատում, արտաքին լուսավորություն, գովազդ, փոքր ճարտարապետական ձևեր, հրապարակներում՝ շատրվաններ, ջրավազաններ, ծաղկանոցներ և բարեկարգման այլ տարրեր: <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝</i> ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքի ստորգետնյա գծեր, Ստորգետնյա ավտոկայանատեղեր
Չբոսայգիներ, պուրակներ, այլ կանաչ տարածքներ	Հիմնական օգտագործման ձևեր՝ այգեպուրակային կանաչ տարածքներ, վերջիններիս բնորոշ խաղաձևերի սրահներ, ջրավազաններ, խաղահրապարակներ, բացօթյա սպորտի և բեմահարթակներ, բացօթյա սրճարաններ, հրաձգարաններ, տաղավարներ, գրուցարաններ, ճարտարապետական փոքր ձևեր: <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝</i> տրանսպորտի միջոցների կայանատեղեր, կրպակներ, սանհանգույցներ.
<b>Այլ հողեր</b>	
Բնակավայրի ռեզերվային և անօգտագործելի հողեր	Չի սահմանվում
<b>ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ</b>	
<b>Արդյունաբերական օբյեկտների գոտի</b>	
Ծանր արդյունաբերության օբյեկտների գոտի Թեթև արդյունաբերության օբյեկտների գոտի	Հիմնական օգտագործման ձևեր՝ արդյունաբերական համալիրներ, գործարաններ, ֆաբրիկաներ, կոմբինատներ, արտադրական ձեռնարկություններ, թափոնների վերամշակման և վերջնական տեղադրման կառույցներ արհեստագործական արտադրամասեր և արհեստանոցներ, հրատարակչություններ, տպարաններով, պահեստներ, գիտաարտադրական կազմակերպություններ <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝</i> հանրակացարանային տիպի բնակելի շենքեր, մինչև 150 քմ ընդհանուր մակերեսով, մանրածախ առևտրի կետեր, տրանսպորտի միջոցների կայանատեղեր, կրպակներ, հանրային սննդի կետեր
<b>Գյուղատնտեսական արտադրության օբյեկտների գոտի</b>	
Անասնապահական օբյեկտներ	Հիմնական օգտագործման ձևեր՝ անասնապահական ֆերմաներ և համալիրներ, թռչնաբուծարաններ, ձկնաբուծական ֆերմաներ
Սպանդանոցներ	անասնագոմեր, սպանդանոցներ
Գյուղատնտեսական մթերքի վերամշակման գործարաններ, արտադրամասեր	ջերմոցներ, տնկարկային տնտեսություններ, սառնարանային տնտեսություններ, դեզանոցներ, չորանոցներ, սիլոսահորեր, պահեստներ,
Ջերմոցներ	
Ձկնաբուծարաններ	

	անասնաբուժական կայաններ, արհեստական սերմնավորման կայաններ, գյուղատնտեսական մեքենատրակտորային պարկեր, գյուղատնտեսական մթերքների մթերման կետեր <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր` վարչական մասնաշենքեր, անձնակազմի համար կենցաղային սենքեր, անասնաբուժական լաբորատորիաներ, պահեստներ, ցանկապատներ, փարախներ, անձրևապաշտպանիչ ծածկեր, տնտեսական այլ շինություններ:</i>
<b>Պահեստարանների գոտի</b>	
<b>Ընդերքօգտագործման գոտի</b>	<i>Հիմնական օգտագործման ձևեր` ընդերք օգտագործման տարածքներ, լեռնահանքային արտադրություններ, հանքարդյունաբերական կազմակերպություններ, հումքի վերամշակման արտադրամասեր, ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներ արտադրական այլ շենքեր և շինություններ պահեստային տարածքներ <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր` վարչական մասնաշենքեր, անձնակազմի համար կենցաղային սենքեր, ավտոտրանսպորտի, շինարարական և արդյունահանման տեխնիկայի և մեխանիզմների համար նախատեսված հարթակներ, ծածկեր, ավտոտնակներ, տնտեսական այլ շինություններ հանրակացարանային տիպի բնակելի շենքեր, մինչև 150 քմ ընդհանուր մակերեսով, պահակակետեր, անցակետեր:</i></i>
<b>ԷԼԵԿԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՍՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ</b>	
<b>Էներգետիկայի օբյեկտների գոտի</b>	
Էլեկտրաէներգիայի մատակարարման օբյեկտների գոտի (*)	<i>Հիմնական օգտագործման ձևեր` Էլեկտրակայաններ` ատոմային, ջերմային, հիդրո-էլեկտրակայանների, փոքր ՀԷԿ-երի շենքեր տրանսֆորմատորային ենթակայաններ արևային ֆոտովոլտային կայաններ <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր` վարչական շենքեր, ավտոկայանատեղեր, պահեստային տարածքներ, պահակակետեր և անցակետեր, մանրածախ առևտրի կետեր, խանութներ, հասարակական սննդի օբյեկտներ,</i></i>
Գազամատակարարման օբյեկտների գոտի	<i>Հիմնական օգտագործման ձևեր` ավտոմատ գազաբաշխիչ կայաններ (ԱԳԿ), գազակարգավորիչ պահարանային կետեր (ԳՊԿ), գազի ստորգետնյա պահեստարաններ</i>
<b>Կապի օբյեկտների գոտի</b>	<i>Հիմնական օգտագործման ձևեր` հեռախոսային կապի բաշխիչ կետեր (պահարանային), կապի ավտոմատ հեռախոսային կայաններ, բջջային կապի աշտարակներ</i>
<i>(*) Ինժեներական ենթակառուցվածքի գծային օբյեկտների` բարձրավոլտ էլեկտրահաղորդման օղային և մալուխային գծերի, գազատար խողովակաշարերի, կապի օղային և ստորգետնյա գծերի համար համապատասխան գոտի չի առանձնացվում, քանի որ դրանք սերվիտուտի իրավունքով կարող են անցկացվել այլ գործառնական գոտիների տարածքներով (գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդհանուր օգտագործման, ռեզերվային, պահուստային և այլ` պահպանելով</i>	

<i>Նորմատիվային հեռավորությունները բնակելի տներից, կրթական օբյեկտներից, սպասուության և մշակույթի հուշարձաններից և այլն):</i>	
<b>Տրանսպորտի օբյեկտների գոտի</b>	<i>Հիմնական օգտագործման ձևեր` պետական ավտոմայրուղիներ, միջհամայնքային ճանապարհներ, ճանապարհը սպասարկող օբյեկտներ, ավտոկայանատեղեր, կամուրջներ, թունելներ, երկաթգիծ և երկաթգծի կայարաններ քաղաքացիական ավիացիայի օբյեկտներ` օդանավակայաններ, անգարներ, այլ ենթակառուցվածք, <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր`</i> ազատ տնտեսական գոտիներ, օդանավակայաններին, կայարաններին կից հյուրանոցներ, Գրասենյակային և պահեստային տարածքներ</i>
<b>Կոմունալ տնտեսության օբյեկտների գոտի</b>	
Ջրամատակարարման, ջրահեռացման ենթակառուցվածքների օբյեկտներ (*)	<i>Հիմնական օգտագործման ձևեր` օրվա կարգավորիչ ջրամբարներ, ջրամատակարարման բաշխիչ հորեր, ջրամատակարարման համակարգի հանգույցներ, պոմպակայաններ կոյուղու ցանցային հորեր, մաքրման կայաններ, ջերմամատակարարման համակարգեր, կաթսայատներ</i>
<i>(*) ջրագծերի և կոյուղագծերի համար համապատասխան գոտի չի առանձնացվում, քանի որ դրանք սերվիտուտի իրավունքով կարող են անցկացվել ցանկացած այլ գոտու տարածքով պահպանելով նորմատիվային պահանջները:</i>	
Աղբավայրերի գոտի	<i>Հիմնական օգտագործման ձևեր` աղբավայրեր, աղբի վերամշակման գործարաններ, աղբի տեսակավորման հարթակներ, <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր`</i> ավտոկայանատեղեր պահեստային տարածքներ</i>
Համայնքային և մասնավոր գերեզմանատների գոտի	<i>Հիմնական օգտագործման ձևեր` գերեզմանոցներ, դիակիզարաններ, Փոքր ճարտարապետական ձևեր, կոթողներ. <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր`</i> պահակատներ, գրասենյակներ քարի և մետաղի մշակման արհեստանոցներ,</i>
<b>ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ</b>	
<b>Բնապահպանական գոտի</b>	<i>Գոտին ներառում է ազգային պարկերի, բուսաբանական, կենդանաբանական և ծառաբանական այգիների, պետական արգելավայրերի և արգելոցների, բնության հուշարձանների տարածքներ, (բացառությամբ` որսորդական արգելոցների) հողերը (*): <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր` Մուտքի և ելքի հատվածում.</i> պահակատներ, մինչև 36 քմ կառուցապատման մակերեսով տարածքը սպասարկող անձնակազմի գրասենյակային տարածքներ, ընդամենը` մինչև 36 քմ կառուցապատման մակերեսով, մուտքի տոմսերի և արագ սննդի կրպակներ, հանրային սանհանգույցներ, ընդամենը` մինչև 36 քմ կառուցապատման մակերեսով <i>Պահպանվող տարածքում`</i> արահետներին հարող տարածքներում</i>

	<p>տեղադրվող՝ անձրևից պաշտպանող ծածկեր, իրականացված թեթև կոնստրուկցիաներով, մինչև 9 քմ, առավելագույնը 1 հատ/5-6 կմ վրա</p>
<p><i>(*) Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները սահմանվում են «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխի պահանջներին համապատասխան</i></p>	
<p><b>Առողջարարական նպատակներով նախատեսված գոտի</b></p>	<p><i>Հիմնական օգտագործման ձևեր՝</i>      հյուրանոցներ, հանգստյան տներ, հանգստի բազաներ</p>
<p><b>Հանգստի համար նախատեսված գոտի</b></p>	<p>պանսիոնատներ, առողջարանային օբյեկտներ, առողջարանային դպրոցական ճամբարներ, երիտասարդական ճամբարներ քրթեջային, քեմպինգային տարածքներ, անտառպուրակային տարածքներ, սահմանափակ օգտագործման՝ սննդի ծառայություններ, սպորտային և խաղահրապարակներ, ժամանցային և ռեկրեացիոն բնույթի խաղատեսակների ակումբներ:</p>
	<p><i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝</i>      տրանսպորտի միջոցների կայանատեղեր, վարսավիրանոցներ, գեղեցկության սրահներ, հասարակական բաղնիքներ, սաունաներ, լվացքատներ, մանրածախ առևտրի կետեր, խանութներ</p>
<p><b>Պատմական և մշակութային հողերի գոտի</b> <i>(*)</i></p>	<p><i>Գոտին ներառում է</i>      Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված օբյեկտներ, հուշազբոսայգիների, հուշահամալիրների, հնագիտական ու ճարտարապետական հուշարձանների, այդ թվում՝ պաշտամունքային կառույցների, պատմական և մշակութային արգելոցների ու արգելավայրերի, պատմության, մշակույթի ու հնագիտական օբյեկտների, պետական գերեզմանատների, դամբարանադաշտերի և պատմական ու մշակութային այլ արժեքներով զբաղեցված հողամասեր,</p>
	<p>Նորահայտ հուշարձանի կարգավիճակ ստացած օբյեկտներ, հուշարձանների հաստատված պահպանական գոտիների ռեժիմներով սահմանված ձևեր:  <i>Գոտու հողերի շուրջ պահպանական գոտիների համակարգում հնարավոր ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝</i>      հուշարձանները սպասարկող աշխատակազմի կացարաններ, թանգարաններ, ճարտարապետական փոքր ձևեր, ավտոտրանսպորտի կայանատեղեր, զբոսաշրջիկներին սպասարկող առաջին անհրաժեշտության օբյեկտներ, հուշանվերների և արագ սննդի կրպակներ:</p>
<p><b>Պետական գերեզմանատների գոտի</b> <i>(*)</i></p>	<p><i>Հիմնական օգտագործման ձևեր՝</i>      Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված գերեզմանատներ, պանթեոններ, Փոքր ճարտարապետական ձևեր, կոթողներ.  <i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝</i>      աշխատակազմի համար նախատեսված շենք/շինություններ արհեստանոցներ, ոչ հիմնական շինություններ, ծածկեր</p>

(\*)*Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանական գոտիներում տարածքի օգտագործման պայմանակարգերը (ռեժիմները) սահմանվում են «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխի և ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված կարգի 33-րդ և 35-րդ կետերի պահանջներին համապատասխան*

<b>ՀԱՏՈՒԿ</b>	
<b>ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ</b>	
<b>Հատուկ նշանակության գոտի</b>	պաշտպանական, սահմանային, ռազմական նշանակության հողերը և օրենքով պաշտպանվող շենքերի ու շինությունների օգտագործման ու սպասարկման համար տրամադրված հողամասերը:
<b>ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐ (*)</b>	
<b>Անտառներ</b>	<i>Գոտին ներառում է</i>
<b>Վարելահողեր</b>	ա) պաշտպանական նշանակության անտառներ
<b>Խոտհարքներ</b>	բ) հատուկ նշանակության անտառներ
<b>Արոտներ</b>	գ) արտադրական նշանակության անտառներ
<b>Թփուտներ</b>	<i>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝</i>
<b>Այլ հողեր</b>	Բացառապես անտառային տնտեսության կարիքների համար նախատեսվող շենքեր, շինություններ. <i>Մուտքի և ելքի հատվածում.</i> պահակատներ, մինչև 36 քմ կառուցապատման մակերեսով տարածքը սպասարկող անձնակազմի գրասենյակային տարածքներ, ընդամենը՝ մինչև 36 քմ կառուցապատման մակերեսով, մուտքի տոմսերի և արագ սննդի կրպակներ, հանրային սանհանգույցներ, ընդամենը՝ մինչև 36 քմ կառուցապատման մակերեսով <i>Անտառային հատվածում՝</i> արահետներին հարող տարածքներում տեղադրվող՝ անձրևից պաշտպանող ծածկեր, իրականացված թեթև կոնստրուկցիաներով, մինչև 9 քմ, առավելագույնը 1 հատ/5-6 կմ վրա
<i>(*) Անտառային գոտիների պահպանության ռեժիմները սահմանվում են ՀՀ «Անտառային օրենսգրքի» պահանջներին համապատասխան</i>	
<b>ՋՐԱՅԻՆ (*)</b>	
<b>Ջրանցքներ</b>	գետեր, լճեր, բնական և արհեստական ջրամբարներ, ջրանցքներ,
<b>Գետեր, գետակներ</b>	ջրային օբյեկտների վրա կառուցվող
<b>Լճեր</b>	հիդրոտեխնիկական,
<b>Հիդրոտեխնիկական կառույցներ</b>	ջրատնտեսային և այլ օբյեկտներ:
<b>Ջրամբարներ</b>	Ջրային հողերը կարող են օգտագործվել բնակչության խմելու ջրի, կենցաղային, առողջարարական և այլ պահանջների, ինչպես նաև ջրատնտեսային, գյուղատնտեսական, բնապահպան, արդյունաբերական, ձկնատնտեսային, էներգետիկ և այլ պետական ու համայնքային կարիքների բավարարումն ապահովող օբյեկտների շինարարության և շահագործման համար:
<i>(*) Ջրային գոտիների պահպանության ռեժիմները սահմանվում են ՀՀ «Ջրային օրենսգրքի» պահանջներին համապատասխան</i>	
<b>ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ</b>	
Պահուստային գոտի	համայնքներին, քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության, օգտագործման իրավունքով չտրամադրված պետական հողերը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով կոնսերվացիայի արդյունքում տնտեսական շրջանառությունից հանված հողամասերը: 2. Պահուստային հողերի կազմում կարող են ներառվել քաղաքաշինական ու հողաշինարարական փաստաթղթերով

















<b>Նշանը գծագրում</b>		
<b>ԳՀ</b>	<b>ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐ</b>	
<b>ԳՕԳ</b>	<b>Գյուղատնտեսական օգտագործման գոտի</b>	
<b>ԳՕԳ-1</b>	<b>Վարելահողեր</b>	
<b>ԳՕԳ-2</b>	<b>Բազմամյա տնկարկներ</b>	
ԳՕԳ-2/1	Խաղողի այգի	
ԳՕԳ-2/2	Պտղատու այգի	
<b>ԳՕԳ-3</b>	<b>Խոտհարքներ</b>	
<b>ԳՕԳ-4</b>	<b>Արոտավայրեր</b>	
<b>ԳՕԳ-0</b>	<b>Այլ հողատեսքեր</b>	
<b>ԲՆՀ</b>	<b>ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ</b>	
<b>ԲՆԿԳ</b>	<b>Բնակելի կառուցապատման գոտի</b>	
ԲՆԿԳ-1/1	Սակավահարկ բնակելի կառուցապատման գոտի (տնամերձերով) (*)	
ԲՆԿԳ-1/2	Սակավահարկ բնակելի կառուցապատման գոտի (առանց տնամերձերի), բլոկացված տներով կառուցապատում	
ԲՆԿԳ-2	Ամառանոցային կառուցապատման գոտի	
ԲՆԿԳ-3	Միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտի (*)	
ԲՆԿԳ-4	Բազմահարկ բնակելի կառուցապատման գոտի (*)	
<b>ՀԿԳ</b>	<b>Հասարակական կառուցապատման գոտի</b>	
ՀԿԳ-1	Համայնքային նշանակության հասարակական կառուցապատման գոտի	
ՀԿԳ-1/1	Վարչական օբյեկտների գոտի	
ՀԿԳ-1/2	Մշակութային և ժամանցային օբյեկտների գոտի	
ՀԿԳ-1/3	Կրթական գոտի	
ՀԿԳ-1/4	Բուժական հաստատությունների գոտի	
ՀԿԳ-1/5	Սպորտային օբյեկտների գոտի	
ՀԿԳ-2	Բնակչության սոցիալական սպասարկման և առևտրի գոտի	
ՀԿԳ-3	Վառելիքի և տրանսպորտային միջոցների սպասարկման օբյեկտների գոտի	
<b>ԽԿԳ</b>	<b>Խառը կառուցապատման գոտի</b>	
ԽԿԳ-1	Խառը կառուցապատման գոտի (բնակելի, հասարակական)	
ԽԿԳ-2	Խառը կառուցապատման գոտի (բնակելի, հասարակական, ընդհանուր օգտ.)	
<b>ԸՕԳ</b>	<b>Ընդհանուր օգտագործման գոտի</b>	
ԸՕԳ-1	Փողոցներ, հրապարակներ, հանրային նշանակության այլ բաց տարածքներ	
ԸՕԳ-2	Չբոսայգիներ, պուրակներ, այլ կանաչ տարածքներ	
<b>ԲՆՈԳ</b>	<b>Այլ հողեր</b>	
ԲՆՈԳ	Բնակավայրի ռեզերվային (պահուստային) և անօգտագործելի հողեր (այն տարածքները, որոնց համար տվյալ գոտևորման նախագծով որոշակի գործառնական նշանակություն սահմանված չէ)	
(*)	<i>Սակավահարկ` մինչև 4 հարկ Միջին հարկայնության` 4-ից 9-ը հարկայնությամբ Բազմահարկ` 9-ից բարձր հարկայնությամբ</i>	
<b>ԱՀ</b>	<b>ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ</b>	
<b>ԱԳ-1</b>	<b>Արդյունաբերական օբյեկտների գոտի</b>	
ԱԳ-1/1	Ծանր արդյունաբերության օբյեկտների գոտի	
ԱԳ-1/2	Թեթև արդյունաբերության օբյեկտների գոտի	
<b>ԱԳ-2</b>	<b>Գյուղատնտեսական արտադրության օբյեկտների գոտի</b>	
ԱԳ-2/1	Անասնապահական օբյեկտներ	
ԱԳ-2/2	Սպանդանոցներ	
ԱԳ-2/3	Գյուղատնտեսական մթերքի վերամշակման	

	գործարաններ, արտադրամասեր	
ԱԳ-2/4	Ջերմոցներ	
ԱԳ-2/5	Ձկնաբուծարաններ	
<b>ԱԳ-3</b>	<b>Պահեստարանների գոտի</b>	
<b>ԱԳ-4</b>	<b>Ընդերքօգտագործման գոտի</b>	
<b>ԵԼԹՀ</b>	<b>ԷԼԵԹԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՍՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ</b>	
<b>ԵԼԹԳ -1</b>	<b>Էներգետիկայի օբյեկտների գոտի(*)</b>	
ԵԼԹԳ -1/1	Էլեկտրաէներգիայի մատակարարման օբյեկտների գոտի	
ԵԼԹԳ -1/2	Գազամատակարարման օբյեկտների գոտի	
<b>ԵԼԹԳ -2</b>	<b>Կապի օբյեկտների գոտի (*)</b>	
<b>ԵԼԹԳ -3</b>	<b>Տրանսպորտի օբյեկտների գոտի</b>	
<b>ԵԼԹԳ-4</b>	<b>Կոմունալ տնտեսության օբյեկտների գոտի (*)</b>	
ԵԼԹԳ -4/1	Ջրամատակարարման, ջրահեռացման ենթակառուցվածքների օբյեկտներ	
<i>(*) Էներգետիկայի, կապի, կոմունալ տնտեսության օբյեկտների գոտիներ առանձնացվում են կետային օբյեկտների համար, գծային օբյեկտները անցկացվում են այլ գոտիների տարածքներով՝ սերվիտուտի իրավունքով</i>		
ԵԼԹԳ -4/2	Աղբավայրերի գոտի	
ԵԼԹԳ -4/3	Համայնքային և մասնավոր գերեզմանատների գոտի	
<b>ՀՊՏՀ</b>	<b>ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ</b>	
<b>ՀՊՏ-1/բնպ</b>	<b>Բնապահպանական գոտի</b>	
ՀՊՏ-1/1-բնպ	ազգային պարկեր	
ՀՊՏ-1/2-բնպ	բուսաբանական և ծառաբանական այգիներ	
ՀՊՏ-1/3-բնպ	պետական արգելավայրեր և արգելոցներ	
ՀՊՏ-1/4-բնպ	բնության հուշարձաններ	
ՀՊՏ-2/առջ	<b>Առողջարարական նպատակներով նախատեսված գոտի</b>	
ՀՊՏ-3/հնգ	<b>Հանգստի համար նախատեսված գոտի</b>	
ՊՄՀԳ-4/պմհ (N....)*	<b>Պատմական և մշակութային հողերի գոտի</b>	
ՀՊՏ-5/պմգ (N....)*	<b>Պետական գերեզմանատների գոտի</b>	
<b>ՀԼՀ</b>	<b>ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ</b>	
<b>ՀԼԳ</b>	<b>Հատուկ նշանակության գոտի</b>	
<b>ԱՆՏՀ</b>	<b>ԱՆՏԱՌԱՅԻՆ</b>	
<b>ԱՆՏԳ-1/1</b>	<b>Պաշտպանական նշանակության անտառների գոտի</b>	
	<b>Հատուկ նշանակության անտառների գոտի</b>	
	<b>Արտադրական նշանակության անտառների գոտի</b>	
<b>ԱՆՏԳ-2</b>	<b>Վարելահողեր</b>	
<b>ԱՆՏԳ-3</b>	<b>Խոտհարք</b>	
<b>ԱՆՏԳ-4</b>	<b>Արոտ</b>	
<b>ԱՆՏԳ-5</b>	<b>Թփուտ</b>	
<b>ԱՆՏԳ-6</b>	<b>Այլ հողեր</b>	
<b>ԶՀ</b>	<b>ԶՐԱՅԻՆ</b>	
<b>ԶԳ-1</b>	<b>Զրանցքներ</b>	
<b>ԶԳ-2</b>	<b>Գետեր, գետակներ</b>	
<b>ԶԳ-3</b>	<b>Լճեր</b>	
<b>ԶԳ-4</b>	<b>Հիդրոտեխնիկական կառույցներ</b>	
<b>ԶԳ-5</b>	<b>Ջրամբարներ</b>	
<b>ՊՀՍՏՀ</b>	<b>ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ</b>	
<b>ՊՀՍՏԳ</b>	<b>Պահուստային գոտի</b>	

(\*) փակագծերում լրացվում է հուշարձանի պետական ցուցակի համարը

**ՔԱՂԱՔԱԾԻՆԱԿԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՈՒՄՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԾԱԾԿՈՂ ԳՈՏԻՆԵՐ**

Հապավումը	Պայմանական նշանը	Ծածկող գոտու անվանումը	Սահմանափակումների նորմատիվ իրավական	Սահմանափակումների բնույթը
-----------	------------------	------------------------	-------------------------------------	---------------------------

	<b>գծագրում</b>		<b>հիմքերը</b>	
ՔԳՀԿԳ	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>ՔԳՀԿԳ</b> ----- -- Տարածքը՝ <b>ՍԼ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտի		
ՍԳ/գ	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>ՍԳ/գ</b> ----- - Տարածքը՝ <b>ՍԼ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	Գերեզմանոցի սանիտարական գոտի		
ԱԳ/ա	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>ՍԳ/ա</b> ----- - Տարածքը՝ <b>ՍԼ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	Արդյունաբերական օբյեկտի սանիտարական գոտի		
ՍԳ/ջ	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>ՍԳ/ջ</b> ----- - Տարածքը՝ <b>ՍԼ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	Զրամատակարարման աղբյուրների սանիտարական գոտի		
ՍԳ/մ	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>ՍԳ/մ</b> ----- - Տարածքը՝ <b>ՍԼ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	Մաքրման կայանների սանիտարական գոտի		
ԱԼՎՏԳ	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>ԱԼՎՏԳ</b> ---- --- Տարածքը՝ <b>ՍԼ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	Էներգետիկ ենթակառուցվածքի օբյեկտների անվտանգության գոտի		
ԵԳՕՇ	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>ԵԳՕՇ</b> ---- -- Տարածքը՝ <b>ՍԼ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	Երկաթգծի օտարման շերտ		
ԱՎՄՕՇ	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>ԱՎՄՕՇ</b> -- ---- Տարածքը՝ <b>ՍԼ/սպիտակ</b>	Ավտոմայրուղու օտարման շերտ		

	<b>շեղագիծ թափանցիկ լիցք</b>			
ՏՊԳ	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>ՏՊԳ</b> ----- Տարածքը՝ <b>ՍԼ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	Տրանսպորտային ենթակառուցվածքի պահպանական գոտի		
ՊՄՀԳ	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>ՊՄՀԳ</b> ---- - Գոտին՝ <b>ՍԼ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	Պատմության և մշակույթի հուշարձանի գոտի		
<b>ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ</b>				
ՀՊԳ-1 (N....)**	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>ՀՊԳ-1</b> --- -- Տարածքը՝ <b>ՍԼ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	Հուշարձանների պահպանության գոտի		
ԿԿԳ-1 (N....)**	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>ԿԿԳ-1</b> --- -- Տարածքը՝ <b>ՍԼ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	Կառուցապատման կարգավորման գոտի		
ԼՊԳ-1 (N....)**	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>ԼՊԳ-1</b> --- -- Տարածքը՝ <b>ՍԼ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	Լանդշաֆտի պահպանման գոտի		
Սերվ/հ/Էլ	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>Սերվ/հ/Էլ</b> ----- Տարածքը՝ <b>ՍԼ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	սերվիտուտի իրավունքով այլ գոտիների տարածքներով անցնող Էլեկտրաէներգիայի գծային օբյեկտների գոտիներ		
Սերվ/հ/գազ	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>Սերվ/հ/գազ</b> --- -- Տարածքը՝ <b>ՍԼ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	սերվիտուտի իրավունքով այլ գոտիների տարածքներով անցնող գազի գծային օբյեկտների գոտիներ		
Սերվ/կապ	Գոտու սահմանագիծը՝ -----	սերվիտուտի իրավունքով այլ գոտիների		

	<b>Սերվ/հ/գազ ---</b> --- Տարածքը՝ <b>ՍԱ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	տարածքներով անցնող կապի գծային օբյեկտների գոտիներ		
Սերվ/ջուր	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>Սերվ/հ/ջուր ---</b> --- Տարածքը՝ <b>ՍԱ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	սերվիտուտի իրավունքով այլ գոտիների տարածքներով անցնող ջրամատակարարման գծային օբյեկտների գոտիներ		
Սերվ/կոյուղի	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>Սերվ/հ/կոյուղի</b> ----- Տարածքը՝ <b>ՍԱ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	սերվիտուտի իրավունքով այլ գոտիների տարածքներով անցնող կոյուղու գծային օբյեկտների գոտիներ		
Սերվ/մասն	Գոտու սահմանագիծը՝ ----- <b>Սերվ/մասն ----</b> - Տարածքը՝ <b>ՍԱ/սպիտակ շեղագիծ թափանցիկ լիցք</b>	Սերվիտուտի իրավունքով ծանրաբեռնված այլ գոտիներ		

(\*\*) փակագծերում լրացվում է հուշարձանի պետական ցուցակի համարը

**ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ**

Հապավումը և պայմանական նշանը գծագրում	Ընդհանուր մակերեսը, հա	Կառուցապատման տոկոսը, առավելագույնը՝	Անջրանցիկ (սպասարկման) տարածքի մակերեսի տոկոս, այդ թվում կառուցապատման տոկոսը, առավելագույնը՝	Կանաչապատման տոկոս, ջրային մակերեսներ, նվազագույնը	Հարկայնությունը Առավելագույնը	Կառուցապատման խտությունը, առավելագույնը՝	Թույլատրելի օգտագործման հիմնական ձևերի և ոչ հիմնական (ուղեկցող) ձևերի կառուցապատման մակերեսների հարաբերությունը, տոկոսային արտահայտմամբ (հիմնականը՝ նվազագույնը, ոչ հիմնականը՝ առավելագույնը) Հիմնական/ ոչ հիմնական
<b>ԳՀ</b>							
ԳՕԳ							
ԳՕԳ-1		-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-2		-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-2/1		-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-2/2		-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-3		-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-4		-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-0		-	-	փաստացի	-	-	
<b>ԲԼՀ</b>							
<b>ԲԼԿԳ</b>							
ԲԼԿԳ-1/1		20% (+20% տնտեսական շինություններ)	40%+10%	50%	1-2 վերգետնյա հարկ (նկուղային հարկի և ձեղնահարկի հնարավորություն)	0.4	50/50

ԲԼԿԳ-1/2	30%	30%+10%	60%	1-3 վերգետնյա հարկ (Նկուղային հարկի և ձեղնահարկի հնարավորություն)	0.3/0.9	80/20
ԲԼԿԳ-2	20%	20%+20%	60%	1-2 վերգետնյա հարկ (Նկուղային հարկի և ձեղնահարկի հնարավորություն)	0.4	80/20
ԲԼԿԳ-3	40% (վերակառուցման պայմաններում մինչև 60%)	40%+10% (վերակառուցման պայմաններում 60%+10%)	50% (վերակառուցման պայմաններում 30%)	4-5 վերգետնյա հարկ, (Նկուղային հարկի և ձեղնահարկի հնարավորություն)	0.8/1.2 (վերակառուցման պայմաններում 1.6)	75/25
ԲԼԿԳ-3	40% (վերակառուցման պայմաններում մինչև 60%)	40%+10% (վերակառուցման պայմաններում 60%+10%)	50% (վերակառուցման պայմաններում 30%)	6-9 վերգետնյա հարկ, (Նկուղային հարկի)	0.8/1.2 (վերակառուցման պայմաններում 1.6)	75/25
ԲԼԿԳ-4	40% (վերակառուցման պայմաններում մինչև 60%)	40%+10% (վերակառուցման պայմաններում 60%+10%)	50% (վերակառուցման պայմաններում 30%)	9-ից ավելի վերգետնյա հարկ, (Նկուղային 2 հարկի հնարավորություն)	1.2/1.6	75/25
<b>ՀԿԳ</b>						
ՀԿԳ-1						
ՀԿԳ-1/1	80%	80%+20%	10% (կառուցապատման կամ սպասարկման մակերեսների հաշվին		2.4	80/20
ՀԿԳ-1/2	80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-1/3	80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-1/4	80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-1/5	80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-2	100%	30%	-	-	-	80/20
ՀԿԳ-3	100%	30%	-	-	-	80/20
<b>ԽԿԳ</b>						
ԽԿԳ-1	35%	35%+25%	40%			80/20
ԽԿԳ-2	40%	40%+20%	40%		1.2 1.6	80/20
	(վերակառուցման պայմաններում մինչև 60%)	(վերակառուցման պայմաններում 60%+20%)	(վերակառուցման պայմաններում 20%)			
<b>ԸՕԳ</b>						
ԸՕԳ-1	-	-	Չի սահմանվում			
ԸՕԳ-2	7%	7%+23%	70%	1 հարկ	0.07	-
<b>ԲԼՈԳ</b>						
ԲԼՈԳ	-	-	-	-	-	-
<b>ԱՀ</b>						
ԱԳ-1						
ԱԳ-1/1	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-1/2	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2			-			
ԱԳ-2/1	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/2	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/3	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/4	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/5	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-3	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-4	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
<b>ԵՆԹՀ</b>						
ԵՆԹԳ -1						
ԵՆԹԳ -1/1	80% (կետային օբյեկտների համար)	80%+20%	Կանաչապատումը կառուցապատման տոկոսի նվազեցման հաշվին	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ -1/2	80% (կետային օբյեկտների համար)	80%+20%	Կանաչապատումը կառուցապատման տոկոսի նվազեցման հաշվին	ըստ տեխնոլոգիական պահանջների		
			Կանաչապատումը կառուցապատման տոկոսի նվազեցման հաշվին	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ -2	80% (կետային օբյեկտների համար)	80%+20%	Կանաչապատումը կառուցապատման տոկոսի նվազեցման հաշվին	ըստ տեխնոլոգիական պահանջների		

ԵՆԹԳ -3	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	ըստ տեխնոլոգիական պահանջների		
<b>ԵՆԹԳ-4</b>						
ԵՆԹԳ -4/1	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ -4/2	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	ըստ տեխնոլոգիական պահանջների		80/20
ԵՆԹԳ -4/3	70%	70%+20%	10%			80/20
<b>ՀՊՏՀ</b>						
ՀՊՏ-1/բնպ	-	-	փաստացի			
ՀՊՏ-2/առջ	40%	40%+10%	50%	մինչև 4 հարկ		80/20
ՀՊՏ-3/հնգ	40%	40%+10%	50%	մինչև 4 հարկ		80/20
ՀՊՏ-4/պմհ	փաստացի	-	Չի սահմանվում	-	0.05	95/5
<b>ՀԼՀ</b>						
ՀԼԳ	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			համաձայն առաջադրանքի
<b>ՄԼՏՀ</b>						
ՄԼՏԳ-1	-	-	փաստացի			
ՄԼՏԳ-2	-	-	փաստացի			
ՄԼՏԳ-3	-	-	փաստացի			
ՄԼՏԳ-4	-	-	փաստացի			
ՄԼՏԳ-5	-	-	փաստացի			
ՄԼՏԳ-6	-	-	-			
<b>ԶՀ</b>						
ԶԳ-1	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			
ԶԳ-2	-	-	փաստացի			
ԶԳ-3	-	-	փաստացի			
ԶԳ-4	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			
ԶԳ-5	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			
<b>ՊՀՍՍՀ</b>						
ՊՀՍՍԳ	-	-	-			

**(ձևը փոփ. 03.08.23 N 1304-Ն)**  
**(հավելվածը լրաց. 28.04.22 N 597-Ն, փոփ. 03.08.23 N 1304-Ն, 30.05.24 N 800-Ն, 25.12.25 N 1972-Ն)**